



Արարակ Շարքայան



**ԱՐԱՐԱՏԻՉ
ԱՅՆ ԿՈՂՄ**

Ապակողմախոսական
Թուրքիան



ՅՈՒՐՏ

Մ Ի Ջ Ե Ր Կ Ր Ա Կ Ա Ն

ԹՈՒՐԻԱՎ, ՎԱՐՅԱՏԱՐԱԴՐԱՅԻՆ ԲԱԴԱՆՈՒՄ (ՎՊՂ, ըն. քիվ (իզ. ծաղր, 2005 թ.))

1	ԱՄՍԱՅ	14 256	1 650	16	ՔՈՒՐԱՎ	11 087	2 125	31	ՀԱՍՏԱՍ	5 678	1 194	46	ՍՄՐԻՍ	14 213	1 005	61	ՏՐԱՍՔԱՆՆԻ	4 495	975	76	ԿՈՒՐԻ	3 584
2	ԱՐԱՅԻՍ	7 572	624	17	ՉԱԼԿԱԲԵՏ	9 887	465	32	ՆՈՒՐԱՏՍԱ	8 733	614	47	ՍՄԻՐՆԱ	9 097	705	62	ԲՈՒՆԱՇԱՆ	7 406	93	77	ՅՈՒՆԱԿ	403
3	ԱՅՏՅՈՒՆ	14 532	812	18	ՉԱԾԱԾԵՐ	8 411	270	33	ՄԵՐՄԱՆ	15 737	874	48	ՍՏԵՍԻՆԱ	12 716	715	63	ՌՈՒՂԱՆ (ՌՈՒՉԱՅ)	19 091	1 443	78	ՎԱՐՅԱՑՈՒՅ	2 864
4	ԳՐԻԿ	11 375	529	19	ՉՈՒՐԱՆ	12 833	597	34	ԱՏԱԳՈՒՆ	9 170	1 194	49	ՍՆԵՐԻ	8 023	453	64	ՈՒՇԱԲ	5 174	322	79	ՔՐԷՆԱ	1 239
5	ՍՄՐԱԿ	11 375	365	20	ՆԵՐՍԻՅԱՆ	11 716	850	35	ԻՅՄՐԻ	11 811	3 174	50	ՍԴՐՆԱՅԻՑ	5 438	310	65	ՎԱՆԱԴՐ	20 927	877	80	ՕՐԱՍՆԱՆԻ	3 189
6	ԱՄԱՐՍԻ	25 615	4 048	21	ԳՐԻՍԻՄԻՔԻ	15 162	1 363	36	ՎԱՐՄԱՆ	9 594	3 376	51	ՍԵՐՎԱՆ	7 318	348	66	ՅՈՒՐԱՆԱԿՈՒՍ	14 083	683	81	ՌԱՍՏԱՆԻ	1 065
7	ՍԵՐՎԱՆ	20 599	1 720	22	ԼԻՍՆՈՂԵՐ	6 241	403	37	ՎԱՍՏԱՏՈՒՆ	13 473	1 067	52	ՏՐԱՍՔԱՆ	8 894	806	67	ՇՈՒՆԱԿՈՒՍ	3 470	616			
8	ԱՐԱՅԻՍ	7 403	192	23	ԼԻՍՆՈՂԵՐ	9 181	570	38	ՎԱՍՏԱՏՈՒՆ	17 116	1 067	53	ՏՐԱՍՔԱՆ	3 792	366	68	ՍՏՍՈՒՐԱՆ	8 051	396			
9	ԱՐԱՅԻՍ	11 974	937	24	ԿՈՒՆԵՒՆԻՑ	6 056	359	39	ԿՈՒՆԵՒՆԻՑ	6 056	359	54	ՍՏՍՈՒՐԱՆ	9 474	799	69	ՎԱՐՍՈՒՄ	4 043	97			
10	ԱՐԱՅԻՍ	7 922	951	25	ԿՈՒՆԵՒՆԻՑ	11 974	937	40	ԿՈՒՆԵՒՆԻՑ	6 434	353	55	ՍՏՍՈՒՐԱՆ	8 486	796	70	ՎԱՐՍՈՒՄ	8 816	243			
11	ԱՐԱՅԻՍ	14 442	1 076	26	ԿՈՒՆԵՒՆԻՑ	13 804	706	41	ԿՈՒՆԵՒՆԻՑ	3 035	1 208	56	ՍՏՍՈՒՐԱՆ	5 405	276	71	ՎԱՐՍՈՒՄ	4 589	383			
12	ԱՐԱՅԻՍ	8 402	254	27	ԱՐԱՅԻՍ	7 194	1 285	42	ՎՈՒՍՆԱԿ	40 824	3 192	57	ՍՏՍՈՒՐԱՆ	98 199	756	72	ՎԱՐՍՈՒՄ	4 671	457			
13	ԱՐԱՅԻՍ	8 413	389	28	ԱՐԱՅԻՍ	7 151	524	43	ՔՈՒՆԵՒՆԻՑ	12 119	697	58	ՍՏՍՈՒՐԱՆ	98 199	756	73	ՎԱՐՍՈՒՄ	7 296	353			
14	ԱՐԱՅԻՍ	10 716	271	29	ՎԱՐՍՈՒՄ	6 425	187	44	ՍՄԱՏՆԱԿ	12 226	863	59	ԿՈՒՆԵՒՆԻՑ	6 345	673	74	ՎԱՐՍՈՒՄ	1 960	184			
15	ԱՐԱՅԻՍ	7 238	257	30	ԱՐԱՅԻՍ	7 729	237	45	ՍՄԱՏՆԱԿ	13 120	1 280	60	ՆՈՒՐԱՆԱ	9 912	828	75	ՎԱՐՍՈՒՄ	5 495	134			

76	ԿՈՒՐԻ	3 584	169
77	ՅՈՒՆԱԿ	403	172
78	ՎԱՐՅԱՑՈՒՅ	2 864	225
79	ՔՐԷՆԱ	1 239	115
80	ՕՐԱՍՆԱՆԻ	3 189	459
81	ՌԱՍՏԱՆԻ	1 065	314

* Բոլոր նախագիծերն ունեն համարային կոդեր, որոնք նախատեսված են ընդհանուր հարկերի (ՎՊ) հարկային կարգավորումների (ՎԿ) նպատակով նախագիծը ընդհանուր հարկերի վճարումից ազատելու և հարկային վարչությանը հարկերի վճարման կարգավորումները փոխանակելու համար:

ԱՐՄԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ

պատմ. գիտ. թեկն.

ԱՐԱՐԱՏԻՉ ԱՅՆ ԿՈՂՄ

ՄՊՄԿՆԴՆԿՆՐԵՆԼՍԿ

ԹՈՒՐԹԻՄ



ԵՐԵՎԱՆ • 2011

Սույն ձեռնարկի հրատարակությունը ֆինանսավորվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ժողովրդավարական հանձնաժողովի դրամաշնորհի օգնությամբ: Ձեռնարկում արտահայտված կարծիքները պարտադիր չէ, որ համընկեն ԱՄՆ կառավարության տեսակետներին:

ՀՏԴ 327 (560)
ԳՄԴ 66.4 (5Թու)
Շ 380



Շ 380 Շաքարյան Արտակ
ԱՐԱՐԱՏԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ. ԱՊԱԿՈՂԱԿՈՐԵԼՈՎ ԹՈՒՐԹԻԱՆ / Ա. Շաքարյան. – Եր.: Ձանգակ–97, 2011.– 208 էջ:

Սույն ձեռնարկը նախատեսված է Թուրքիան լուսաբանող լրագրողների, արևելագետների, պատմաբանների, միջազգային հարաբերություններ ու պատմություն ուսումնասիրող ուսանողների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակի համար: Աշխատությունում ներկայացվում են Թուրքիայի արտաքին քաղաքականության սկզբունքները, բերվում են դրանք մենաբանող օրինակներ: Հատուկ ուշադրություն է դարձվում հայ-թուրքական հարաբերությունների վրա: Գրքի հավելվածում թարգմանաբար ներկայացվում են Հայաստանին վերաբերող հատվածներ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» մենագրությունից:

Ա. Շաքարյանը «Արարատից այն կողմ» բլոգի (www.turkaget.wordpress.com) հեղինակն է:

ՀՏԴ 327 (560)
ԳՄԴ 66.4 (5Թու)

ISBN 978-99941-1-907-3



© Շաքարյան Ա., 2011
© «Ձանգակ–97», 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայի արտաքին քաղաքականության սկզբունքները5

Սկզբունք առաջին. ներքին հավասարակշռություն17

Թուրքիայի քաղաքական դաշտի և անվտանգության խնդիրների համառոտ պատմական ակնարկ18

Արևմտականացման գործընթացը18

Թուրք ինքնությունը ձևավորող երեք հիմնական գաղափարախոսությունները25

Թուրքիայի հանրապետության հիմնադրումը և թուրքիզմի հաղթանակը33

Մերօրյա Թուրքիայի վախերը35

Իսլամիզմն ընդդեմ աշխարհիկության36

Քրդական խնդիր44

Սևրոֆոքիա53

Սկզբունք երկրորդ. Զրո խնդիր հարևանների հետ59

Թուրք-սիրիական հարաբերությունները64

Պատերազմի հավանականությունը72

Աննախադեպ ջերմացում74

Թուրքիան՝ ժողովրդավարության ներմուծող77

Թուրքիան՝ վստահելի երկիր78

Սկզբունք երրորդ. նեո-օսմանիզմ83

Գյուլենական շարժում. Թուրքիայի մեղմ ու խորքային ուժը88

Գյուլենական ու Ազգային կարծիք շարժումները89

Գյուլենական շարժումը և Արդարություն ու զարգացում կուսակցությունը94

Գյուլենական շարժման կարևորությունը100

Գյուլենական դպրոցները որպես արտաքին քաղաքական ուղղվածության գործիք Կենտրոնական Ասիայում102

Դպրոցների կառուցվածքն ու գործունեությունը108

Սկզբունք չորրորդ. Բազմակերպություն արտաքին քաղաքականություն	115
Ինչո՞ւ Աթաթյուրքը հրաժարվեց Արևելքից	115
Թուրքիան Մերձավոր Արևելքում Սառը պատերազմի տարիներին	119
Իրերի ներկա վիճակը փոխվեց. զսպանակը գործողության մեջ	121
Դուռ դեպի Արևելք	126
Թուրք-ամերիկյան հարաբերություններ (2003–2010թթ.)	135
Իրաքյան պատերազմին նախորդող իրավիճակն ու թուրք-ամերիկյան հարաբերությունները	137
Թուրք-ամերիկյան հարաբերությունները իրաքյան պատերազմի ժամանակ	146
Հարաբերությունների կարգավորումը Բարաք Օբամայի օրոք	156
Սկզբունք հինգերորդ. Ռիթմիկ դիվանագիտություն	169
Վերջաբանի փոխարեն. հայ-թուրքական հարաբերությունները Թուրքիայի արտաքին նոր քաղաքականության համատեքստում	176
Թուրքիայի արտաքին նոր քաղաքականության մոտեցումների ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների վրա ...	176
Հայ-թուրքական ցյուրիխյան արձանագրությունները. առաջընթաց և բացթողումներ	182
<i>Հավելված.</i>	
Հատվածներ Ահմեդ Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» գրքից	
Ռազմավարական տեսության անբավարար լինելն ու դրա արդյունքները	193
Պատմական ժառանգություն ու Թուրքիայի միջազգային դիրքը	196
Մոտ ցամաքային ավազան	197

ԹՈՒՐԳԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական ու եվրասիական հարցերով տեղակալ Ֆիլիփ Գորդոնը 2009թ. սեպտեմբերին Բրյուսելում ելույթի ժամանակ նշեց.

«...Երբ գործ ունես Թուրքիայի հետ, դու գործ ունես էներգիայի, ՆԱՏՕ-ի, Եվրոպական Միության, Մերձավոր Արևելքի, Իրանի, Կիպրոսի, Հունաստանի հետ. զրեթե չկա մի հարց, որի հետ Թուրքիան կապ չունենա»¹:

Այս ցուցակին կարելի է ավելացնել նաև Հայաստանը, Ռուսաստանը, Աֆղանստանը, Իրաքը², քրդերին: Ընդ որում, ժամանակ առ ժամանակ այս խնդիրները արգելակում են Թուրքիայի ընթացքը, իսկ երբեմն էլ թույլ են տալիս նրան մանևրել արտաքին քաղաքականության դաշտում: Սակայն սույն ուսումնասիրությունում մենք չենք քննարկի Թուրքիայի արտաքին հարաբերությունները յուրաքանչյուր առանձին վերցված երկրի հետ՝ օր առ օր նշելով նախա-

¹ Ronald H. Linden, Batties, Barrels and Belonging: Turkey and Its Black Sea Neighbors, 2010 Annual Meeting of American Political Science Association, Washington, DC, Sept. 2-5, 2010;

² Մերձավոր Արևելք ասելիս ԱՄՆ պաշտոնյաները հասկանում են հիմնականում արաբ-իսրայելական հակամարտությունը:

գահների այցերն ու ստորագրված պայմանագրերի կետերը: Փոխարենը կփորձենք ուսումնասիրել Թուրքիայի որդեգրած սկզբունքներն արտաքին քաղաքականությունում, նրա հիմնական մեխանիզմները, որոնք կիրառվում են գրեթե բոլոր երկրների հետ հարաբերություններում: Պատմական էքսկուրսներով ու որոշ օրինակներով կփորձենք հիմնավորել սկզբունքների կիրառելիությունն ու պատմական հենքը, ինչպես նաև կներկայացնենք Թուրքիայի ներքաղաքական կյանքի ու արտաքին քաղաքականության փոխկապակցվածության աստիճանը:

Երկարատև քաղաքական ճգնաժամից հետո տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում իսլամիստական արմատներ ունեցող Արդարություն ու զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) 2002թ. տարավ համոզիչ հաղթանակ³, խորհրդարանում զբաղեցրեց տեղերի մեծ մասը և կազմեց միակուսակցական կառավարություն: Կռալիցիոն կառավարությունների դանդաղ կոտ ու սկանդալային քաղաքականությունից հոգնած Թուրքիայի համար այս զարգացումն էական դեր ունեցավ և իր ազդեցությունը թողեց թե ներքին, թե արտաքին քաղաքականության վրա: Թուրքիան առավել արագընթաց քայլերով մոտեցավ Եվրոպային, հանդես եկավ մի շարք նախաձեռնություններով թե ներքին, թե արտաքին քաղաքական ասպարեզում:

2002թ.-ից սկսած Թուրքիան ԱԶԿ առաջնորդությամբ որդեգրեց արտաքին քաղաքականության նոր տեսլական, ավելի շուտ

³ 2002թ. նոյեմբերի 3-ի ընտրությունների արդյունքում Արդարություն ու զարգացում կուսակցությունն ստացավ 34,28 տոկոս քվե, որի արդյունքում ունեցավ 363 պատգամավորական մանդատ՝ ընդհանուր 550-ից: Աղբյուրը՝ Belge Net, Türkiye'de secimler, <http://www.belgenet.com/secim/3kasim.html>;

նոր մեթոդաբանություն, և քայլ առ քայլ սկսեց փոփոխություններ մտցնել իր նոր «գլխավոր ճարտարապետ» պրոֆեսոր Ահմեդ Դավութօղլուի ղեկավարությամբ:

Ահմեդ Դավութօղլու

Պրոֆեսոր Ահմեդ Դավութօղլուն ծնվել է 1959թ. Քոնիայում: Միջնակարգ կրթությունն ստացել է Ստամբուլի ավագ դպրոցում: 1983թ. ավարտել է Բոսֆորի համալսարանի տնտեսագիտության ու վարչական կառավարման ֆակուլտետը կրկնակի աստիճանով՝ քաղաքագիտություն ու տնտեսագիտություն: Շարունակելով ուսումը նույն համալսարանում նա ստացել է մագիստրոսի աստիճան հանրային կառավարման ֆակուլտետում և ստացել է գիտությունների թեկնածուի (PhD) աստիճան քաղաքագիտության ու միջազգային հարաբերությունների ֆակուլտետից:

1990–1993թթ. նա դասախոսում էր Մալայզիայի Միջազգային իսլամական համալսարանում, որտեղ հիմնել ու ղեկավարում էր քաղաքագիտության ամբիոնը:

1995–2004թթ. հանդիսացել է Ստամբուլի Բեյքենթ համալսարանի պրոֆեսոր՝ զբաղեցնելով միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ղեկավարի, համալսարանական խորհրդի անդամի ու կառավարման խորհրդի անդամի

պաշտոնները: Դրան զուգահեռ 1995–1999թթ. դասավանդել է Մարմարայի համալսարանում, իսկ 1998–2002թթ. դասաժամեր ուներ նաև ռազմական երկու ակադեմիաներում: 2002թ. խորհրդարանական ընտրություններից հետո նշանակվել է վարչապետի խորհրդական ու ստացել արտակարգ ու լիազոր դեսպանի աստիճան Թուրքիայի Հանրապետության 58–րդ կառավարության կողմից: 2009թ. մայիսի 1–ին 60–րդ կառավարության կողմից նշանակվել է արտաքին գործերի նախարար:

Պրոֆեսոր Դավութօղլուն հրապարակել է մի շարք գրքեր ու հոդվածներ Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ անգլերեն ու թուրքերեն լեզուներով: Նրա գրքերն ու հոդվածները թարգմանվել են տարբեր լեզուներով՝ ներառյալ ճապոներեն, պորտուգալերեն, ռուսերեն, արաբերեն, պարսկերեն ու ալբաներեն:

Ամուսնացած է, ունի 4 երեխա, թուրքերենից բացի տիրապետում է անգլերեն, գերմաներեն ու արաբերեն լեզուներին:

<http://www.mfa.gov.tr/ahmet-davutoglu.en.mfa>

Այդուհետ Թուրքիայի արտաքին քաղաքական ռազմավարության մեջ սկսվեցին օգտագործվել մեթոդաբանական սկզբունքներ ու մոտեցումներ, որոնք ստորն ավելի մանրամասն կուսում-

նասիրենք, քանզի դրանք թույլ են տալիս ավելի լավ հասկանալ պաշտոնական Անկարայի քայլերը:

- ✓ Հավասարակշռություն երկրում անվտանգության ու ժողովրդավարության միջև,
- ✓ Զրո խնդիր հարևանների հետ,
- ✓ Զարգացած հարաբերություններ հարևան տարածաշրջանների հետ,
- ✓ Բազմաչափ արտաքին քաղաքականություն և
- ✓ Ռիթմիկ դիվանագիտություն:

Դրանց հիմքում է Թուրքիայի ընկալումը որպես **«կենտրոնական երկիր»**: Նախկինում Օսմանյան կայսրությունն իրեն դիտարկում էր որպես իսլամական աշխարհի արևմտյան ճակատը, ապա՝ ՆԱՏՕ–ի հարավ–արևելյան թևը, հետո՝ Եվրամիությանն անդամակցության ջատագովները նշում էին, թե Թուրքիան կդառնա ԵՄ քարտեզի սահմանային երկիրը: Դավութօղլուն Թուրքիան ներկայացնում է ոչ թե որպես ծայրամասային, այլ կենտրոնական երկիր՝ տարբեր տարածաշրջանները կապող կամուրջ, բայց ոչ դրանց ծայրամասը: Այս սկզբունքից էլ հենց սկսում է նորօրյա Թուրքիայի արտաքին քաղաքականության բանաձևը: Ինչպես նշում է Դավութօղլուն.

«...Թուրքիան, ի տարբերություն Ռուսաստանի, Գերմանիայի, Իրանի կամ Եգիպտոսի, չի կարող բնութագրվել աշխարհագրորեն կամ մշակութայնորեն՝ այն հղելով որևէ մեկ տարածաշրջանի: Թուրքիայի բազմազան տարածաշրջանային քաղաքականությունը թույլ են տալիս նրան մանրերէլ միաժամանակ մի քանի տարածաշրջաններում: Այս առումով,

այն վերահսկողություն ու ազդեցություն ունի իր անմիջական հարևանությամբ գտնվող տարածքների վրա:....

....Թուրքիան ունի հատուկ դիրք: Թուրքիայի աշխարհագրությունը տալիս է նրան հատուկ կենտրոնական երկրի կարգավիճակ: Օրինակ, Գերմանիան կենտրոնական երկիր է Կենտրոնական Եվրոպայում, որը հեռու է Ասիայից ու Աֆրիկայից: Ռուսաստանը մեկ այլ կենտրոնական երկիր է Եվրոպայում ու Ասիայում, որը հեռու է Աֆրիկայից: Իրանը կենտրոնական երկիր է Ասիայում, որը հեռու է Եվրոպայից ու Աֆրիկայից: Այսպիսով, ավելի լայն ու զլորալ տեսանկյունից Թուրքիան ունի լավագույն դիրքը, քանի որ գտնվում է թե՛ Ասիայում, թե՛ Եվրոպայում, ինչպես նաև մոտ է Աֆրիկային՝ Միջերկրական ծովի արևելյան հատվածով: Այսպիսի աշխարհագրություն ունեցող կենտրոնական երկիրը չի կարող վարել պաշտպանողական քաղաքականություն:...»⁴

Դավութոզլուի կարծիքով ազդեցության գոտու հարցում Թուրքիան գտնվում է Մերձավոր Արևելքում, Բալկաններում, Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Պարսից ծոցում, Կասպից, Միջերկրական, ու Սև ծովերի ավազանում: Հիմնվելով այս բազմաթիվ տարածաշրջաններում Անկարայի ներկայության ու ազդեցության վրա՝

«Թուրքիան պետք է ստանձնի նոր դերակատարում. երկիր, որն ապահովում է ոչ միայն իր սեփական անվտանգությունն

⁴ Ahmet Davutoğlu, Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, Insight Turkey, Vol. 10 / No. 1 / 2008, p. 78;

ու կայունությունը, այլև դա անում է իր հարևան տարածաշրջաններում»⁵:

Թուրքիան շարունակում է իր արտաքին քաղաքականությունը, որը սկսվում է երկրի տարածքային ամբողջականություն պահպանելու ու չփլուզվելու մակարդակից, իսկ հնարավորության դեպքում հասնում է մինչև տարածքային նոր ձեռքբերումներ ու գերիշխանություն հաստատելու մակարդակի:

Այսուհանդերձ, ամեննին չվիճարկելով Դավութոզլուի կարևորությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության կերտման գործում, անհրաժեշտ է նշել, որ այս գիծն սկսվել է ձևավորվել շատ ավելի վաղ: Օրինակ, վարչապետ, իսկ ապա նաև նախագահ Թուրգութ Օզալն առաջիններից մեկն էր, ով բարձրաձայնում էր արաբական ու խորհրդային աշխարհների վրա ուշադրություն դարձնելու անհրաժեշտության մասին: Օզալի գործը շարունակեց արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմը, որը մոտ 5 տարի՝ 1997 մինչև 2002թ. հուլիսը ղեկավարում էր այդ գերատեսչությունը: Թեև ինչպես նշեցինք Դավութոզլուի մոտ Թուրքիայի «կենտրոնական երկիր» լինելը հիմնական գաղափարնե-

⁵ Ibid., p. 79;

րից մեկն է, այս միտքը արտահայտվել է նաև Իսմայիլ Ջեմի կողմից, ով մասնավորապես իր հոդվածներից մեկում նշում է.

«...կարևոր նպատակ է դարձնել Թուրքիան հանգուցային ու բարգավաճ երկիր Եվրասիա անվանվող հարուստ աշխարհագրության կենտրոնում: Թուրքիան արդեն ունի դիվերսիֆիկացված արդյունաբերական հենք, լավագույն մարզված ու զինված բանակ և Բալկանների ու Կենտրոնական Ասիայի մեջտեղում գտնվող ամենահիմնարար ժողովրդավարությունն ունեցող երկրներից է: Թուրքիայի քաղաքական, տնտեսական ու անվտանգության հարցերով նախաձեռնությունները, որոնք ներառում են տարբեր տարածաշրջաններ, նույնպես այս նպատակին հասնելու կարևոր գործիքներից են...»⁶:

Իսմայիլ Ջեմի մոտ տեսնում ենք Դավութօղլուի կողմից զարգացված գաղափարների ուրվագծերը: Նա նույնպես ասում է, որ փոփոխված իրավիճակում Թուրքիան պետք է վերաձևակերպի իր արտաքին քաղաքականությունը, ձերբազատվի միայն ՆԱՏՕ-ի օժանդակը լինելու դերակատրումից, հայացքն ուղղի նաև իր կրոնական ու մշակութային ներուժի վրա: Ընդ որում, Ջեմը խոսում է ոչ միայն կենտրոնական երկիր դառնալու, այլ նաև հարևան տարածաշրջանների հետ ավելի սերտ համագործակցության մասին, ուստի անտեղին է Դավութօղլուին մեղադրել նեո-օսմանիզմի մեջ (տես գլուխ 3-րդը). այն առաջ է քաշվել

⁶ Ismail Cem, Turkish Foreign Policy: Opening New Horizons for Turkey at the Beginning of a New Millennium, Turkish Policy Quarterly, 2002-1, p.4;

նրանից վաղ: Պարզապես Դավութօղլուի պաշտոնավարման ժամանակը համընկավ առանց կոալիցիաների քաշքշոցի, միակուսակցական կառավարության ու խարիզմատիկ առաջնորդի ժամանակաշրջանի հետ, երբ դյուրին է մտահղացումները կյանքի կոչել: Այսպիսով, Իսմայիլ Ջեմը դեռ անցյալ դարում ասել էր.

«Երբ 1997թ. ես դարձա արտաքին գործերի նախարար, ես ուրվագծեցի Թուրքիայի համար մեր տեսլականը պարզ եզրերով. Դարձնել երկիրը «համաշխարհային պետություն»: Համաշխարհային պետությունը դիրքավորված է աշխարհի կենտրոնների միջև ու իրենից ներկայացնում է քաղաքակրթական արժեքների, պատմական փորձառության ու ռազմավարական հատկանիշների յուրօրինակ փունջ... [Երկիր է.] որ մշտապես զարգացնում է իր հատուկ հարաբերությունները տարածաշրջանների հետ, որոնց հետ ունի ընդհանուր պատմություն»⁷:

Իսմայիլ Ջեմ

Թուրքիայի արտաքին գործերի նախարարը 1997–2002թթ.

Ծնվել է 1940թ. Ստամբուլում: 1959թ. ավարտել է Ստամբուլի օտարալեզու Ռոբերտ քոլեջը, իսկ 1963թ.՝ Լոզանի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

⁷ Ibid., p.6;

1991թ. Փարիզի քաղաքագիտական ինստիտուտից ստացել է մագիստրոսի աստիճան քաղաքական սոցիոլոգիայի ոլորտում:

Տարբեր թերթերում աշխատել է որպես գլխավոր խմբագիր: 1971–1974թթ. ղեկավարել է Թուրքիայի լրագրողների արհմիության Ստամբուլի մասնաճյուղը: Դրանից հետո մոտ մեկ տարի հանդիսացել է Թուրքիայի միակ հեռուստաալիք TRT–ի (Թուրքիայի հեռուստառադիոընկերություն) ղեկավարը, ինչի ընթացքում շատ փոփոխություններ է նախաձեռնել: Սա հավանության չի արժանացել պահպանողական ընդդիմությանը, ինչի պատճառով նրան ազատել են այդ պաշտոնից:

TRT–ից հետո նա հրապարակում էր սոցիալիստական ուղղվածությամբ «Politika» թերթը, որը 1980թ. սեպտեմբերի 12–ի ռազմական հեղաշրջման արդյունքում փակվեց: 1980թ. հետո Սոցիալիստական ժողովրդավարական ժողովրդական կուսակցությամբ ակտիվ քաղաքականություն մտած Ջեմը քանիցս ընտրվեց որպես պատգամավոր՝ 1987թ. ու 1991թ. ընտրություններում ընտրվեց Ստամբուլից, իսկ 1995թ.՝ Քայսերիից:

1987թ. նա նաև ընտրվեց Եվրոպական միության խորհրդարանական վեհաժողովի անդամ: 1993թ.՝ Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալի մահվանից հետո, Ջեմի թեկնածությունն առաջադրվեց նախագահական ընտրու-

թյուններում, սակայն հաղթեց Սուլեյման Դեմիրելը:

1995թ. 50–րդ կառավարությունում Իսմայիլ Ջեմին վստահվել էր մշակույթի նախարարի պաշտոնը, իսկ 1997թ. հունիսի 30–ին հիմնված 55–րդ կառավարությունում նա ստանձնեց արտաքին գործերի նախարարի պաշտոնը:

Մոտ 5 տարի պաշտոնավարելուց հետո նա հրաժարական տվեց 2002թ. հուլիսին ու համահիմնադրեց Նոր Թուրքիա կուսակցությունը ու դարձավ կուսակցության նախագահ: Սակայն 2002թ. խորհրդարանական ընտրություններում անհաջողություն կրելով՝ 2004թ. իր կուսակցությունը միացրեց Ժողովրդահանրապետական կուսակցությանը, իսկ ինքը դարձավ ԺՀԿ նախագահ Դենիզ Բայքալի գլխավոր խորհրդականը: Բայց որոշ ժամանակ անց Իսմայիլ Ջեմը հեռացավ քաղաքական կյանքից՝ թոքերում քաղցկեղի ախտորոշումից հետո: Իսմայիլ Ջեմը մահացավ 2007թ. հունվարին:

Հստակորեն, այսօր Դավութօղլուն նույնպես ջանում է զարգացնել հատուկ հարաբերություններ հարևան տարածաշրջանների հետ, որոնց հետ Թուրքիան այս կամ այն կերպ ունի ընդհանրություն՝ Բալկաններ, Հարավային Կովկաս, Կենտրոնական Ասիա, Մերձավոր Արևելք, Հյուսիսային Աֆրիկա:

Այսպիսով, Թուրքիան շարունակում է իր արտաքին քաղաքականությունը, որը սկսվում է երկրի տարածքային ամբողջա-

կանություն պահպանելու ու չփլուզվելու մակարդակից, իսկ հնարավորության դեպքում հասնում է մինչև տարածքային նոր ձեռքբերումներ ու գերիշխանություն հաստատելու մակարդակի: Ստորև կրննարկենք և կվերլուծենք այն նեո-ռեալիզմի տեսանկյունից՝ ցույց տալով, որ ինչպես յուրաքանչյուր պետություն, Թուրքիան նույնպես արտաքին քաղաքականության ասպարեզում որոշումներ է ընդունում՝ առաջնորդվելով ազգային շահերով, երբ վատագույն դեպքում առաջնահերթ խնդիրը ինքնապահպանումն է, իսկ լավագույն դեպքում այն քայլեր կանի ազդեցության ընդլայնման ուղղությամբ՝ ընդհուպ մինչև ունիվերսալ գերիշխանություն: Այս առումով Դավութօղլուի որդեգրած 5 սկզբունքները բավականին ուսանելի են:

«...ես ուրվագծեցի Թուրքիայի համար մեր տեսլականը պարզ եզրերով. Դարձնել երկիրը «համաշխարհային պետություն», որ մշտապես զարգացնում է իր հատուկ հարաբերությունները տարածաշրջանների հետ, որոնց հետ ունի ընդհանուր պատմություն

Իսմայիլ Չեմ

ՄԿՋԲՈՒՆՔ ԱՌԱՋԻՆ.

ՆԵՐՔԻՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՌԹՅՈՒՆ

Արտաքին քաղաքականության առաջին սկզբունքը ենթադրում է, որ երկրում պետք է լինի անվտանգության ու ժողովրդավարության միջև հավասարակշռություն, այլապես այն չի կարող ազդեցություն ունենալ իր շրջակա տարածքների վրա:

Այստեղ առաջ է գալիս մեթոդաբանական ամենահիմնական սկզբունքներից մեկը, որն արդյունավետ քաղաքականության ու հաջող ռազմավարության հիմնադրույթն է: «Ներսից դուրս» սկզբունքը ենթադրում է, որ մինչև երկիրը ներքին դաշտում չունենա կայուն զարգացում, բարենպաստ միջավայր ու սատարող մթնոլորտ՝ արտաքին դաշտում ոչ մի առաջընթաց չի կարող լինել լիարժեք, միջազգային հանրությունում երկիրը չի ունենա դրական իմիջ և չի լինի հավատարմ: Ընդ որում խոսքն այստեղ վերաբերվում է ոչ միայն քաղաքական իրավիճակին ու ժողովրդավարության մակարդակին, այլև տնտեսական չափանիշներին:

Այսպիսով, Թուրքիան պատրաստ է գնալ զիջումների ու դառնալ ավելի ժողովրդավար, մարդու իրավունքները պաշտպանող և այլն, սակայն մինչև այն պահը, երբ այդ գործընթացն սկսի վտանգի ենթարկել անվտանգությունն ու երկրի տարած-

քային ամբողջականությունը: Օրինակ, եթե առավել ժողովրդավարացման արդյունքում քրդերը պահանջեն ինքնավարություն, ապա դա կնշանակի, որ հավասարակշռությունը խախտված է, և այն պետք է վերականգնել՝ ի հաշիվ ժողովրդավարական ազատությունների կրճատման: Թուրքիայի ողջ պատմության ընթացքում, ինչպես նաև Օսմանյան կայսրության գոյության վերջին տասնամյակներին, այս բալանսավորման գործընթացը մշտապես առկա է եղել:

Թուրքիայի քաղաքական դաշտի և անվտանգության խնդիրների համառոտ պատմական ակնարկ

Արևմտականացման գործընթացը

Արդարացիորեն, Թուրքիայի նորագույն պատմությունն սկսվում է Աթաթյուրքի սկզբունքների վրա հիմնադրված Թուրքիայի Հանրապետության հռչակմամբ: Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքը անջնջելի ու մեծ հետք է թողել մերօրյա Թուրքիայի պատմության վրա: Նրա սկզբունքները⁹ իրենցից ներկայացնում էին այն հենասյունները, որոնք ապահովեցին Թուրքիայի առաջընթացն ու վերականգնումը Առաջին համաշխարհային պատերազմում տարած ծանր պարտությունից հետո:

⁹ Սկզբունքներն են՝ հանրապետականություն, ազգայնականություն, ժողովրդականություն, աշխարհիկություն, հեղափոխականություն, պետականություն: Աղբյուրներ՝ Tarık Zafer Tunaya, *Devrim Hareketleri İçinde Atatürk ve Atatürkçülük*, 2.B. İstanbul, 1981; Hilmi Ziya Ülken, *Millet ve Tarih Şuuru*, 2.B. İstanbul, 1976; A.Afetinan, *Medeni Bilgiler ve Mustafa Kemal Atatürk'ün El Yazıları*, Ankara, 1969; Turhan Feyzioğlu, *Atatürk ve Milliyetçilik*, Ankara, 1986; Utkan Kocatürk, *Atatürk'ün Fikir ve Düşünceleri*, Ankara, 1984:

Թուրքիայի արտաքին ու ներքին քաղաքականության վրա մեծապես ազդել է Աթաթյուրքի «Դեպի Արևմուտք» կոչը: Նա կտրեց Թուրքիան օսմանյան ու իսլամական արմատներից ու տարավ երկիրը դեպի Արևմուտք՝ դիտարկելով այն որպես զարգացման միակ ուղի:

Սակայն Մուստաֆա Քեմալն առաջինը չէր, որ դիմում էր Արևմուտքին: Դեռ Աթաթյուրքից շատ առաջ Օսմանյան կայսրության հասարակության մի հատված պարտությունների արմատը տեսնում էր կայսրության՝ արևմտյան աշխարհից կտրված լինելու մեջ:

Օսմանյան կայսրությունը միշտ հարաբերության մեջ է եղել «արևմտյան քաղաքակրթության» հետ: Ինչևէ, ի հեճուկս բյուզանդական քաղաքակրթության կողմից մեծ ազդեցությանը, օսմանցիներն «իսլամական քաղաքակրթությունը» միշտ ավելի վեր էին դասում արևմտյանից: Որպես արդյունք Արևմուտքը օսմանցիների համար չէր տեղավորվում «մողել երկրի» շրջանակներում¹⁰:

Արևմտյան աշխարհի հետ շփման հիմնական ուղին էր ռազմի դաշտը¹⁰: Ռազմագերիներն իրենց հետ բերում էին նոր գիտելիքներ ու տեխնոլոգիաներ: Օսմանյան կայսրությունում կիրառվող հատուկ համակարգն իր հերթին ապահովում էր գերիների

⁹ Şerif Mardin, *Türk Modernleşmesi*, 5. Baskı, İstanbul, İletişim yayınları, 1997, s.10.

¹⁰ Հնդհանուր առմամբ պատերազմները, լինելով կործանարար ու դաժան, այուհանդերձ մշտապես իրենց մեջ կրում են փոփոխությունների ու զարգացմանը տանող գործոններ: Հարցի քննարկման մասին, տես՝ William Eckhard, *Civilizations, Empires, and Wars*, *Journal of Peace Research*, vol.27, no.1, 1990. pp. 9–24; Charles Morris, *War as Factor in Civilization*, *The Popular Science Monthly*, October 1895, pp.823–834; I.W.Howerth, *War and the Progress of Society*, *The Popular Science Monthly*, August 1915, pp.195–199:

ներգրավվածությունը թե՛ բանակում, թե՛ վարչական ապարատում¹¹:

Պատերազմից բացի շփման այլ ուղիներ ևս գոյություն ունեին: Եվրոպացի դիվանագետները, առևտրականները, գիտնականները, ճանապարհորդներն ու քարոզիչները, որոնք այցելել են Օսմանյան կայսրություն 15–16 դարերում, իրենց հետ բերել են «տպագրական, բժշկական ու տեխնոլոգիական գիտելիքներ»¹²։ Արևմուտքից: Ինչևէ, սկզբում օսմանցիները Եվրոպային դիմում էին հիմնականում ռազմական տեխնոլոգիաների համար: Միայն 18–րդ դարի սկզբերից սուլթաններն սկսեցին հատուկ պատվիրակություններ ուղարկել Եվրոպա՝ այնտեղից տեխնոլոգիաներ ու նորարարություն բերելու նպատակով: Հայտնի է նույնիսկ, որ նման առաջին այցերի արդյունքում դեսպաններից մեկը Կ.Պոլիս է բերում կակաչների սերմեր, որն անմիջապես դառնում է «եվրոպականացման» մոդայի խորհրդանիշը, այդ ժամանակաշրջանը Օսմանյան կայսրության պատմությունում կոչվում է «Լալե դերի», այսինքն կակաչների ժամանակաշրջան, իսկ կակաչը մինչև այսօր մնացել է որպես Ստամբուլ քաղաքի խորհրդանիշ:

Վերոհիշյալ ժամանակաշրջանը համընկավ Օսմանյան կայսրության անկման սկզբին: Ըստ էության չի կարելի դա անվանել համընկնում, քանի որ հենց Ավստրիական ու Ռուսական կայսրությունների կողմից երկու նվաստացուցիչ պարտությունները և Կառլովիցի (1699) ու Պոժարովեցի (1718) պայմանագ-

¹¹ Այս մասին ավելի մանրամասն տես Արտակ Շաքարյան, «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում, դեվժիրմե, Երևան, 2006, 181 էջ:

¹² Bernard Lewis, *The Emergence of Modern Turkey*, London, New York, Toronto, Oxford University Press, 1961, p. 43;

րերն¹³ ստիպեցին սուլթաններին ու նրանց շրջապատին փնտրել պատճառներ ու առաջարկել լուծումներ:

Խաղաղության վերականգնումից անմիջապես հետո 1718–1730 թթ. կայսրության մեծ վեզիր Դամադ Իբրահիմ Փաշան, ով կայսրության արևմտականացման ջատագով էր, ուղարկեց մի քանի առաքելություններ Եվրոպական մայրաքաղաքներ ուսումնասիրելու քաղաքակրթությունը, կրթական համակարգը և գեկուցելու, թե դրանցից ինչ կարելի է կիրառել Օսմանյան կայսրությունում: Ահմեդ 3–րդի (1703–1730թթ.) օրոք տեղի ունեցող այս արևմտականացման առաջին փորձերն իսկ հանդիպեցին դիմադրության օսմանյան հասարակության ցածր ու միջին խավի կողմից. թե կրոնական գիտնականները՝ ուլեմաները, թե ենիչերիներն զգացին, որ սա իրենց դիրքերը խաթարելուն ուղղված քայլեր են: Արդյունքում սուլթանն ստիպված եղավ հրաժարական տալ, իսկ Մեծ վեզիրն ու նրա օգնականներն սպանվեցին¹⁴: Այդուհանդերձ, արևմտականացումը ժամանակի տրամաբանական թելադրանքն էր, ու գործընթացը շարունակվեց ավելի դանդաղ ընթացքով՝ մինչև Ֆրանսիական հեղափոխություն:

Ֆրանսիական հեղափոխության մթնոլորտը համընկավ Մեկիմ 3–րդի (1789–1803) կառավարման տարիներին, որն ավելի վճռական գտնվեց իր դիրքերն ամրապնդելու հարցում և նախաձեռնեց կայսրության վերափոխման ծրագիր, որը հայտնի է Նիզամ-

¹³ Ավելի մանրամասն տես՝ Martin Sicker, *The Islamic World in Decline: From the Treaty of Karlowitz to the Disintegration of the Ottoman Empire*, Westport, Connecticut, London, 2001, 255p.; William Miller, *The Ottoman Empire and Its Successors, 1801–1927*, Routledge, 1966, p.1:

¹⁴ Դամադ Իբրահիմ Փաշայի, բարեփոխումների ու ապստամբության մասին ավելի մանրամասն տես՝ Zabit Acer, «Place of Reforms in Western Structuring Process of Ottoman State and Their Effect on Modernization (1718–1789)» *Zeitschrift für die Welt der Türken / Journal of World of Turks*, Volume 2 Number 1 (15 April 2010).

ի Ջեդիդ՝ «Նոր կարգ» անվանմամբ: Չկենտրոնանալով Սելիմի 3-րդի քաղաքականության մանրամասների վրա՝ անհրաժեշտ ենք գտնում ընդգծել օսմանյան հասարակության եվրոպականացման երկու հիմնական ուղիները:

Առաջինն ու ամենահիմնարարը դպրոցներն էին¹⁵, մասնավորապես դրանց սերտ կապերը ֆրանսիական ռազմական կրթական համակարգի հետ, որը բերեց ցամաքային ու ռազմածովային երիտասարդ սպայակազմի սոցիալական դասակարգի ստեղծմանը, որոնք արդեն ծանոթ էին արևմտյան քաղաքակրթությանը, տիրապետում էին նվազագույնը մեկ եվրոպական լեզվի, հիմնականում ֆրանսերենի, և նայում էին արևմտյան մասնագետներին՝ որպես իրենց խորհրդատուների:

Երկրորդ կարևոր ուղին դեսպանատներն էին, որոնք նույնպես ազդեցություն ունեին արևմտամետ բյուրոկրատական դասակարգի ստեղծման վրա: Հետագայում հենց այս երկու դասակարգերը դարձան օսմանյան ու հանրապետական բարեփոխումների առաջամարտիկները: Դեսպանները ճանապարհորդում էին դեպի Եվրոպա երիտասարդ օգնականների հետ միասին, որոնց հիմնական պարտականությունների մեջ էր մտնում ուսումնասիրել եվրոպական լեզուներն ու հասարակությունը: Վերադառնալուց հետո նրանք կառավարչական պաշտոններ էին ստանում կայսրությունում ու տարածում էին յուրացված գաղափարները¹⁶: Այսպիսով, առաջին անգամ փորձ էր կատարվում Եվրոպան ներ-

¹⁵ Այդ ժամանակվա հատուկ դպրոցների՝ ոյուշտիյեների մասին տես՝ Süleyman Tenger, Rüştiye mekteplerinin tarihi gelişimi ve din eğitimi ve öğretimi, Ankara Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Din Kültürü ve Ahlak Bilgisi Öğretmenliği Ana Bilim Dalı, Ankara, 2005, 195 s.;

¹⁶ Bernard Lewis, The Emergence of Modern Turkey, p. 59;

կայացնել որպես մոդել¹⁷: Սակայն, կրկին ենիչերիների, ուլեմաների ու խոշոր հողատերեր այանների ընդդիմությունը բարեփոխումներին բերեց սուլթան Սելիմ 3-րդի գահընկեցությանը:

Թեև կրկին ընդդիմությունը դանդաղեցրեց բարեփոխումների ընթացքը, սակայն կայսրության զարգացումը ենթադրում էր եվրոպականացման փորձերի շարունակություն: Մահմուդ 2-րդը (1808–1839) իր քայլերով ուղի հարթեց հաջորդ հարյուրամյակի բարոփեխումների համար՝ ճանապարհից վերացնելով ամենահիմնական արգելքներից մեկը՝ 1826թ. վերացվեցին ենիչերիները¹⁸: Հրաժարվելով ենիչերիների նման հիմնարար մարդկային ռեսուրսներից՝ սուլթանը կարիք ուներ նոր հենարանի, որը կդառնար իր քաղաքական գծի առաջամարտիկը: Մահմուդ 2-րդն Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին անգամ 1827թ. մի խումբ ուսանողների ուղարկեց Եվրոպա՝ ուսումնասիրելու ժամանակակից գիտություններ: Դրանից բացի բացվեցին մի շարք դպրոցներ՝ աշխարհիկ դասացուցակներով՝ 1827թ.՝ ռազմաբժշկական դպրոց, 1836թ. ռազմական դպրոց և ավելի ուշ՝ 1859թ.՝ վարչական գիտությունների դպրոց: Այս դպրոցներում հանգուցային դեր ունեին օտարերկրացի դասախոսներն, ուստի ընդունվելու համար օտար լեզվի իմացությունը պարտադիր էր¹⁹:

Հասարակությունում նման կորիզի ստեղծումն ապահովեց առաջիկա բարեփոխումների ներհասարակական աջակցության

¹⁷ Şerif Mardin, Türk Modernleşmesi, 5. Baskı, İstanbul, İletişim yayınları, 1997, s.11;

¹⁸ Ենիչերիների վերացման մասին տես՝ Kadir Üstün, Rethinking Vaka-i Hayriye (the Auspicious Event): Elimination of the Janissaries on the Path to Modernization, The Institute of Economics and Social Sciences of Bilkent Univeristy, Ankara, 2002, 95 p.;

¹⁹ Yücel Bozadağlıoğlu, Turkish Foreign Policy and Turkish Identity: A Constructivist Approach, New York, London, Routledge, 2003, pp. 38–39;

մի հատված, ստեղծվում էր ռազմական նոր դասակարգ, որն ուներ իշխանություն, և որը համակարծիք էր այն գաղափարին, որ արևմտյան աշխարհի օգնությամբ կարելի կլինի վերգտնել Օսմանյան կայսրության վաղեմի հզորությունը:

Սակայն չի կարելի օսմանյան արևմտականացման պատմությունը դիտարկել որպես սուլթանների նախաձեռնողական քաղաքականության արդյունք: Ամեն դեպքում կայսրությունը բավականին դանդաղ քայլերով էր ընթանում առաջ և հետ էր ընկնում գլոբալ ժամանակացույցից: Համաաշխարհային պատմության ընթացքն իր ուղիներն էր ենթադրում և եվրոպական ուժերն իրենք էին փորձում միջամտել Օսմանյան կայսրության զարգացման սցենարների մեջ: Կայսրության «փաստաթղթավորված» հիմնարար բարեփոխումների փորձերը տեղի ունեցան հենց արտաքին ճնշման արդյունքում: 1839թ. հավաքական Թանզիմատ անվան տակ հայտնի հրովարտականերն ու դրան հաջորդած և նախորդի ուժը վերահաստատող 1856թ. Հաթթը Հումայունը հենց այն «հրող գործոններն» էին, որոնք խրախուսում էին կայսրության ընթացքը դեպի արևմտյան քաղաքակրթություն²⁰:

²⁰ Թանզիմատի ու Հաթթը Հումայունի մասին ավելի մանրամասն՝ տես Мария Тодорова, Англия, Россия и Танзимат, вторая четверть XIX в., Изд-во «Наука», Глав. ред. восточной лит-ры, 1983, 183 pages; Reşat Kaynar, Mustafa Reşit Paşa ve Tanzimat, Türk Tarih Kurumu Basımevi, 1954, 656 pages; Рубин Сафрастьян, Доктрина османизма в политической жизни Османской империи, 50—70 гг. XIX в., Изд-во АН Армянской ССР, 1985, 146 pages; Roderic H. Davison, Reform in the Ottoman Empire, 1856—1876, Princeton University Press, 1963, 479 pages.

Թուրք ինքնությունը ձևավորող երեք հիմնական գաղափարախոսությունները

Ինչպես և մեր օրերում Թուրքիայում ընդունված ԵՄ բարեփոխումների օրինափաթեթների դեպքում, Օսմանյան կայսրության հրովարտակաները նույնպես մնացին հիմնականում թղթի վրա: 1870-ական թթ. պարզ դարձավ, որ 16-րդ դարից սկսած նախաձեռնվող բարեփոխումները չեն բերել ակնկալվող արդյունքների ու չեն փրկել պետությունն անկումից²¹: Սակայն Մահմուդ 2-րդի՝ կրթական համակարգի միջոցով երկրի նոր էլիտա ստեղծելու ռազմավարությունը չէր անցել անտեղի: Դրա արդյունքն էին *երիտասարդ օսմանցիները*, ովքեր դեմ էին եվրոպականացման մակերեսային փորձերին: Նրանք կոչ էին անում իսլամական իրավունքը՝ շարիաթն ու արժեքները հաշվի առնել եվրոպականացման ճանապարհին²² և, փաստորեն, իրենցից ներկայացնում էին չափավոր իսլամիստների՝ նման այսօրվա Արդարություն ու զարգացում կուսակցությանը, ովքեր կողմնակից են եվրոպական ուղուն, սակայն նաև շեշտում են, որ դա պետք է արվի հաշվի առնելով իսլամական արմատները, իսլամական ինքնությունն ու արժեքները:

Անշուշտ, Օսմանյան կայսրության քաղաքական դաշտում ազատական օսմանիզմին հակընդդեմ չէր կարող չգոյանալ այլընտրանքային ուժ, որն էր իսլամիզմը: Իսլամիզմի դրոշակակիր դարձավ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը (1876-1909), որը 30 տարի

²¹ Yücel Bozadağlıoğlu, Turkish Foreign Policy, p. 40;

²² Yücel Bozadağlıoğlu, Turkish Foreign Policy, p. 40;

կառավարեց երկիրը որպես բացարձակ միապետ: Թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականությունում նա լայնորեն կիրառում էր իսլամիզմը որպես կայսրությունը փրկելու միջոց: Օգտագործելով օսմանյան սուլթանների՝ բոլոր մուսուլմանների խալիֆ լինելու հանգամանքը Աբդուլ Համիդ 2-րդը փորձում էր նաև խաղարկել պան-իսլամիզմի գաղափարախոսությունը:

Աբդուլ Համիդ 2-րդի քաղաքականությունը

Աբդուլ Համիդ 2-րդի քաղաքականությունն ուներ մի քանի շերտանի ռազմավարություն:

Նախ, աշխատում էր «բաժանիր, որ տիրես» սկզբունքը: Նման իրավիճակը հղի էր արյունալի միջադեպերով, կրոնական հողի վրա բախումներով, ինչը նշանակում էր, որ միջտ կարելի էր միջամտել և, խաղարարի ծառայություններն օգտագործելով, ազդել կողմերի վրա:

Ապա հստակորեն մատնացույց էր արվում ամեն ինչի պատասխանատուն, որն ընդ որում դյուրին թիրախ էր, և կարող էր ապահովել բազում հաղթանակներ: Դյուրին հաղթանակներն իրենց հերթին ստեղծում էին ավելի մեծ ինքնավստահություն, ինչը զուգորդվում էր կողոպտված քրիստոնյաների սեփականության յուրացմամբ: Մասլոույի բուրգի այս մի քանի մակարդակների բավարարումը տանում էր նրան, որ սուլթանի իշխանությունն ավելի էր ամրապղն-

վում այդ խմբերի շրջանում:

Ավելին, այս ամենը ենթադրում էր կրոնական հողի վրա բախումներ, որոնք ստանալով ձևափոխման արդյունք՝ ավելի ու ավելի մեծ չափսերի էին հասնում: Նման իրավիճակը սուլթանին տալիս էր նա մեկ՝ իր համար դրական պտուղ: Հասարակությունն ու հատկապես հասարակությունում առկա ռազմաշունչ տարրն իր էներգիան օգտագործում էր այլ՝ սուլթանի համար ցանկալի ուղղությամբ՝ հեղափոխությունների, ազատությունների ու նման «հիմար» բաների վրա ծախսելու փոխարեն: Այսպիսով, ստեղծելով ավելի առաջնային, հրատապ ու անվեջանալի խնդիրներ՝ սուլթանը հասարակության ուշադրությունից հեռու էր պահում հեռանկարային ու ռազմավարական հիմնահարցերը, որոնք այդ պահին այլևս թվում էին անկարևոր:

Թերևս, ամենակարևոր երկարաժամկետ նպատակն էր նաև իսլամիզմի հենց իմաստը՝ կայսրության մուսուլման ժողովուրդների միավորում: Ի՞նչն է մարդկանց ավելի լավ միավորում, եթե ոչ ընդհանուր թշնամու կերպարը: Հատկապես, Օսմանյան կայսրության նման կրոնական երկրում ընդհանուր թշնամին պետք է ունենար կրոնական տարբերություն, ուստի քրիստոնյաներն այստեղ ամենից հարմար թիրախն էին: Այստեղ նաև գործեց մարդկանց կառավարման հաջորդ սկզբունքը՝ թիրախը պետք է լինի հասանելի: Ռուսների կամ ֆրանսիացիների դեմ մուսուլմաններին մի-

ավորելը թե՛ անհեռանկարային էր, թե՛ հիասթափեցնող, ինչը ապացուցվեց 1877–1878թթ. ռուս–թուրքական պատերազմով, ուստի անպաշտպան ու հարևան հայերը, հույները, ասորիներն ու այլոք ամենահարմար գոհն էին:

Եվ վերջին կետը հետապնդում էր ռազմավարական մի ծրագրի իրականացում, որը երկարաժամկետ կտրվածքով բխում էր Օսմանյան կայսրության, հետագայում նաև Թուրքիայի կենսունակության շահերից, որի շարունակությունն էր երիտթուրքական կառավարության կողմից ծրագրված հայերի ու ասորիների ցեղասպանությունները, Աթաթյուրքի ու Թուրքիայի հաջորդ ղեկավարների կողմից իրականացված հակաքրդական ծրագրերը: Նպատակը մեկն էր՝ Անատոլիայի ու դրանից արևելք ընկնող տարածքների մաքրում հայկական, իսկ ապա նաև քրդական տարրից: Եթե առաջին Ցեղասպանության իրականացման համար պատեհ առիթ ստեղծվեց, ապա քրդերը կարողացան ճողոպրել ու հայերի ջարդերն իրականացնող գործիքից չդարձան ցեղասպանության գոհ:

Ինչո՞ւմն էր կայանում Աբդուլ Համիդ 2-ի ծրագիրը: Իսլամիզմի քողի տակ գրգռելով քրդերի կրոնական հույզերը՝ նա կազմեց քրդերից բաղկացած հեծյալ խմբեր «համիդիյե», որոնց հիմնական խնդիրն էր կեղեքել հայ բնակչությանն ու պատժել անհավատներին կայսրության բոլոր պարտությունների համար: Սրանով Աբդուլ Համիդ 2-րդը կիրառում

է մի ռազմույթ, որը չինացիներից թարգմանաբար հնչում է մոտավորապես այսպես «կովացնել երկու վագրին, իսկ հաղթող, բայց արդեն հոգնած ու վիրավոր վագրին ինքնուրույն սպանել»: Քրդերի ձեռքով իրականացվում էր հայերի ոչնչացում: Վրիժառու հայերն իրենց հերթին սպանում էին քրդերին, և երկու ժողովուրդ ինքնաբերաբար թշնամանում էին ու հաշտության եզրեր նույնիսկ չէին փնտրում: Այդուհետ հայերը զբաղված էին պաշտպանվելով, քրդերը հարձակվելով, և երկու ազգից շատ քչերն էին ընկալում, որ Աբդուլ Համիդից ազատվելու իրական ճանապարհը համատեղ ուժերով կայսրությունից դուրս գալն էր: Արդյունքում երկու ժողովուրդ ոչնչանում էր, իսկ հյուծված հաղթողին կսպասեր թարմ ուժեր կուտակած թուրք զինվորը, որը կազատեր այդ կենսական տարածքը բոլոր ոչ թուրքական տարրերից: Ինչպես նշեցինք, այս ծրագիրը դեռ իրականացման ընթացքում է, քանի որ բաղադրիչ տարրերից մեկը՝ քրդերը դեռ հիմնական տարր են կազմում Թուրքիայի արևելքում և շատ ու շատ արդի թուրք քաղաքական գործիչներ ափսոսում են, որ Աբդուլ Համիդի ծրագրերը մինչև վերջ չիրականացան:

«Ցեղասպանության մոլորակը» ցեղասպանության հարցերի մասին

Եթե երիտասարդ օսմանցիները փորձում էին կայսրությունը փլուզումից փրկել՝ նրա բոլոր հպատակներին միավորելով օսմանցի եզրույթի ներքո և կայսրության մեծ կաթսայում ձուլել քր-

դերին, արաբներին, հույներին, հայերին, ասորիներին, հրեաներին և այլոց՝ թուրքերի գլխավորությամբ՝ նրանց տալով Օսմանյան կայսրության երբեմնի փառապանծ դիրքը վերականգնելու ու եվրոպական ազատությունների հետ զուգադրելու տեսլականը, ապա Արյունոտ սուլթանն իր իսլամիզմով փորձ արեց աշխատել իրական քաղաքականության դաշտում և գեղեցիկ տեսլականով շահագրգռելու փոխարեն իր հպատակներին առաջարկեց ավելի ընկալելի ծրագիր: Կայսրությունն այդուհետ բաժանվեց երկու ճամբարի՝ մուսուլմաններ, որոնք միավորվում էին իսլամիզմի գաղափարախոսությամբ, և քրիստոնյաներ, որոնք մշտապես փորձում էին համագործակցել անհավատ «ցավուր» եվրոպացիների, մասնավորապես ռուսների հետ, և որոնք էին կայսրության բոլոր անկումների հիմնական պատճառը:

Արդուլ Համիդ II-ի դեմ առաջին կազմակերպված ընդդիմությունը ռազմական ակադեմիայում, բժշկական դպրոցում, վարչական դպրոցում ու աշխարհիկ իրավաբանական դպրոցում ուսանած էլիտայի նոր սերնդի կողմից եկավ, որոնցից շատերն իրենց համարում էին Երիտասարդ օսմանցիների շարժման հետևորդներ: Ռազմաբժշկական վարժարանի 4 ուսանողի կողմից հիմնադրված առաջին կազմակերպությունը՝ «Օսմանյան միության հասարակությունը», սկսվեց հետապնդվել սուլթանի կողմից: Նրա անդամներից մի մասը ձերբակալվեց, ոմանք փախան Փարիզ ու շարունակեցին այնտեղ իրենց գործունեությունը: Այս գործընթացի արդյունքում հիմնադրվեց «Միություն ու առաջադիմություն» կազմակերպությունը, որը Ֆրանսիայում ավելի հայտնի էր «Երիտասարդ թուրքեր» անվամբ:

Երիտթուրքական շարժումը, անկասկած, օսմանյան արդիականացման շարժման շարունակությունն էր: Նրանք ողջունում էին նախկինում արված բարեփոխումներն ու պահանջում, որ օսմանյան պետությունը հիմնի արևմտյան ինստիտուտներ: Ի տարբերություն Երիտասարդ օսմանցիների, նրանք չէին փորձում հաշտեցնել արևմտյան քաղաքակրթությունն ու գիտությունը իսլամի ու ավանդական արժեքների հետ: Նրանք աշխարհիկացրին դատական ու կրթական համակարգերը: Երիտթուրք գաղափարախոսները երազում էին մի շարք բարեփոխումների մասին, որոնք հետագայում բերվեցին Մուստաֆա Քեմալի կողմից:

Երիտթուրքերի կառավարման ժամանակահատվածում քաղաքական ու սոցիալական քննարկումները կենտրոնանում էին երեք մրցակից գաղափարախոսությունների շուրջ.

Ա. օսմանիզմ. Երիտասարդ օսմանցիների իդեալը, որով նրանք ցանկանում էին միավորել կայսրության տարբեր համայնքներին օսմանյան ազգի ներքո;

Բ. (պան)իսլամիզմ, որը փորձում էր ստեղծել համերաշխություն իսլամական համայնքի միջև;

Գ. (պան)թուրքիզմ, որը ձգտում էր միավորել բոլոր թյուրքական ժողովուրդներին օսմանյան դրոշի ներքո:

Գաղափարախոսական մյուս հոսանքը՝ արևմտականացումը, նշված երեքի տարբերակման չափանիշներից էր, այսինքն այդ երեք գաղափարախոսությունները տարբեր մոտեցումներ ունեին, թե ինչ աստիճան արևմտականացված պետք է լինի հասարակությունը: Թեև օսմանիզմն ու իսլամիզմը դեմ չէին արևմտյան գիտությունն ու տեխնոլոգիան յուրացնելու գաղափարին, փոխարենը նրանք ուզում էին դրանք համապատասխանեցնել

իսլամական սկզբունքներին ու պաշտպանել հասարակությանը վնասակար արևմտյան մշակույթից:

Ինչ վերաբերում է թուրքիզմին, ապա վերջինս գաղափարախոսության կարգավիճակ ստացավ երիտթուրքերի օրոք: Նախքան այդ կար օսմանյան հասարակության ինքնատարբերակման երկու ձև. օսմանցի և մուսուլման: Սակայն 19-րդ դարի վերջին շատ կրթված թուրքեր սկսեցին իրենց անվանել «թուրք»: Արաբական ազգայնականության աճը ու վախը, որ արաբները կարող են թուրքերի ձեռքից վերցնել իշխանության ղեկը կայսրությունում, ավելի արագացրեցին թուրքացման միտումը, ինչն իր հերթին հող նախապատրաստեց քեմալիզմի ծագման համար²³:

Այսպիսով, երիտթուրքերն ընտրեցին թուրքիզմն ու թուրքացման ուղին, ընդ որում նրանք ոչ թե բավարարվում էին «ինքնաթուրքացմամբ» ու բոլոր թուրքերի միավորմամբ, ինչպես ենթադրում է թուրքիզմը, այլ միավորելով այն օսմանիզմի հետ՝ նաև նպատակ էին ընտրել թուրքացնել կայսրության ողջ ազգաբնակչությանը: Ընդդիմախոսներին՝ հայերին, հույներին, ասորիներին, արաբներին, սպասվում էր ցեղասպանություն, կոտորած և ջարդ:

Թուրքիայի Հանրապետության հիմնադրումը և թուրքիզմի հաղթանակը

Պատմության այս կտրվածքում օսմանիզմի ու իսլամիզմի ինքնությունները պարտություն կրեցին, և թուրքիզմն իր արևմտականացման շեշտադրումով հաղթանակած դուրս եկավ և անվանվեց քեմալիզմ՝ Թուրքիայի նոր առաջնորդ Մուստաֆա Քեմալի անունով:

Քեմալիստներն առաջին հերթին հարձակվեցին իսլամական ու օսմանյան ինքնության ինստիտուտների վրա թե՛ պետական, թե՛ հասարակական մակարդակում: Քեմալիզմը կտրուկ կերպով փորձեց ստեղծել նոր՝ արևմտյան ինքնություն հասարակության համար, որպեսզի պետության ու հասարակության միջև անդունդը չխորանա:

Նախքան Քեմալի առաջ քաշած փոփոխություններին անդրադառնալը կարևոր ենք համարում ընդգծել, որ չնայած քեմալիզմը նպատակ ուներ Օսմանյան կայսրության արագընթաց ու ամբողջական ձևափոխում արդի ազգ-պետության և հերքում էր ամեն օսմանյանը, սակայն օսմանյան ու թուրքական քաղաքականությունների միջև կար շարունակականություն: Մուստաֆա Քեմալն արեց այն, ինչ կաներ երիտթուրքական մեկ այլ ղեկավար՝ նույն պայմաններում: Քեմալը կարողացավ կողմնորոշվել ու բավարարվել հենց այն նվազագույնով, որ կկարողանար յուրացնել առանց գրգռելու հզոր հարևաններին: Նրա կարևորությունը որպես երկրի առաջնորդ կայանում է նրանում, որ նա հասկացավ, որ հարատև հաղթանակների համար պետք է ոչ թե

²³ David Kushner, Self-Perception and Identity in Contemporary Turkey, *Journal of Contemporary History* 32 (1997): 219–233, p. 221;

նախկինի պես ձևական ու թղթի վրա արևմտականացման բարեփոխումներ, այլ խորքային վերափոխման գործընթաց, որը երկարատև կտրվածքով Թուրքիան կդարձնի տարածաշրջանի հզոր երկիր:

Մուստաֆա Քեմալը վերացրեց խալիֆայությունը, ապա փակվեցին իսլամական դատարանները, կրոնական դպրոցները, հիմնադրվեց աշխարհիկ կրթական համակարգ. այս ամենը մեծ հարված էր իսլամական աշխարհընկալմանը: Հաջորդ հարվածը «տեսանելի»²⁴ իսլամի դեմ էր: Ընդունվեց օրենքների մի խումբ, համաձայն որոնց արգելվում էր կրել կրոնական զգեստ, եթե կրողը հոգևորական չէ, իսկ պետծառայողներին պարտադրվում էր կրել արևմտյան բաճկոն ու գլխարկ: Նույն թվականի նոյեմբերին մեկ այլ օրենքով ֆես կրելը հայտարարվեց քրեական հանցագործություն, իսկ դեկտեմբերին մուսուլմանական հիջրայի օրացույցը փոխարինվեց գրիգորյան օրացույցով ու ընդունվեց Քրիստոսի ծննդյան թվարկությունը և կիրակին փոխարինեց ուրբաթին որպես հանգստյան օր: Ներդրվեց շվեյցարական քաղաքացիական օրենսգիրքը, իսկ սահմանադրության երկրորդ հոդվածը, որտեղ ասվում էր, թե «թուրքական պետության կրոնը իսլամն է», հանվեց, ինչով ավարտվեց Թուրքիայի ապաիսլամացման օրենսդրական փուլը: Արաբական գրերը փոխարինվեցին լատինատառ այբուբենով, ինչով կտրվեց կապը օսմանյան մշակույթի, ինչպես նաև արաբատառ կրոնական գրականության հետ²⁵:

²⁴ Տեսանելի իսլամ ասելիս ի նկատի ունենք կրոնական պատկանելությունն ի ցույց դնող առօրյա տեսքերը՝ գլխաշոր, կրոնական հագուստի այլ պարագաներ, Ղուրանից հատվածների ցուցադրում այս կամ այն մակերեսի վրա և այլն:

²⁵ Ülke İleri, Türkiye’de Toplumsal Değişimin Çalışma İlişkileri Üzerinden Erkileri, TÜHİS, Ankara, 2009, p. 147–148; Yücel Bozadağlıoğlu, Turkish Foreign Policy, pp. 47–50;

Այսպիսով, Մուստաֆա Քեմալն արեց ամեն ինչ, որպեսզի Թուրքիան դառնա աշխարհիկ երկիր, իսկ զինվորականությունն իր վրա վերցրեց Աթաթյուրքի գաղափարները պաշտպանելու առաքելությունը:

Մերօրյա Թուրքիայի վախերը

Թուրքիայի՝ որպես հանրապետություն հիմնադրման ժամանակահատվածը շատ կարևոր է նրանով, որ հանրապետության ծննդյան հետ մեկտեղ ի հայտ եկան 4 ֆոքիաներ՝ վախեր, որոնք մինչ այսօր հետապնդում են նրա առաջնորդներին ու հասարակությանը: Այդ վախերն իրար փոխլրացնում են, իրար հավասարակշռում են ու հենց ներկայացնում են Դավութօղլուի նախանշած «անվտանգության ու ժողովրդավարության միջև հավասարակշռություն» արտահայտության միջև թաքնված սպառնալիքները: Դրանք են, որ կիսում են հասարակությունը որոշ հարցերում ու միավորում որոշներում:

1. Իսլամիզմ,
2. Աշխարհիկություն,
3. Քրդական հարց,
4. Սևրի դաշնագիր:

Վերը թվարկված վախերի առաջին զույգը պառակտում է թուրք հասարակությանը երկու մասի: Նրանց մի մասը իսլամիստ է, մյուսը աշխարհիկ, և երկու ճամբարներն էլ պայքարում են իրար դեմ բոլոր հարթություններով: Ավելին, իսլամիստների համար մղձավանջ է պատկերացնել, որ թուրք հասարակությունը

նը գնում է դեպի ծայրահեղ արևմտականացում ու անտեսում ավանդական արժեքները: Իսկ աշխարհիկների համար անընդունելի է պատկերացնել, որ իսլամը մուսք կգործի կյանքի բոլոր ոլորտներ, ու Աթաթյուրքի բոլոր բարեփոխումները կկորցնեն իրենց ուժը:

Թուրք հասարակությանը մասնատումից փրկում է երրորդ վախը՝ քրդերը, որոնք մինչև այսօր էլ անկախություն են պահանջում: Հենց նրանց դեմ էլ միավորվելով՝ թուրք հասարակությունը առժամանակ մոռանում է իր տարբերությունների մասին: Թեև սկզբունքորեն իսլամիստները կողմ են քրդերին մշակութային ու նման այլ ազատություններ տալու հարցին, սակայն դա նրանք անում են՝ ելնելով օսմանիզմի գաղափարախոսությունից ու սկզբունքորեն պատրաստ չեն մի թիզ տարածք անգամ տալ քրդերին:

Տարածքային խնդիրը՝ Սևրի դաշնագրի վախը, թուրք հասարակության հաջորդ միավորիչ գործոնն է: Այս դեպքում Թուրքիան վերհիշում է «Եվրոպայի հիվանդ» երկրի իր կարգավիճակն ու միավորվում օտար ուժերի դեմ, որոնք «ցանկանում են մասնատել Թուրքիան ու բաժանել այն հարևաններին»:

Իսլամիզմն ընդդեմ աշխարհիկության

Աթաթյուրքը փորձեց ստիպել թուրք ժողովրդին մոռանալ իսլամը, թեև այն դարերով եղել է նրանց ինքնության հիմնական տարրը: Նույնիսկ մինչև 20-րդ դարի վերջերը «ո՞վ էս» հարցին թուրքերը նախ և առաջ պատասխանում էին «մուսուլման եմ» և ապա նոր անցնում էթնիկ պատկանելության բնորոշիչին: Բնականաբար, իսլամն այդքան դյուրին չէր մոռանալ:

Թեև Անկարայում, Ստամբուլում ու այլ մեծ քաղաքներում, որտեղ պետական մեխանիզմները կանոնավոր էին գործում, աշխարհիկության գործընթացը ընթանում էր ողջ թափով, սակայն Թուրքիան մեծամասամբ պահպանում էր իր մուսուլման դիմագիծը: Իսլամը սպասում էր ճնշման մի փոքր թուլացման, որպեսզի ջինի նման դուրս գա շշի միջից:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Արևմուտքի ու Արևելքի սահմանագծին հայտնված Թուրքիան ընտրության առջև էր: Խորհրդային Միությունը 1945թ. Անկարային նոտա հղեց, որտեղ նշվում էր, թե 1925թ. դեկտեմբերի 17-ի չեզոքության մասին պայմանագիրը չի համապատասխանում նոր ստեղծված պայմաններին ու չի երկարաձգվելու: Մասնավորապես, ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Վ. Մոլոտովը 1945թ. հունիսի 7-ին հանդիպեց Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ս. Սարփերի հետ և հստակորեն նշեց, որ Խորհրդային Միությունը ցանկանում է վերանայել 1921թ. Կարսի պայմանագրում տեղ գտած անարդարություններն ու վերադարձնել Թուրքիային՝ այդ պայմանագրով տրված տարածքները²⁶: Ի. Ստալինի՝ Հայաստանի հողերի մի մասը վերադարձնելու պահանջը Թուրքիայի նախագահ Ի. Ինյոնյուին երկար մտածելու տեղիք չտվեց, ու Անկարան հայտնվեց Արևմտյան ճամբարում²⁷:

Արևմուտքն սկսեց օգնություն տրամադրել Թուրքիային, սակայն նաև թելադրեց իր բարեփոխումների պայմանները, որոնցից

²⁶ Այս խնդրի մասին առավել մանրամասն տես՝ *Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946гг.* Ред. А. Киракосян, Ереван, 2010, 332 стр.

²⁷ Taner Timur, «Türkiye'de Çok Partili Siyasal Hayata Geçiş». İletişim Yayınları, İstanbul, 1991, s. 50.

մեկն էլ բազմակուսակցական համակարգն էր ու անցումը ժողովրդավարությանը: Աթաթյուրքի հիմնադրած ժողովրդահանրապետական կուսակցության կողքին սկսեցին ի հայտ գալ նոր կուսակցություններ: Առաջին բազմակուսակցական ընտրությունները տեղի ունեցան 1946թ. հուլիսին, որտեղ ԺՀԿ-ն հաղթանակ տարավ: Սակայն հաջորդ՝ 1950թ. ընտրություններում հաղթանակ տարավ լիբերալ Դեմոկրատական կուսակցությունը: Սա ցույց տվեց, որ որքան էլ քեմալիզմը իշխող գաղափարախոսություն էր, այն փոքրամասնության գաղափարախոսություն էր: Լիբերալները համեմատաբար թուլացրեցին իսլամի «շղթաները», որը ներառեց արաբերենով աղոթքի կանչի թույլատվություն, ռադիոյով Ղուրանի հեռարձակում, կրոնի ուսուցման դասընթացների վերականգնում, մզկիթների համար սպասավորների պատրաստման դպրոցների վերականգնում, բուհերում աստվածաբանության ֆակուլտետների հիմնում և այլն: ԴԿ-ի կառավարման տասնամյակում տեղի ունեցած կրոնական խորքային գործընթացները դարձան համակարգային՝ ցույց տալով, որ բազմակուսակցական մրցակցային քաղաքականության մեջ կրոնը դարձավ քաղաքական գործոն²⁸:

Սակայն բանակը զգոն կերպով հետևում էր այս բոլոր զարգացումներին: Ի վերջո 1960թ. մայիսի 27-ին տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում, որի արդյունքում երկիրը վերադարձվեց ժողովրդահանրապետական կուսակցության կառավարմանը: Ռազմական հեղաշրջումներ տեղի ունեցան նաև 1971թ. և 1980թ.:

²⁸ Վահրամ Տեր-Մաթևոսյան, Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, Երևան, 2008թ., էջ 37;

1960-70-ական թթ. Թուրքիայում բավականին լայն տարածում էր ստացել սոցիալիզմն ու դրան հարող շարժումները: Մա «կարմիր» վտանգ էր, հատկապես ՆԱՏՕ-ի անդամ երկրի համար և պետք էր ժողովրդի ուշադրությունը շեղել: Այս կապակցությամբ 1980-ականների սկզբին որոշում կայացվեց Թուրքիայում թույլատրել մեղմ իսլամը, որպեսզի ժողովուրդը ստանա երկար արգելված պտուղը ու իր ուշադրությունը թեքի կոմունիզմից: Հենց այս ժամանակ նուրջուական ու դրանց միջից հատկապես գյուլենական շարժումն²⁹ սկսեց թափ հավաքել, ուժեղացան իսլամիստական քաղաքական ուժերը, վերաբացվեցին իսլամական դպրոցները: Զինվորականությունը, գնալով այս քայլի, թերևս կարծում էր, որ ինչպես և մի քանի տասնամյակ առաջ կկարողանա հետագայում հեշտությամբ հետքայլ կատարել, սակայն չէր գիտակցում, որ աշխարհն այլևս փոխվել է, ու 1980-90-ականներին գործընթացներն այնքան արագ են տեղի ունենում, հատկապես, երբ դրանց հավելում են տնտեսական ազատությունները:

Թուրքութ Օզալի ղեկավարությամբ Թուրքիայի տնտեսությունը ազատականացվեց ու դրվեցին արտահանմանն ուղղված տնտեսության հիմքերը: Սա բերեց նոր, դինամիկ փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը՝ հիմնականում ավանդապես պահպանողական անատոլիական քաղաքներում:

²⁹ Այս շարժման մասին ավելի մանրամասն տես գլուխ 4:

Իսլամիստական Բարօրություն կուսակցությունը հաջողություններ ունեցավ 1994թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ու ստացավ Ստամբուլի ու Անկարայի քաղաքապետերի աթոռները: Իսկ խորհրդարանական ընտրություններում Բարօրություն կուսակցությունն ավելացրեց իր քվեների քանակը և 1987թ. 7,2 տոկոսից հասավ 21,4 տոկոսի 1995թ. ու դարձավ առաջատար կուսակցություն: 1996թ. Բարօրություն կուսակցություն–Ճշմարիտ ուղի կուսակցություն կռալիցիային արդյունքում Ն. Էրբաքանը դարձավ վարչապետ: Իսլամիստները կրկին սկսեցին խոսել երկրի վարչակարգի փոփոխության մասին, իսլամին ավելի շատ ազատություններ տրամադրելու մասին, ինչի արդյունքում զինվորականությունն իրագործեց թավշյա հեղաշրջում 1997թ. փետրվարի 28–ին, և արդյունքում Էրբաքանը հրաժարական տվեց 1997թ. հունիսին: Յոթ ամիս անց՝ 1998թ. հունվարին, Մահմանադրական դատարանը փակեց Բարօրություն կուսակցությունը:

Թուրգութ Օզալ

Ծնվել է 1927թ. Մալաթիայում: 1950թ. ավարտել է Ստամբուլի տեխնիկական համալսարանը՝ էլեկտրական ինժեների մասնագիտությամբ: 1952թ. մեկնելով ԱՄՆ՝ ստացել է տնտեսագիտական կրթություն: Թուրքիա վերադառնալուց հետո նշանակվել է Էլեկտրական էներգետիկայի ուսումնասիրությունների վարչության փոխտնօրեն:

1961–1962թթ. ծառայել է զինված ուժերում որպես Ազգային պաշտպանության նախարարության գիտական խորհրդատվության խորհրդի անդամ ու ներդրում է ունեցել Պետական պլանավորման կազմակերպության հիմնադրման գործում: Նույն ընթացքում դասավանդել է Մերձավորարևելյան տեխնիկական համալսարանում (Անկարայի լավագույն համալսարաններից է):

Որոշ ժամանակ աշխատելով որպես վարչապետի աշխատակազմի տեխնիկական մասնագետների խորհրդի անդամ՝ 1967–1971թթ. նշանակվել է Պետական պլանավորման կազմակերպությունում տարբեր ղեկավար պաշտոնների: 1971–1973թթ. Համաշխարհային բանկում եղել է խորհրդական: Թուրքիա վերադառնալուց հետո աշխատել է տարբեր արդյունաբերական կառույցներում, իսկ 1979թ. վերջերին նշանակվել է վարչապետի խորհրդական (Başbakanlık Müsteşarı):

1980թ. սեպտեմբերի 12–ի ռազմական հեղաշրջումից հետո կառավարությունում նշանակվել է տնտեսության ոլորտը համակարգող փոխվարչապետ: 1982թ. հրաժարական է տվել, իսկ մեկ տարի անց հիմնադրել է Մայր Հայրենիք կուսակցությունը: Նույն 1983թ. խորհրդարանական ընտրություններում հաղթանակ է տարել ու դարձել Թուրքիայի 19–րդ վարչապետ: 1987թ. խորհրդարանական ընտրություններում նույնպես նրա կուսակցությունը հաղթանակ է տանում

ու Թուրգութ Օզալը կրկին դառնում է Թուրքիայի վարչապետ:

1989թ. հոկտեմբերի 31-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի կողմից Օզալն ընտրվում է Թուրքիայի հանրապետության ութերորդ նախագահ:

1993թ. ապրիլի 17-ին Օզալը հանկարծամահ է լինում: Նրա մահվան հանգամանքները միջև այսօր էլ դեռ հայտնի չեն:

<http://www.biyografi.info/kisi/turgut-ozal>

Սակայն գործընթացն արդեն խորքային փոփոխություններ էր բերել Թուրքիայի քաղաքական կյանքում: 1980-90-ական թվականներին վարչապետ, իսկ ապա նաև նախագահ Թուրգութ Օզալի ղեկավարությամբ Թուրքիայի տնտեսությունը ազատականացվեց ու դրվեցին արտահանմանն ուղված տնտեսության հիմքերը: Սա բերեց նոր, դինամիկ փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը՝ հիմնականում ավանդապես պահպանողական անատոլիական քաղաքներում: Հենց հասարակության այս սեգմենտն է և մոբիլիզացվել Գյուլենի շարժման կողմից: Նոր ծնված ձեռնարկատերերը՝ Անատոլիական վագրերը, պատրաստ էին փոխել առկա տնտեսական ռեժիմն ու ընդհանրապես քաղաքական դաշտը, ինչը և արեցին ԱԶԿ-ի ձեռքերով³⁰:

³⁰ Bulent Aras and Omer Caha, Fethullah Gulen and his Liberal «Turkish Islam» Movement, Middle East Review of International Affairs, Vol. 4, No. 4 (December 2000), p. 38-39;

ԲԿ-ի փակումից հետո կուսակցության անդամները հիմնեցին Ֆազիլեթ (Առաքինություն) կուսակցությունը: Այս կուսակցությունում ի հայտ եկան տարաձայնություններ Ազգային կարծիքի հին սերնդի՝ Էրբաքանի առաջնորդությամբ ու նոր սերնդի միջև: Նոր սերունդի ղեկավարներն էին երեք անձինք՝ Ռեջեփ Թայիփ Էրդողան, Աբդուլլահ Գյուլ ու Բյուլենթ Արընչ: 2001թ. Սահմանադրական դատարանը փակեց Առաքինություն կուսակցությունը, քանի որ այն պաշտպանում էր գլխաշորեր կրելու ազատությունը, այսինքն հակաաշխարհիկ էր: Կուսակցության փակումից հետո նրա անդամները, ովքեր գաղափարապես հետևում էին Էրբաքանին³¹, հիմնեցին նոր կուսակցություն՝ Սաադեթ (Երջանկություն) կուսակցությունը, մինչդեռ Էրդողանը, Գյուլն ու Արընչը հրաժարվեցին միանալ նրանց ու հիմնեցին առանձին կուսակցություն՝ Արդարություն ու զարգացումը: ԵԿ-ն ուներ իսլամիստական ու հակաեվրոպական քաղաքական կուրս: ԱԶԿ-ն, ընդհակառակը, հրաժարվում էր իսլամիստական պիտակավորումից ու կողմ էր Թուրքիայի ԵՄ անդամակցությանը:

2002թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական ընտրություններին ԵԿ-ն մարզինալացվեց՝ ստանալով 2,5 տոկոս քվե, իսկ ԱԶԿ-ն Թուրքիայի քաղաքական պատմության մեջ բացեց նոր էջ՝ ստանալով 34,3 տոկոս քվե ու խորհրդարանի երկու երրորդը: Էրդողանը, Գյուլն ու Արընչը բաժանեցին իրար մեջ Թուրքիայի կարևորագույն պաշտոնները:

³¹ Էրբաքանն այդ ժամանակ զրկված էր քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից 1998թ. հունվարին ԲԿ-ն փակելու հետ զուգընթաց, Էրբաքանին արգելվեց հինգ տարի զբաղվել քաղաքականությամբ՝ տես. Վ.Տեր-Մաթևոսյան, Բոլամբ Թուրքիայի... էջ 169;

Իսլամիստների այս աննախադեպ հաղթանակը, ինչպես նաև դրա շարունակական բնույթը, երբ նրանք հաղթանակ տարան դրան հաջորդող տեղական ինքնակառավարման ընտրություններում, հաջորդ խորհրդարանական ընտրություններում ու նույնիսկ հասան երկրի նախագահի պաշտոնին, սարսափ ու հարցականներ առաջացրեցին քեմալիստ աշխարհիկների մոտ: Վերջիններս պնդում են, որ Էրդոհանն ու նրա կողմնակիցները ունեն գաղտնի օրակարգ, որով Թուրքիան տանելու են դեպի շարիաթական իսլամիստական երկիր՝ նման Իրանին կամ Մաուդյան Արաբիային:

Սակայն զինվորականությունն այլևս թվում է, թե անգոր է իսլամիստների դեմ: Էրդոհանը նախաձեռնեց մի շարք դատական գործեր զինվորականության դեմ, ավելին 2010թ. սահմանադրական բարեփոխումներով իսլամիստները նաև մեծ հարված հասցրեցին դատական իշխանությանն ու էապես սահմանափակեցին նրանց ազդեցությունը քաղաքական դաշտում:

Այս ամենն ավելի ու ավելի է ուժեղացնում աշխարհիկների ֆոբիան համատարած իսլամիզմի գաղտնի օրակարգի վերաբերյալ:

Բարեպաշտ մուսուլմաններն իրենց հերթին, իսկ նրանց թիվը մեծապես շատացել է վերջին տարիներին, լավ հիշում են տարիները, երբ գլխաշորով կնոջը հիվանդանոց չէին ընդունում, և պատրաստ են անել ամեն ինչ՝ դա չկրկնելու համար:

Քրդական խնդիր

Քրդերը կազմում են Թուրքիայի բնակչության շուրջ 20 տոկոսը, որոնց մեծ մասը կոմպակտ բնակվում է երկրի հարավ-ար-

ևելքում, իսկ Ստամբուլը համարվում է քրդական ամենամեծ քաղաքը՝ իր բազամաքանակ քուրդ բնակչության պատճառով: Օսմանյան կայսրության հաղթանակների, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության կերտման գործում ունենալով հավասար ներդրում՝ քրդերն ակնկալում էին եթե ոչ անկախություն, ապա գոնե հավասար իրավունքներ, սակայն փոխարենը թուրքերը փորձ կատարեցին ձուլել նրանց ու զրկեցին բոլոր իրավունքներից: Մերձավոր Արևելքում տեղի ունեցած զարգացումների արդյունքում քրդերը դարձել են հանգուցային տարր, ինչն ազդում է նաև թուրքաբնակ քրդերի ինքնագիտակցության վրա: Անկարայի ամենառեալ վախերից մեկն է քրդական պետության ստեղծումը Թուրքիայի հարևանությամբ կամ էլ նույնիսկ նրա տարածքների հաշվին:

Քրդական հարցի ծագումը

Երկիրը օսմանիզմից ու իսլամիզմից մաքրելուց բացի Աթաթյուրքը նաև զարգացրեց թուրքիզմի քաղաքականությունը: Հույները, հայերն ու արաբները այլևս երկրի սահմաններից դուրս էին ու մաքուր թուրքական պետության համար խոչընդոտ չէին, սակայն նրանց դեմ պայքարում մեծապես օգնած քրդերին ոչ մի կերպ չէր ստացվում ձուլել:

Օսմանցիների պարտությունը 1918թ., ինչպես նաև 1920թ. Սևրի պայմանագրի ստորագրումը քրդերի համար շրջադարձային նշանակություն ունեցավ: Սևրի դաշնագիրը ոչ միայն հայերին էր խոստանում պետականություն իրենց հինավուրց տարածքների մի մասի վրա, այլև «տալիս էր ժամանակավոր ինքնավարություն Թուրքիայի՝ հիմնականում քրդերով բնակեցված տարածքներ-

րում՝ լիակատար անկախության տեսլականով, եթե այդ տարածքների բնակչությունն այդպես ցանկանա»³²: Դա տեղի չունեցավ, իսկ Մուստաֆա Քեմալն կարողացավ քրդերին միավորել իր ուժերի հետ: Այդ ընթացքում Քեմալը շատ հաճախ էր շեշտում թուրքերի ու քրդերի հավասարության, նրանց պայքարի ընդհանրության ու երկու ժողովուրդների եղբայրության մասին³³: 1920թ. ապրիլին թուրքական խորհրդարանի առաջին գումարման ժամանակ Մուստաֆա Քեմալը հայտարարեց, թե խորհրդարանը կազմված էր ոչ թե թուրքերի, քրդերի, չերքեզների ու լազերի ներկայացուցիչներից, այլ միավորված իսլամական համայնքի ներկայացուցիչներից: Քեմալը նույնիսկ իր մի շարք ճառերում ու լրագրողների հետ հարցազրույցներում նշել է, թե քրդերի հոծ բնակչությամբ տարածքներում նրանց ինքնավարություն է տրվելու³⁴: Քեմալը մարդկային ռեուրսների խիստ կարիք ուներ ու չէր կարող օտարել իրենցից քրդերին:

Քրդերը հույս ունեին, որ հավասարապես մասնակցելով հանրապետության կերտմանն ուղղված պատերազմներին, թուրքերի հետ միասին պետք է հիմնեն երկլեզու ու երկազգ պետություն: Սակայն նրանք շուտով հիասթափվեցին: Պետությունը ցույց տվեց իր զուտ թուրքական բնույթը: Աթաթյուրքի զինակից Իսմեթ Ինյունյուն, ով հաջորդեց նրան որպես երկրի նախագահ, 1925թ. հստակորեն ամփոփեց պաշտոնական դիրքորոշումը հետևյալ կերպ. «Մենք ազգայնականներ ենք, և ազգայնականու-

թյունը մեր միասնականության միակ գործոնն է: Չկա մի տարր, որ կարողանա ազդել թուրք մեծամասնության վրա: Մենք պետք է թուրքացնենք մեր երկրի բնակչությանն ամեն գնով, և վերացնենք նրանց, ովքեր ընդդիմանում են թուրքերին կամ թուրքիզմին»³⁵:

1924թ. սահմանադրությունում «քաղաքացի» եզրը հավասարեցված էր «թուրք» եզրին: Օրինակ, նշվում էր, որ խորհրդարանի անդամ լինելու համար պետք էր թուրք լինել: Իհարկե, քուրդը կարող էր համարվել «թուրք», սակայն եթե միայն մերժեր իր ազգային ինքնությունը: Պարզ է, որ քեմալիստ առաջնորդներն արդեն այդ ժամանակ ընկալում էին չթուրքացված քրդերին որպես երկրի ամբողջականության ներուճակ սպառնալիք:

Հանրապետության պատմությունում Շեյխ Սաիդի ապստամբությունն առաջինն էր: Այն բավականին անկազմակերպ էր, ապստամբները ժամանակ չունեցան միավորել իրենց բոլոր ուժերը, իսկ ապստամբությունը ճնշվեց Անկարայի կողմից մեծ դաժանությամբ: Նրա առաջնորդն ու ակտիվ մասնակիցների մեծ մասը դատապարտվեցին մահվան՝ Անկախության դատարանների կողմից, որոնք հետագայում դարձան այդ տարածքներում ճնշումների կարևորագույն գործիքներից մեկը³⁶: Սակայն այս ապստամբությունը դեռևս զուտ քուրդ ազգայնական չէր, քանի որ մեծավ մասամբ ուներ նաև կրոնական ենթատեքստ: Սակայն արդեն 1930թ. Ադրի (Արարատի) ու 1937–38թթ. Դերսիմի ապս-

³² David McDowall, «The Kurdish Question: A Historical Review», in *The Kurds: A Contemporary Overview*, ed. Philip Kreyenbroek and Stefan Sperl (London: Routledge, 1992), p. 17;

³³ Cumhur Keskin, «Türkiye'nin Kürt Politikası ve Resmi İdeoloji», in *Türkiye'nin Kürt Sorunu*, ed. Seyfettin Gürsel et al. (Istanbul: TÜSES, 1996), 52–54.

³⁴ Mustafa Kemal, *Eskisehir–İzmit Konusmaları* (1923) (Ankara: Kaynak Yayınları, 1993), 104–5;

³⁵ Bilal Şimşir, *İngiliz Belgeleriyle Türkiye'de «Kürt Sorunu» (1924–1938)* (Ankara: Türk Tarih Kurumu Basımevi, 1991), s. 58;

³⁶ Շեյխ Սաիդի ապստամբության մասին ավելի մանրամաս տես՝ Robert Olson, *The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellion, 1880–1925* (Austin: University of Texas Press, 1989).

տամբությունները հստակորեն քրդական էին, թեև աշխարհագրորեն սահմանափակ էին ու լայն զանգվածներ չէին ընդգրկում:

Թուրքիայում սկսվեցին քրդական տարրի ճնշումներն ու ձուլման քաղաքականությունը: Թերթերը դադարեցին օգտագործել «քուրդ» բառը: Գիտական շրջանակներն ապացուցում էին, որ դրանք լեռնային թուրքեր են, իսկ «քուրդ» բառն արհեստածին է: Պետությունն ընդունում էր հատուկ օրենքներ, որով քրդաբնակ տարածքներից մարդկանց գյուղերով բռնի տեղափոխում էին Թուրքիայի արևմտյան հատվածներ, որպեսզի ավելի հեշտությամբ ձուլվեն: Արգելվում էր նույնիսկ խոսել քրդերեն ու երեխաներին անվանակոչել քրդական անուններով:

Թուրքիայի իշխանություններն ամեն հարմար առիթ օգտագործում էին քրդերի պայքարը լռեցնելու ու նրանց ձուլելու համար: 1960թ. ռազմական հեղաշրջումը զինվորականներն օգտագործեցին ևս մեկ հարված հասցնելու քրդական տարրին. ձերբակալվեց 484 քուրդ, իսկ 55 աղա արտաքսվեց երկրի արևմտյան հատվածներ³⁷: Ավելին, 1960թ. մայիսի հեղաշրջման վարչակարգը որոշում կայացրեց անվանափոխել քրդական գյուղերը, ինչպես նախկինում դա արվել էր հայկական գյուղերի հետ: Ուստի, գյուղերի մեծ մասը, որոնց հայերեն անվանումներն անվանափոխվել էին քրդերենի, ենթարկվեցին կրկնակի անվանափոխման՝ այս անգամ թուրքերենի:

³⁷ Turkey's Kurdish question / Henri J. Barkey and Graham E. Fuller., 1998 by Carnegie Corporation of New York, p. 14

Այստեղ կարիք կա պարզաբանելու, թե ինչու ենք հատուկ ընդգծել աղաների արտաքսման գործոնը: Քրդերը մինչև այսօր Թուրքիայի արևելքում ցեղերով են ապրում և աղաների ինստիտուտն այնտեղ շատ կարևոր է: Եթե աղան այս կամ այն պատճառով տեղափոխվում է այլ վայր, ապա նրան հետևում են բոլոր հետևորդները՝ կլինի դա մեկ կամ մի քանի գյուղ: Ուստի 55 աղան միայն իրենք չէին իրենց ընտանիքներով, այլ քրդերի բավականին ստվար զանգված:

Սակայն պետք է նշել, որ 1960թ. սահմանադրությունն ամենաազատականն է Թուրքիայի ողջ պատմության ընթացքում: Այն թույլ էր տալիս արհմիությունների ու ուսանողական կազմակերպությունների ստեղծումը: Սա թույլ տվեց քրդական տարրին քաղաքականապես պարզվել և օգտագործել իր էներգիան այլ նպատակով: 1960-ականները Թուրքիայում ձախ շարժման զարթոնքի շրջանն էր, ու շատ քրդեր հայտնվեցին ձախերի շարքերում, որտեղ նրանք փորձում էին գտնել իրենց խնդիրների լուծումները, որը նախ և առաջ դրանց բարձրաձայնումն էր: Ստեղծվեցին բազմաթիվ քրդական ձախ խմբեր, որոնցից ամենակարևորը «Արևելյան հեղափոխական մշակութային օջախներն» էր (Devrimci Doğu Kültür Ocakları), որը ստեղծվելով 1969թ. ցատկահարթակ հանդիսացավ շատ քրդական շարժումների համար՝ ներառյալ ՔԲԿ-ն՝ Քրդական բանվորական կուսակցությունը (PKK):

1970-ականների վերջերին Թուրքիան հասարակական-քաղաքական ճգնաժամի մեջ էր: Աջ ու ձախ ուժերը ոչնչացնում էին միմյանց: Երկրում տիրում էր քաոսային միջավայր: 1980թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը նպատակ ուներ ոչ միայն քաղաքական դաշտը մաքրել ձախ ու աջ ընդդիմադիր շարժումներից, այլև «անընդունելի» բոլոր քաղաքական տարրերից, ինչն ավելի արագացրեց քրդական քաղաքական ինքնության ձևավորման գործընթացը:

1984թ.³⁸ ՔԲԿ-ն ասպարեզ է գալիս որպես քրդական անկախության համար պայքարող հեղափոխական կազմակերպություն: Սա քրդական ազգային շարժման համար կարևոր նշանոց է, որով սկսվում է Թուրքիայի արդի պատմության մեջ քրդական ամենաերկարատև ապստամբությունը: Չի կարելի պնդել, որ Թուրքիայում քրդական խնդրի վերափոխումը միմիայն ՔԲԿ-ի գործունեության արդյունք է՝ իրան-իրաքյան պատերազմն (1980-1988թթ.) ու Օնցի պատերազմները ՔԲԿ-ն քաղաքական ու ռազմական գործողությունների դաշտ տրամադրեցին: Սակայն կազմակերպությունը հստակորեն կարողացավ օգտվել աշխարհաքաղաքական փոփոխություններից: Այս պահին կարևոր չէ կազմակերպության գոյատևումն ապագայում, էականն այն է, որ ՔԲԿ-ն կարողացավ փոխել Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականությունը:

³⁸ ՔԲԿ-ն հիմնադրվել է 1978թ., սկսել է իր սահմանափակ գործողությունները Թուրքիայի հարավ-արևելքում՝ հիմնականում որպես թիրախ ընտրելով քուրդ աղաներին և ձեռք բերելով թշվառների շահերը պաշտպանող խմբի անուն: Ապա պատասպարվել է Միքիայում ու Լիբանանում՝ այնտեղ մարզվելով ու կապեր հաստատելով պաղեստինյան կազմակերպությունների հետ:

ՔԲԿ-ի ահաբեկչական գործունեությունը քրդական հարցը բերեց միջազգային հարթակ ու այլևս այդքան էլ հեշտ չէր կոծկել այն: Թեև Անկարայի ճնշման տակ կազմակերպությունը հայտարարվեց ահաբեկչական, սակայն քրդաբնակ տարածքներում մարդու իրավունքների ոտնահարման դեպքերն այդուհետ միջազգային հանրության ուշադրության տակ հայտնվեցին:

1999թ. փետրվարի ՔԲԿ-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի ձերբակալումը նշանավորեց Թուրքիայում քրդական պայքարի նոր փուլը. այն դարձավ ավելի քաղաքական: Ձերբակալումից որոշ ժամանակ անց Թուրքիայում խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարան իսլամիստները, ովքեր քրդական հարցին ունեն յուրովի մոտեցում: Արդարություն ու զարգացում կուսակցությունը, ինչպես նաև Գյուլենական շարժումը խնդրին նայում են օսմանիզմի տեսանկյունից և քրդերին դիտարկում են որպես հավատակից: Էրդողանն, անձամբ ունենալով վրացական արմատներ, հաճախ է խոսում Թուրքիայի՝ «խճանկար երկրի» լինելուց՝ ակնարկելով նրա բազմազգ լինելը: Էրդողանի օրոք քրդերը ստացան մշակութային շատ իրավունքներ՝ ընդհուպ մինչև սեփական լեզվով դասընթացներ ու քրդական անուններ կրելու իրավունք: Ավելին, Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում կա քրդական կուսակցություն, ինչը բավականին թուլացնում է քաղաքական լարվածությունը ու չներկայացված լինելու զգացումը երկրի քրդաբնակ շրջաններում: Բնականաբար, սա արվում է թե՛ քաղաքական նպատակներով՝ ինչի շնորհիվ ԱԶԿ-ն շատ քվեներ է ստանում այս տարածքներից, թե՛ ռազմավարական նկատառումներով՝ որով քանդվում են ՔԲԿ-ի մարտական թևի հենասյուները: Սակայն մինևույն ժամանակ պետք է նշել, որ

ամեն ինչ չէ, որ հարթ է անցնում: Օրինակ, 2009թ. հայտարարված քրդական նախաձեռնությունը, որից շատ բան էին ակնկալում, տապալվեց. այստեղ մեղքի իր մեծ բաժինն ուներ հենց ՔԲԿ-ն, որին այս պահին ձեռնադրելու չի քրդական հարցի լուծման դափնիները տալ էրդոդանին, նույնիսկ եթե այդ լուծումը լիարժեք չէ: Դեռ 2009թ.-ի վերջին փակվեց քրդական խորհրդարանական կուսակցությունը նրանց որոշ դեկավարների կողմից ՔԲԿ վերաբերյալ դրվատական երանգներ պարունակող ելույթների պատճառով³⁹: Քրդերենի գործածումը որպես պաշտոնական լեզու, օրինակ խանութի ցուցանակների վրա կամ ԹԱՄԺ-ում ելույթ ունենալիս, արգելված է: 2010 դեկտեմբերին Թուրքիայում քրդերը նախաձեռնեցին քննարկումներ՝ երկլեզու համակարգի անցման վերաբերյալ⁴⁰, ինչից հետո անմիջապես պատասխան ստացան քաղաքական առաջնորդներից և զինվորականներից: Գլխավոր Սպայակույտն անմիջապես տարածեց հայտարարություն, որով այս քայլը համեմատում էր տարածքային անձեռնմխելիությունը խախտելու ու Թուրքիան մասնատելու փորձի հետ.

«Մահմանադրության՝ փոփոխման ենթակա չհանդիսացող հողվածների շարքում է երրորդ հողվածը, որտեղ ասվում է. «Թուրքիա պետությունը, երկիրն ու ազգը մասնատման ենթակա չեն: Լեզուն թուրքերենն է»: Լեզվի, մշակույթի ու երկրի միասնությունը ազգապահպանման հիմնական հատկանիշներն են: Պատմությունը շատ տխուր դեպքերի օրինակներ է բերել, երբ լեզվի միասնությունը խաթարվել է: Մենք

³⁹ DTP neden kapatıldı? <http://haber.ok.net/dtp-neden-kapatildi/>;

⁴⁰ Göksel Bozkurt, Bilingualism, Hürriyet Daily News, December 18–19, 2010, p.2.

անհանգստությամբ հետևում ենք, թե ինչպես վերջին օրերին մեր լեզվի վերաբերյալ հասարակությունում սկզբի առած քննարկումները արմատապես փորձում են խաթարել մեր հանրապետության հիմնադրման փիլիսոփայությունը: Թուրքիայի զինված ուժերը շարունակելու են պաշտպանել թուրք ազգի անձեռնմխելիությունը, երկրի ամբողջականությունը, ազգային, միասնական ու աշխարհիկ պետությունը»⁴¹:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ քրդական հարցը դեռ լուրջ ֆոբիա է թուրքական հասարակությունում, քանի որ նույնիսկ քրդերեն լեզվի գործածումն անմիջապես ենթադրում է Թուրքիայի մասնատում, տարածքային ամբողջականության խախտում, թուրք ինքնության երկատում:

Սերաֆոբիա

Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականությունը հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթ լինել երկրի հասարակության հոգեբանական մի ասպեկտի հետ, որն սկսել է շատ վաղուց՝ օսմանյան առաջին պարտություններից ու երբեմնի փառահեղ կայսրության անկումից, սակայն իր վերջնական տեսքն է ստացել ամենահուժկու հարվածից հետո: Դա Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքներն ամրագրող փուլերից մեկը հանդիսացող Սերի դաշնագիրն էր, ինչից էլ մնաց թուրք հասարակության այդ հոգեբանական բարդույթի անունը՝ սերաֆոբիա՝ վախ Սերից: Այդ մոտեցման համաձայն՝ Թուրքիան շրջա-

⁴¹ Askerler konuştu, siyaset sustu, Radikal, 18 Aralık 2010;

պատված է թշնամիներով, որոնք մշտապես ձգտում են համագործակցել մյուս թշնամիների հետ ու կազմաքանդել Թուրքիան, բաժանել տարածքներն իրար մեջ:

Այսպես, Հիքմեթ Սամի Թյուրքը, նախկինում Թուրքիայի պաշտպանության նախարար, 1999թ. հայտարարել է.

«Աշխարհագրական ճակատագիրը Թուրքիային տեղադրել է հետսառըպատերազմյան անորոշության «Բերմուդյան եռանկյունու» էպիկենտրոնում, ուր մեզ շրջապատել են Բալկանները, Կովկասն ու Մերձավոր Արևելքը»⁴²:

Ավելի հստակ է արտահայտվել հայտնի դիվանագետ Շյուքրյու Էլեքդաղը. «Թուրքիան շրջափակված է չարի օղակի մեջ»⁴³:

Սերի հանդեպ վախը հաճախ շատ է օգնում շատ քաղաքական գործիչների արդարանալ ու մանիպուլացնել հասարակությանը, ուստի «դավադրական» տեսությունները Թուրքիայում շատ են: Այսպես, նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելը մեղադրում էր Եվրոպային, որ քրդերի իրավունքների հարցում միջամտելիս Արևմուտքը ցանկանում է

«...առաջ բերել Սերի դաշնագիրը, որպեսզի հիմնադրվի քրդական պետություն տարածաշրջանում...»⁴⁴:

⁴² Mufti, Malik (1998), «Daring and Caution in Turkish Foreign Policy,» Middle East Journal, 52/1, p. 34.

⁴³ Ibid., p. 34.

⁴⁴ Gözen, Ramazan (1997), «Two Processes in Turkish Foreign Policy: Intergration and Isolation,» Foreign Policy (Ankara), 21/1-2, p. 119.

Քրդական հարցի ծագումը բացատրելու համար մշտապես առաջ է բերվում քրդերի մի փոքր մասի դրսից ֆինանսավորելու ու պայքարի միջոցով Թուրքիան մասնատելու արտաքին ուժերի նենգ ծրագրերի մասին տեսությունը:

Ինչպես արդեն նշվել է, որքան էլ Մուստաֆա Քեմալը փորձում էր կտրվել օսմանյան ժառանգությունից, միննույն է, նա գործում էր կայսրության արտաքին քաղաքականության տրամաբանության մեջ: Ինչպես և վաղ օսմանյան բարեփոխումները Սելիմ Երրորդի (1789-1807թթ.) ու Մահմուդ Երկրորդի (1808-1839թթ.) օրոք, ինչպես նաև դրան հաջորդած Թանզիմաթի բարեփոխումները (1839-1878թթ.), 20-րդ դարի 20-30-ական թվականների քեմալիստական բարեփոխումները նույնպես վերևից ներքև արդիականություն, արևմտյան մշակույթ պարտադրելու միջոցով էին ի կատար ածվում: Օսմանյան բարեփոխումների գործընթացի հիմքում տնտեսապես ինքնավստահ ու քաղաքական մասնակցություն պահանջող բուրժուազիան չէր: Ավելի շատ այն առաջ էր մղվում օսմանյան դիվանի, բանակի և բյուրոկրատիայի վերին էշելոնների շահերից ելնելով: Վերջիններիս միավորում էր մեկ բան՝ օսմանյան պետության արտաքին ու ներքին անվտանգությունը: Ամեն ինչ՝ բանակի վերափոխումից մինչև գիտության զարգացում, արվում էր հանուն կայսրության ամբողջականության պահպանման ու ռազմաբյուրոկրատական սերուցքի կողմից վերահսկողության պահպանման:

Իսկ արտաքին սպառնալիքներն սկսվեցին Օսմանյան կայսրության անկման հետ մեկտեղ՝ 17-րդ դարի երկրորդ կեսից: Օսմանցիների պարտությունը Վիեննայի մոտ՝ 1683թ., նրանց դեմ

«Սրբազան լիգայի»⁴⁵ կազմավորումը 1684թ. ու հապարդյան ուժերի առաջխաղացումը Սերբիայում 1687թ. կայսրության վերջի սկիզբն են: 1768–1774թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում կնքված 1774թ. Քյուչյուք Քայնարջայի խաղաղության դաշնագրով Օսմանյան կայսրությունը ոչ միայն կորցրեց Ղրիմը, այլ նաև դեմ հանդիման կանգնեց «Արևելյան հարցին»՝ օսմանահպատակ քրիստոնյաների պաշտպանության պատրվակով կայսրության ներքին խնդիրներին խառնվելու խաղաքարտին: Արդյունքում, Օսմանյան կայսրությունը 19–րդ դար մտավ արդեն «Բոսֆորի հիվանդ մարդը» մակդիրով:

Անկման հետ զուգահեռ օսմանյան պետությունը ստիպված էր դիմագրավել նաև ներքին ուժերի դիմադրությանը: Արաբական տարածքներում Սաուդյան թագավորության ընդլայնումը, 1805–1848թթ. Մուհամեդ Ալիի ղեկավարությամբ փաստացի անկախ Եգիպտոսի առաջ գալը, Լիբանանի էմիր Բաշիր Շիհար Երկրորդի կողմից ինքնավարության մղումները ու Ահմադ բեյի ներքո (1837–1855թթ.) անկախ Թունիսի հիմնադրումը օսմանյան պետության ներքին պայթյունի օրինակներն են:

Սակայն կայսրության այլ հատվածում ավելի դրամատիկ զարգացումներ էին տեղի ունենում: Սերբական ապստամբությունները (1804–1806թթ. և 1815–1817թթ.), Հունաստանի անկախության պատերազմը (1821–1830թթ.), ապստամբությունները Բոսնիայում ու Հերցեգովինայում (1857թ.), Ջեյթունում հայերի

⁴⁵ Օսմանյան կայսրության դեմ Սրբազան Լիգան կազմավորվել է 1684թ. Հռոմի պապ Իննոկենսո 9–րդի կողմից: Նրա անդամներն էին Սրբազան Հռոմեական կայսրությունը, Լեհա–լիտվական համադաշնությունը ու Վենետիկյան Հանրապետությունը: Երկու տարի անց նրանց միացավ նաև Ռուսաստանի կայսրությունը: Միությունը գործեց մինչև 1699թ. Կառլովիցի Պայմանագիրը:

ապստամբությունը (1826թ.) ցույց են տալիս Օսմանյան կայսրության բարդ իրավիճակը:

Ավելին, ներքին ու արտաքին ուժերը հաճախ միավորում էին իրենց ջանքերը, ինչը ներշնչում էր օսմանյան վերնախավին արտաքին դավերի ու ներքին դավաճանության զգացումներ:

1912–1913թթ. Բալկանյան պատերազմում ծանր տարածքային կորուստներից ու Առաջին համաշխարհային պատերազմում ծանր պարտությունից հետո օսմանյան սուլթանի պատվիրակությունն ստորագրեց Սևրի դաշնագիրը 1920թ. օգոստոսին: Այս դաշնագրով Թուրքիան գրեթե անհայտանում էր աշխարհի քարտեզից:

Ինչևէ, Մուստաֆա Քեմալի առաջնորդած ուժերի կողմից հունական զորքերի հանդեպ տարած հաղթանակը ու Խորհրդային Ռուսաստանի ազդեցությունից հեռու պահելու ցանկությունն ստիպեցին արևմտյան ուժերին ճանաչել թուրքերի պահանջած սահմանների մեծ մասը, իսկ 1923թ. հուլիսի Լոզանի դաշնագիրը համարվեց Սևրի դաշնագրին փոխարինող փաստաթուղթ, որով ճանաչվեց Թուրքիայի Հանրապետությունը: Սակայն այնուամենայնիվ, Սևրը չի մոռացվել ու շարունակում է մնալ պետության կենտրոնական խնդիրներից մեկը: Ժամանակ առ ժամանակ զարգացումներն ստիպում են թուրքերին վերաթարմացնել իրենց հիշողությունը: Նման օրինակներից են 1945թ. ԽՍՀՄ կողմից Մոսկվայի պայմանագրի վերանայման պահանջը, քրդերի կողմից անջատողական գործողություններն ու արևմտյան ուժերի կողմից նրանց օժանդակելը, հայերի ու մասնավորապես հայկա-

կան սփյուռքի պահանջատիրական հայտարարությունները: Սա ավելի է ուժգնացնում սինդրոմի ազդեցությունը՝ ցույց տալով վտանգի հարատևությունը:

ՍԿԶՖՈՒՆՔ ԵՐԿՐՈՐ.

ԶՐՈ ԽՆԴԻՐ ՀԱՐՆԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Տարիներ շարունակ Թուրքիայի դպրոցներում և ԲՈՒՀ-երում ուսուցանում են, որ երկիրը շրջապատված է վատ հարևաններով: Սառը պատերազմի ողջ ընթացքում տեղի ունեցած զարգացումներն ու փորձն էլ ապացուցում էին այդ արքիոման: 1974թ. Հունաստանի հետ Կիպրոսի հարցի հետևանքով պատերազմական իրավիճակ ստեղծվեց: Հարավային հարևան Սիրիան աջակցում էր Քրդական բանվորական կուսակցության ահաբեկչական գործողություններին, որոնք երկրում մոտ 40 հազար զոհի պատճառ են հանդիսացել:

Երբ հասնենք մեր հարևանների հետ զրո խնդիր մակարդակի, այդ ժամանակ արտաքին քաղաքականության վարման առումով վերին աստիճանի լայն մանևրելու դաշտ կստանանք:

Ահմեդ Դավութօղլու

Իրաքի շուրջ ծավալված յուրաքանչյուր բացասական զարգացում Թուրքիայի համար նույնպես վատ արդյունք էր ունենում: Սադդամ Հուսեյնը 1980-ականներին Իրանի հետ պատերազմեց, իսկ 1990թ. հարձակվեց Քուվեյթի վրա: Այս պատերազմների գիներ վճարեցին ոչ միայն Իրանի ու Իրաքի ժողովուրդները՝ անկախությունը տարածվեց ողջ տարածաշրջանում: Թուրքիան այս պատերազմներից տնտեսական հարված ստացած երկրների շարքում առաջիններից էր: Իրանը փորձում էր Բսլամական հեղափոխություն արտահանել Թուրքիա ու փոխել վարչակարգը: Հյուսիս-արևելյան հարևան Հայաստանը Թուրքիային մեղադրում է Ցեղասպանության մեջ, հողային պահանջներ է ներկայացնում, իսկ հայկական ՀԱՀԳԲ/ASALA կազմակերպությունն էլ թուրք դիվանագետներին հետապնդում էր ողջ աշխարհով մեկ: Վրաստանը մեսխեթցի թուրքերին էր ճնշում, որոնց փորձում է ձուլել ու վրացացնել: Ռուսաստանը Թուրքիայի դարավոր թշնամին էր, որի հետ ունեցել է ամենաշատ լայնածավալ պատերազմները, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ստալինի կողմից հողային պահանջներն էլ ավելի էին ամրապնդում վախերը: Բուլղարիան էլ Սառը պատերազմի վերջին տարիներին՝ Ժիվկովի ժամանակաշրջանում, ճնշում էր թուրքական արմատներով քաղաքացիներին: Բուլղարիայից գնացրով Թուրքիա եկող տասնյակ հազարավոր թուրք միգրանտներին Թուրքիան չի մոռացել: Այսպիսով, Թուրքիան ապրում էր վտանգավոր «բերմուղյան» եռանկյունում՝ շրջապատված թշնամիներով: Այս միջավայրում, բնականաբար, ծաղկում էին առաջին գլխում քննարկված ֆոբիաներն ու ազգայնականությունը:

2004թ.-ի փետրվար ամսին այդ ժամանակ Թուրքիայի վարչապետի՝ արտաքին հարաբերությունների գծով խորհրդական Ահմեդ Դավութօղլուն հյուրընկալվում է CNN Turk հեռուստաընկերության Editör ծրագրին, որտեղ արտաքին քաղաքականության սկզբունքների մասին զրուցելիս նշում է «հարևանների հետ զրո խնդիր», ինչն ընկալվում է հասարակության կողմից չափից ավելի լավատեսական: Հաջորդող տարիները, սակայն, ցույց տվեցին, որ հարաբերությունները փուլ առ փուլ բարելավվում են: «Զրո խնդիր» սկզբունքը հիմնվում էր Թուրքիայի՝ բնական հինտերլանդի⁴⁶ հետ միավորման գաղափարի վրա:

«Երբ մտածում ենք այն հոգեբանությամբ, թե շրջապատված ենք թշնամիներով, ապա նախաձեռնությամբ հանդես գալու փոխարեն պաշտպանողական ռեֆլեքսով ենք առաջնորդվում: Երբ հասնենք մեր հարևանների հետ զրո խնդիր մակարդակի, այդ ժամանակ արտաքին քաղաքականության վարման առումով վերին աստիճանի լայն մանրերլու դաշտ կստանանք»⁴⁷:

⁴⁶ Հինտերլանդ բառը վերցված է գերմաներենից, որտեղ այն բառացիորեն նշանակում է հետևում գտնվող տարածք: Բուն նշանակությամբ այն վերաբերում է որևէ մեծ քաղաքի կամ նավահանգստի օժանդակ ու մթերքով ապահովող տարածքին: Քաղաքագիտական եզրաբանությամբ հինտերլանդը մայրաքաղաքի թիկունքը կազմող, պաշարներ ապահովող, սակավ բնակեցված ու հիմնականում գյուղատնտեսական տարածքն է: Օրինակ Մոսկվայի համար՝ Միքիթը կամ նույնսիկ Կենտրոնական Ասիան:

⁴⁷ CNN Türk, Gürkan Zengin, Editör Özel programı (Ahmet Davutoğlu – Özdem Sanberk – Nuray Mert), 17 փետրվարի, 2008թ.:

Տնտեսական ու մշակութային կամուրջներին պետք է մոտենանք որպես ոչ թե սպառնալիք, այլ դրա վրա կառուցենք փոխկախվածության վրա հիմնված հարաբերություններ...

Ահմեդ Դավութօղլու

Սա նշանակում էր քանդել «թշնամական եռանկյունու» պատկերը ու վերոհիշյալ խնդրահարույց երկրների հետ կառուցել բարիդրացիական հարաբերություններ: Դավութօղլուն սա անելու համար առաջարկում էր, իսկ հետագայում նաև գործի դրեց իր մարտավարական չորս սկզբունքները: Այդ սկզբունքները շատ էական են, քանի որ դրանք մեծապես օգտագործվում են Թուրքիայի արտաքին քաղաքականությունում՝ նոր երկրներ ազդեցության տակ վերցնելու գործընթացում: Դրանք են. անվտանգություն բոլորի համար, քաղաքական երկխոսությունը որպես ճգնաժամի հանգուցալուծման միջոց, տնտեսական փոխկախվածություն և մշակութային բազմազանության պահպանում⁴⁸: Այսինքն, դուրս գալով մեկուսացման քաղաքականությունից՝ ստեղծել տնտեսական փոխկախվածություն, պետության և կամ տարածաշրջանային դերակատարների հետ ոչ մի դեպքում չդադարեցնել երկխոսությունը, պահպանել տարածաշրջանային բազմամշակութայնությունը, հետևաբար պաշտպանել ազգային և կրոնական բազմազանությունը: Կրկին մեջբերենք Դավութօղլուն.

⁴⁸ Ahmet Davutoğlu, Turkey's Foreign Policy Vision, pp. 84–86;

«Մոսուլը Դիարբեքիրին միշտ էլ Բասրայից ավելի մոտիկ էր: Մենք Մոսուլի ու Դիարբեքիրի տնտեսական ու մշակութային կամուրջներին պետք է մոտենանք որպես ոչ թե սպառնալիք, այլ դրա վրա կառուցենք փոխկախվածության վրա հիմնված հարաբերություններ: Նույն մտածողությամբ պետք է մոտենանք Գյումուլջինայի⁴⁹ ու Էդիրնեի, Բաթումի ու Հոպայի, Նախիջևանի ու Իզմիրի հարաբերություններին: Դա նաև կօգնի Բալկաններում, Կովկասում ու Մերձավոր Արևելքում ռիսկային գոտիները նվազեցնել ու տրամադրել մեզ խորություն, որը կօգտագործենք այդ տարածքների հանդեպ մեր ազդեցությունը տարածելու հարցում»⁵⁰:

Այս մարտավարական սկզբունքներում տնտեսական ինտեգրացիոն շրջանների ստեղծումը «հարևանների հետ զրո խնդիր» սկզբունքի նախապայմանն է. Ահմեդ Դավութօղլուն 2002թ. ապրիլ ամսին «տնտեսական ինտեգրման» քաղաքականության արդյունավետությունն այսպես էր բացատրում.

«Սիրիայի ու Թուրքիայի միջև տնտեսական կապերի զարգացմամբ պատերազմի հավանականությունը կհասցվի նվազագույնի, որովհետև երբ Այնթեփի ու Հալեպի ժողովուրդն առևտուր են անում, ապա նրանք պատերազմելու

⁴⁹ Գյումուլջինան Հունաստանի հյուսիս-արևելքում՝ Թրակիայում գտնվող Կոմոտինե քաղաքի թուրքական անվանումն է: Բնակչության զգալի մասը թուրքեր են: Օսմանյան ժամանակաշրջանում Կ.Պոլիսը եվրոպական տարածաշրջանին կապող հիմնական հանգույցներից էր:

⁵⁰ Ahmet Davutoğlu, NTV Basın Odası, 13 մայիսի 2004:

համար զինվոր չեն ուղարկի: Կամ եթե Դիարբեքիրի ու Բադ-
դադի միջև ծանրաքաջ բռնատարներ աշխատեն, ապա
Թուրքիան Հյուսիսային Իրաքում հնարավոր միավորումնե-
րից (ի նկատի ունի քրդերին – Ա.Շ.) չի վախենա»⁵¹:

2005թ. ընթացքում վարչապետ Էրդոդանն այցելեց Հունաս-
տան, Վրաստան, Ուկրաինա, Իրան ու Սիրիա, իսկ 2006թ. հուն-
վար–փետրվար ամիսներին Անկարա այցելեցին Ռումինիայի,
Բուլղարիայի ու Վրաստանի վարչապետերը⁵²:

«Հարևանների հետ գրո խնդիր» սկզբունքի հաջողված օրի-
նակներից է Սիրիայի հետ հարաբերությունների կարգավորման
ընթացքը:

Թուրք–սիրիական հարաբերությունները

Թուրքիան ու Սիրիան ունեն ամենաերկար ընդհանուր սահ-
մանը և իրար համար դարպասներ են դեպի հարավ ու հյուս-
սիս՝ համապատասխանաբար: Թուրք–սիրիական հարաբե-
րություններն անցյալ դարաշրջանում կարելի է որակել որ-
պես թշնամական: Սիրիան չէր հաստատում թուրք–սիրիա-
կան սահմանը, քանի որ ուներ տարածքային պահանջներ,
Անկարան իր հերթին ճնշում էր գործադրում Դամասկոսի
վրա՝ վերահսկելով Եփրատի ջրերի՝ Սիրիայի տարածք

⁵¹ Neşe Düzel, İsrail, Arafat'ı Mandela yapıyor, Radikal, 8.04.2002.

⁵² Լույսիսկ Հայաստանի ուղղությամբ արվեցին քայլեր: 2008թ. սեպտեմբերին նախագահ Աբդուլլահ Գյուլն ոչ պաշտոնական այց կատարեց Հայաստան, որին հաջորդեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ոչ պաշտոնական այցը Թուրքիա: ՀՀ հետ հարաբերությունների մասին տես վերջաբանը:

մուտքի չափաբաժինը: 1998թ. Դամասկոսի աջակցությունը
Թուրքիայի քրդերին երկրները հասցրեց պատերազմի եզր:

Օսմանյան կայսրության արևելյան նվաճողական քաղաքա-
կանության նախաձեռնողը եղավ սուլթան Մելիմ Առաջինը
(1512–1520), որը պատմության մեջ մտել է Յավուզ՝ Ահեղ մակա-
նունով: Նրա գահակալության օրոք օսմանյան պետությունն
ավելի հզորացավ և դարձավ տարածաշրջանի ամենաուժեղ պե-
տությունը: Նրա անվան հետ է կապված արաբական երկրների
նվաճման և օսմանյան տիրապետության հաստատման սկիզբը:

Արաբական երկրներից առաջին հարվածը հասցվեց Սիրի-
ային, որն այդ ժամանակ գտնվում էր եգիպտական մամլուքների
տիրապետության տակ: Թուրքական և մամլուքյան բանակների
միջև գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ 1516թ. օգոստոսի
24–ին, Հալեպից հյուսիս գտնվող Մարջ Դաբիք բնակավայրի
մոտ: Այս ճակատամարտը և արաբների պարտությունը պատ-
մության մեջ մտել է որպես արաբական երկրները թուրքերի կող-
մից նվաճելու և արաբական աշխարհի վրա օսմանյան տիրապե-
տությունը հաստատելու սկիզբ: Նա խոր հետք է թողել արաբե-
րի հիշողության մեջ և դարեր շարունակ նրանք երազել են ունա-
շի մասին⁵³:

Շուրջ 4 դար Սիրիան ղեկավարվել է Ստամբուլից (Կոնս-
տանդնուպոլսից) և մեծապես ազդվել է Օսմանյան կայսրությու-
նում տեղի ունեցող փոփոխություններից, մասնավորապես վեր-
ջինիս անկման ժամանակաշրջանում: Արաբական ազգայնակա-

⁵³ Նիկոլայ Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հատոր 2, Երևան, 2004, էջ 27–29:

նությունը սկիզբ է առել հատկապես սիրիական նահանգներում, ինչը և ձևավորել է փոխադարձ ըմբռումները: Այդ ընկալումներն ավելի վառ գույներ ստացան Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ արաբները համագործակցեցին Անտանտի հետ: Մա թուրքերի մտածելակերպի վրա մեծ հետք է թողել և արաբներին նշագրել է որպես անվստահելի, մի բան, որ մինչև այսօր կարելի է նկատել թուրք հասարակության մոտ⁵⁴: Սիրիական կողմն իր հերթին արաբական աշխարհի թույլ զարգացվածությունը կապում է բազմադարյա օսմանյան կայսերականության հետ: Ի հավելումն, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հեղափոխական արաբ ազգայնականների հետապնդումները Սիրիայում հակաթուրքական զգացումներ են թողել:

Ջեմալ փաշայի կողմից արաբների սպանող

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

Օսմանյան կայսրության՝ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելուց հետո, Սիրիայում և Պաղեստինում տեղակայված թուրքական բանակը վերակազմավորվեց, և ստեղծվեց թուրքական չորրորդ բանակը, որի հրամանատար նշանակվեց երիտթուրքական եռապետության անդամ, Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար Ահմեդ Ջեմալ փաշան⁵⁵: Ռազմականի հետ միասին նրա ձեռքերում կենտրոնացվեց նաև ամբողջ քաղաքացիական իշխանությունը: Առաջին համաշխարհային պատերազմը շատ ծանր անդրադարձավ արաբական

⁵⁴ Meliha Benli Altunisik, Ozlem Tur, From Distant Neighbors to Partners? Changing Syrian-Turkish Relations, *Security Dialogue*, June 2006 vol. 37, no. 2, pp. 229-248;

⁵⁵ Լիկոլայ Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, էջ 524:

երկրների տնտեսական վիճակի վրա: Անտանտի դրությունն ստեղծվեց մասնավորապես Սիրիայում: Ջեմալ փաշայի հրամանով արաբներից բռնագրավվեց պարենը, անասունները և գյուղատնտեսական մթերքները: Բնակչությունը սովի մատնվեց: Մահացան հարյուր հազարավոր մարդիկ:

Թուրքերի դեմ կուտակած արաբների դժգոհությունը քանի գնում ուժեղանում էր: 1915թ. ըմբոստացան Սիրիայի խաղաղ բնակիչները: Նրանք ունեին հիմնական երկու պահանջ՝ հաց և խաղաղություն⁵⁶: Ջեմալ փաշան մեծ եռանդով ձեռնամուխ եղավ արաբներին պատժելու գործին: Տասնյակ հազարավոր մարդիկ բանտ նետվեցին և արքորվեցին: Աքսորյալների մեջ մեծ թիվ էին կազմում ծերունիները, երեխաները և կանայք: Նրանց արքորում էին Անատոլիայի խորքերը: Շատերը մահացան կտտանքներից, սովից և հիվանդություններից⁵⁷:

Դատաստանը արաբական ազգային գործիչների, մտավորականների, օսմանյան պառլամենտի արաբ անդամների, արաբ սպաների, քաղաքական և կուսակցական գործիչների նկատմամբ հանդիսանում էր արաբների նկատմամբ երիտթուրքերի և նրանց ղեկավարների ոճրագործության գագաթնակետը՝ մեկը մյուսի հետևից արձակվում էին մահվան վճիռներ: Ընդհանուր առմամբ մահապատժի ենթարկվեց 800 մարդ, իսկ Անատոլիա բռնի տեղահանված ընտանիքների թիվը հասնում էր հազարներին⁵⁸:

⁵⁶ Ibid., էջ 526-529;

⁵⁷ Ibid., էջ 534;

⁵⁸ Ibid., էջ 535-536;

Միրիայի անկախությունից հետո թուրքերը գրականությունում և այլուր պատկերվում էին որպես արաբներին տանջողներ⁵⁹:

Ալեքսանդրետի սանջաքի (Թուրքիայում՝ Հաթայ) միացումը Թուրքիային 1939թ. ընդգծեց Միրիայի՝ զոհ լինելու ընկալումները: Միրիան երբեք չի ընդունել այդ տարածքի Թուրքիային տալու օրինականությունը: Միրիական քարտեզներում մինչև այսօր Հաթայը ներկայացվում է Միրիայի կազմում: Հաթայի խնդիրը շատ էական էր Միրիայի վարչակարգի համար, քանի որ նախքան Պաղեստինի խնդրի ի հայտ գալը, հենց այդ խնդիրն էր, որով նրանք կարող էին ի ցույց դնել իրենց ազգայնականությունը: Հաթայից գաղթած արաբները բավականին ազդեցիկ էին Միրիայում, մասնավորապես Ջաքի Արսուզին, որը Բասս կուսակցության հանգուցային ղեկավարներից էր: Սակայն Իսրայելի հիմնադրումից հետո Հաթայը մղվեց հետին պլան:

Սառը պատերազմի ժամանակահատվածում սիրիա-թուրքական հարաբերությունները ընթանում էին երկբևեռ աշխարհի լույսի ներքո: Թուրքիան, լինելով ՆԱՏՕ-ի անդամ, Միրիայի կողմից դիտարկվում էր որպես արևմտյան բլոկի անդամ, որը փորձում էր իր ծառայությունները մատուցել վերոհիշյալ կազմակերպությանը՝ այդ թվում արաբական շահերի հաշվին⁶⁰: Նմանապես, Թուրքիան ընկալում էր Միրիայի արաբական ազգայնականությունը և անկախությունը որպես հնարավորություն ԽՍՀՄ-

ին՝ մուտք գործելու տարածաշրջան: Երկու երկրները 1957թ. նույնիսկ հասան պատերազմի շեմին, երբ Թուրքիան ու Վաշինգտոնը մեկնաբանեցին Միրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումը որպես կոմունիստական⁶¹:

1960-ականներից սկսած Եփրատի ու Տիգրիսի ջրերի օգտագործման հարցը դարձավ լուրջ խնդիր երկկողմանի հարաբերություններում: Քանի որ Թուրքիան գետերի վերին հոսանքն էր վերահսկում ու ազդեցության լծակ ուներ Միրիայի վրա, Դամասկոսը փորձեց հավասարակշռել դիրքերը՝ կացարան տրամադրելով Քրդական բանվորական կուսակցությանը (PKK), Հայաստանի ազատագրման հայ գաղտնի բանակին (ASALA) ու թուրքական արմատական ձախերին (Dev-Sol): Այս աջակցությունն էլ ավելի ուժեղացավ, երբ վերոհիշյալ խմբերի շատ անդամներ փախան Թուրքիայից 1980թ. ռազմական հեղաշրջումից հետո: Սա այն աստիճան լայնամասշտաբ բնույթ ուներ, որ 1983թ. Թուրքիան հրապարակայնորեն մեղադրեց Միրիային հակաթուրքական տարրերին աջակցելու մեջ⁶²: Անկարան ուներ տվյալներ, որ ՔԲԿ անդամների մեծ մասը ոչ միայն թաքնվում ու մարզվում էր Միրիայի տարածքում, այլև օգտագործում էր սիրիական բանկերը Թուրքիայում իրենց գործունեության ֆինանսավորման համար: Ավելին, այնտեղ էր թաքնվում ՔԲԿ առաջնորդ Աբդուլլահ Օջալանը: Մինչև 1987թ. Միրիան մերժում էր Օջալանի ներկայության և կամ ՔԲԿ-ին աջակցության փաստը: Սակայն 1987թ. հուլիսին Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալի այցի ընթացքում երկու

⁵⁹ Altunisiik, Tur, *From Distant Neighbors to Partners?*, pp. 229–248;

⁶⁰ Musliih, Muhammad, 1996. «Syria and Turkey: Uneasy Relations», in Henri J. Barkey, ed., *Reluctant Neighbor*. Washington, DC: United States Institute of Peace Press, 113.

⁶¹ Halc, William, 2002. *Turkish Foreign Policy: 1774–2000*. London: Frank Cass. 128

⁶² Çarkoğlu, Ali & Mine Eder, 2001. «Domestic Concerns and the Water Conflict over the Euphrates–Tigris River Basin», *Middle Eastern Studies* 37(1): 60.

երկրները ստորագրեցին պայմանագիր, համաձայն որի պարտավորվում էին չօժանդակել գործընկեր երկրի դեմ գործող կազմակերպություններին: Միրիան, սակայն, չպահեց այս խոստումը, ինչպես նաև հաջորդ խոստումները, որոնք արվեցին 1988թ. օգոստոսին, 1992թ. ապրիլին, 1993թ. նոյեմբերին, 1994թ. ապրիլին:

Անկարան իր հերթին, կառուցելով մի շարք ամբարտակներ Տիգրիս ու Եփրատ գետերի վրա, վերահսկում էր ջրի հոսքը Միրիա: 1983թ. Թուրքիան նախաձեռնեց ոռոգման ու էներգետիկ մի վիթխարի նախագիծ՝ Հարավ-արևելյան Անատոլիական Զարգացման Ծրագիր (GAP), որն օգտագործելու էր հենց դեպի արաբական աշխարհի հոսող ջրերը: Արաբական աշխարհի բողոքների հետևանքով թուրքական կառավարությունը չկարողացավ վարկեր ստանալ միջազգային կառույցներից և ստիպված էր այն ֆինանսավորել սեփական բյուջեից: Սակայն Թուրքիան կարող էր թե՛ նվազագույնի հասցնել ջրի հոսքը, ինչպես և բազում անգամ սպառնացել է, թե՛ հեղեղել Միրիան: Համաձայն Օզալի վերոհիշյալ այցի ընթացքում ստորագրված պայմանագրի, Թուրքիան պարտավորվում էր տրամադրել Միրիային վայրկյանը 500 խորանարդ մետր ջրի հոսք, թեև վերջինս պնդում էր, թե ոռոգման կարիքները հոգալու համար այդ թիվը պետք է հասցնել մինչև 700-ի: Ինչևէ, Անկարան ջրի հոսքն օգտագործում էր որպես ճնշման լծակ և 1991թ. քրդերի պատճառով միջպետական հարաբերություններում ծագած ճգնաժամի հետևանքով հոսքի ծավալն իջեցրեց մինչև 165 խորանարդ մետրի⁶³:

⁶³ Bulent Aras, Hasan Koni, Turkish-Syrian relations revisited, *Arab Studies Quarterly* (ASQ), Fall 2002, http://findarticles.com/p/articles/mi_m2501/is_4_24/ai_101531218/pg_2/;

Խորհրդային Միության փլուզումը Միրիայի համար նշանակում էր առաջին հերթին խորհրդային օգնության դադարում: Միրիան իրեն ավելի խոցելի զգաց Թուրքիայի առջև, որն իր հերթին գտնվում էր ռազմավարական փնտրտուքի մեջ՝ ՆԱՏՕ-յում նոր դերակատարում ստանձնելու համար: Միրիան իր հարաբերությունները զարգացրեց Հունաստանի, Հայաստանի ու Իրանի հետ: Թուրքիան սա ընկալեց, որպես իրեն թշնամական շրջանի մեջ առնելու փորձ: Սա դարձավ թուրք-իսրայելական ռազմական պայմանագրի կնքման հիմնական դրդապատճառներից մեկը: 1996թ. ապրիլի այս պայմանագրով Անկարան նպատակ ուներ ոչ միայն վախեցնել Դամասկոսին, այլև ստանալ իսրայելական ռազմական տեխնոլոգիաները, ինչպես նաև ապահովել Վաշինգտոնի հրեական լոբբիի աջակցությունը հայկական ու հունական լոբբիների դեմ պայքարում: Միրիան, որն Իսրայելին ընկալում է որպես իր արխի-թշնամի, սպառնալիք զգաց այս պայմանագրից, մասնավորապես երկրի փոխնախագահ Աբդալ-Հալիմ Խադդամը բնութագրեց այն որպես «1948թ-ից ի վեր ամենամեծ սպառնալիքն արաբներին⁶⁴»:

Իսրայելից բացի 90-ականների երկրորդ կեսին Թուրքիան ու Հորդանանն սկսեցին զարգացնել ռազմական կապերը: 1997թ. Հորդանանը դիտորդ էր Իսրայելի, Թուրքիայի ու ԱՄՆ-ի կողմից իրականացվող ռազմածովային վարժանքներում: 1998թ. ապրիլ-մայիսին տեղի ունեցան թուրք-հորդանանական ռազմական վարժանքներ: Հորդանանցի օդաչուները F-16 կործանիչ վարելու

⁶⁴ Bengio, Ofra, Gencer Özcan, «Changing Relations: Turkish-Israeli-Arab Triangle», *Perceptions* 5(1), 2000, p. 138.

դասընթացներ էին անցնում Թուրքիայում: Այս անգամ Հաֆեզ Ասադի վարչակարգը իրեն զգաց շրջապատման մեջ⁶⁵:

Պատերազմի հավանականությունը

Թուրք-սիրիական հարաբերություններում նոր փուլի սկիզբ է համարվում 1998թ., երբ երկու երկրների միջև հարաբերություններն այն աստիճանի լարվեցին, որ ստեղծվեց ռազմական բախման հավանականություն: Պատճառը Քրդական բանվորական կուսակցության գրոհայինների ահաբեկչական գործունեության ակտիվացումն էր:

1996թ. հունվարին Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հերթական անգամ Դամասկոսից պահանջեց դադարեցնել աջակցությունը ՔԲԿ-ին: Եթե Սիրիան չդադարեցներ, ապա Թուրքիան իրեն «իրավունք էր վերապահում արձագանքել համապատասխան ժամանակ համապատասխան միջոցներով»⁶⁶: Սիրիան սրան չարձագանքեց, և արդյունքում բոլոր հարաբերությունները երկու երկրների միջև սառեցվեցին: Նույն տարի Սիրիան իր հերթին մեղադրեց թուրքական հատուկ ծառայություններին թուրքմենների հետ համագործակցությամբ Ասադի վրա մահափորձ իրականացնելու, ինչպես նաև ՔԲԿ-ի կացարան համարվող մի քանի գրասենյակներում տեղի ունեցած պայթյունների մեջ: Գործը հասավ նրան, որ 1998թ. սեպտեմբերին

⁶⁵ Hinnebusch, Raymond, «Globalization and Generational Change: Syrian Foreign Policy Between Regional Conflict and European Partnership», *The Review of International Affairs* 3(2), 2003., p. 199.

⁶⁶ Altunışık, Meliha, «Redefinition of Turkish Security Policies in the Middle East After the Cold War», in Ali Karaosmanoğlu & Seyfi Taşhan, eds, *The Europeanisation of Turkey's Security Policy: Prospects and Pitfalls*. Ankara: Foreign Policy Institute, 2004, p. 222.

Թուրքիայի Գլխավոր սպայակույտի նախագահ Հուսեյին Քըվրըքսոլուն հայտարարեց, թե Սիրիան չհայտարարված պատերազմ է վարում Թուրքիայի դեմ: Սրան հետևեց Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հայտարարությունը, թե Թուրքիայի համբերության բաժակը լցվում է, ու Սիրիան պետք է ՔԲԿ-ին աջակցելու համար պատասխանատվություն կրի⁶⁷:

1998թ. Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստին որոշում ընդունվեց ավելացնել զինվորական միավորումների համամասնությունը Սիրիայի հետ սահմանի վրա, ինչպես նաև ճշտել սահմանամերձ տարածքների ականադաշտերի քարտեզները՝ անհրաժեշտության դեպքում դրանք անցնելու համար:

Սակայն նույն հոկտեմբեր ամսին, մի քանի փորձից հետո կողմերին հաջողվեց հասնել դիվանագիտական համաձայնության⁶⁸: ՔԲԿ առաջնորդ Աբդուլլահ Օջալանն արտաքսվեց Սիրիայից: Հոկտեմբերի 20-ին Անկարան ու Դամասկոսը ստորագրեցին Ադանայի համաձայնագիրը, ըստ որի սիրիական տարածքում փակվեցին ՔԲԿ մի քանի ռազմակայան ու մարզական ճամբար, արգելափակվեցին նրա ակտիվ անդամների բանկային հաշիվները: Սա դրական արձագանք ունեցավ թուրքական հասարակական, քաղաքական ու գործարար շրջանակներում: Որոշում ընդունվեց ականազերծել սահմանամերձ տարածքները, ինչը զարկ տվեց սահմանային առևտրի զարգացմանը: Դյուրացում մտցվեց սահմանամերձ բնակչության վիզային ռեժիմի մեջ: Տասնյակ հազարավոր ազգականներ 1939թ.-ից ի վեր բաժանված են եղել սահմանով, երբ Ֆրանսիան Ազգերի լիգայի մանդատի հի-

⁶⁷ *Milliyet*, 2 October 1998.

⁶⁸ www.international-relations.com/wbeurasia/wblec9.htm;

ման վրա Ալեքսանդրեթի սանջաքը Սիրիայի կազմից փոխանցեց Թուրքիային, որտեղ այն ստացավ Հաթայի վիլայեթ անունը: Ջրի հոսքը Սիրիա հասցվեց մինչև 900 խորանարդ մետր վայրկյանում⁶⁹, որը նախկին չափաբաժնի գրեթե կրկնակին էր:

Թուրքիայի կողմից այս ժեստը բերեց նրան, որ այլևս դադարեցվեց շեշտադրվել տարածքային հարցը Դամասկոսի կողմից, որը սիրիական բոլոր պաշտոնական քարտեզների մեջ ներառում էր նաև Հաթայի վիլայեթը: Սիրիայի այս քայլը՝ Հաթայի փաստորեն ճանաչումը, ոգևորությամբ ընդունվեց Իսրայելի վարչակարգի կողմից, քանի որ դա կարող է որպես նախադեպ ծառայել Գոլանի բարձունքների խնդրում⁷⁰:

Աննախադեպ ջերմացում

Միջպետական կապերն աննախադեպ կերպով զարգացան Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի մահվանից հետո: Հանգուցյալի որդի Բաշար Ասադը օգտագործեց Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեդ Մեզերի այցը թաղման արարողությանը՝ հարաբերությունները կարգավորելու համար⁷¹:

2000–2005թթ. Թուրքիայի ու Սիրիայի միջև տեղի է ունեցել ավելի քան 55 պաշտոնական այց: 2004թ. ապրանքաշրջանառությունը հասավ մինչև մեկ մլրդ ԱՄՆ դոլար ծավալի:

Անկարայի ու Դամասկոսի հարաբերությունների ջերմացման քաղաքական հիմնական պատճառներից հանդիսացավ

ամերիկյան զորքերի մուտքն Իրաք, ինչպես նաև Հյուսիսային Իրաքում քրդերի դերակատարության կարևորումը Վաշինգտոնի կողմից: Թե՛ Թուրքիային, թե՛ Սիրիային անհանգստացնում է քրդական անկախ պետության հավանականությունը: Երկու երկիրն էլ ունեն բավականաչափ ստվար քրդական տարր (1991թ. տվյալներով մոտ 10 մլն Թուրքիայում և 4 մլն Սիրիայում⁷²), որի հետ խնդիրները կտրուկ աճ կապրեն, եթե Հյուսիսային Իրաքում քրդերը ստանան անկախություն:

Տվյալ ժամանակաշրջանում թուրք–իսրայելական հարաբերությունների վատթարացումը ևս նպաստեց Անկարա–Դամասկոս առանցքի ամրապնդմանը, քանի որ վերջինս այն Թուրքիա–Իսրայել համագործակցությունը դիտում էր որպես հակասիրիական:

2004թ. հունվարին Սիրիայի նախագահ Բաշար Ասադն այցելեց Թուրքիա՝ դառնալով Սիրիայի անկախությունից հետո Անկարայում պաշտոնական այցով գտնվող առաջին նախագահը: Թուրք–սիրիական հարաբերությունները զարգացման նոր ազդակ ստացան: Երկու երկրների նախագահները դատապարտեցին ԱՄՆ–ի մուտքն Իրաք, ինչպես նաև արտահայտվեցին հոգուտ Իրաքի տարածքային ամբողջականության պահպանման, այսինքն՝ դեմ քրդական անկախ պետությանը:

Թուրք–ամերիկյան և թուրք–իսրայելական հարաբերություններում սառնությունը, ինչպես նաև թուրք–իրանական հարաբերություններում վերելքը ուրվագծեցին տարածաշրջանային նոր առանցքի հնարավորություն՝ Թուրքիա–Իրան–Սիրիա: Երեք

⁶⁹ Aras, Koni, Turkish–Syrian relations revisited;

⁷⁰ www.haaretz.com/hasen/spages/524517.html;

⁷¹ www.arabicnews.com/ansub/Daily/Day/000715/2000071505.html;

⁷² David McDowall, The Kurds, in *Minority Rights Report*, London, 1991, p. 9;

երկրներին էլ հույժ անհանգստացնում է քրդական հիմնահարցը, Իրաքի տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև Իսրայելի ու ԱՄՆ-ի աջակցությունը Հյուսիսային Իրաքի քրդերին:

2004թ. հուլիսին Միրիայի վարչապետ Մուհամմեդ Նաջի Օթրին պաշտոնական այց կատարեց Անկարա⁷³, իսկ նույն տարվա դեկտեմբեր ամսին Թուրքիայի վարչապետը 17 տարի ընդմիջումից հետո պատասխան այց կատարեց Դամասկոս: Ռեջեփ Թայիփ Էրդողանն այս այցի ընթացքում իր գործընկեր Մուհամմեդ Նաջի Օթրիի հետ ստորագրեց պայմանագիր՝ Միրիայի հետ սահմանամերձ Հաթայի վիլայեթում համատեղ ՀԷԿ-ի շինարարության վերաբերյալ: Միրիան դարձավ առաջին արաբական երկիրը, որ Թուրքիայի հետ ստորագրեց ազատ առևտրի գոտու վերաբերյալ համաձայնագիր⁷⁴:

Այցի դրական արդյունքները թույլ տվեցին երկու կողմերին անել համատեղ հայտարարություն, թե «Միրիայի համար Թուրքիան բաց դարպաս է Եվրոպա, իսկ Թուրքիայի համար Միրիան բաց դարպաս է արաբական աշխարհ»:

2005թ. հունվարին տրված հարցազրույցում Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլահ Գյուլը նշեց, որ Անկարան պատրաստ է զարգացնել իր հարաբերությունները Թեհրանի ու Դամասկոսի հետ. «Այդ հարաբերությունների զարգացումը հետաքրքրում է Թուրքիային տնտեսական, քաղաքական ու ռազմավարական տեսակետից, քանի որ դրանք նպաստում են տարածաշրջանում անվտանգության ու կայունության ապահովմա-

⁷³ turkish.rizgari.com/modules.php?name=News&file=article&sid=467;

⁷⁴ G. Singh, A New Age for Turkey-Syria Relations, www.ekurd.net/mismas/articles/misc2005/4/turkeysyria5.htm;

նր»: Նա նաև ավելացրեց, որ այս երկրների հետ տնտեսական կապերի շահերն այնքան մեծ են, որ այլոց (ԱՄՆ-ի՝ Ա.Շ.) արձագանքները չեն կարող ստիպել Թուրքիային վերանայել դրանք⁷⁵:

Սրան անմիջապես հաջորդեց ԱՄՆ-ի բարձրաստիճան ռազմադիվանագիտական գործիչների այցը Անկարա: ԱՄՆ-ն փորձեց վերանայել իր սառեցված հարաբերությունները Թուրքիայի հետ՝ ձգտելով հետ պահել Անկարային Իրանի ու Միրիայի հետ հարաբերությունների առավել ջերմացումից:

Ինչևէ, 2005թ. ապրիլի 13-ին տեղի ունեցավ Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեդ Սեզերի պաշտոնական այցը Միրիա: Վաշինգտոնը քանիցս պահանջներ ներկայացրեց, որպեսզի Սեզերը չեղյալ հայտարարի իր պատասխան այցը Դամասկոս՝ ձգտելով պահպանել Միրիայի մեկուսացումը: Թուրքական կողմը, սակայն, ցույց տալով իր անկախությունն արտաքին քաղաքականությունում, տեղի չտվեց Բուշի վարչակարգի ճնշումներին: Միաժամանակ Թուրքիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ալի Թույգանի գլխավորած պատվիրակությունը մեկնեց ԱՄՆ՝ իրավիճակը մեղմացնելու համար⁷⁶:

Թուրքիան՝ ժողովրդավարության ներմուծող

Թուրք-ամերիկյան հարաբերություններում ի թիվս այլ կետերի ամրապնդել է իր տեղը Դամասկոսի հարցը: Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ 2005թ. հունիսին Վաշինգտոն կատարած այցի

⁷⁵ www.arabicnews.com/ansub/Daily/Day/050126/2005012608.html;

⁷⁶ www.zaman.com.tr/?bl=dishaberler&alt=&trh=20050413&hn=162884;

ընթացքում քննարկված հիմնական կետերից մեկն էլ Սիրիայի խնդիրն էր:

Բուշի հետ հանդիպումից հետո մամլո ասուլիս հրավիրած Թուրքիայի վարչապետ Էրդողանի առանձնացրած կետերից առավել աչքի ընկավ Մեծ Մերձավոր Արևելք նախագծում Թուրքիայի ստանձնած առաջնորդության դերի «առաջին հանձնարարականների» նախանշումը, որոնք են զանգվածային ոչնչացման զենքերի տարածման դեմ վերահսկողության սահմանում (ակնարկվում է Իրանը-Մ.Շ.), բազմակուսակցական համակարգի հիմնում⁷⁷ (ակնարկվում է Սիրիան-Մ.Շ.): Սրանով թերևս Էրդողանը ցանկություն ուներ մեղմել Վաշինգտոնի՝ Անկարային ուղղված սուր քննադատությունը Թեհրանի ու Դամասկոսի հետ սերտ համագործակցության համար⁷⁸:

Սիրիային ուղղված կոչերը շարունակվեցին «Նյու Յորք Թայմս» թերթին տրված հարցազրույցում, որտեղ Թուրքիայի վարչապետը, ակներևորեն արդեն իր նոր դերի մեջ մտնելով, կոչ արեց Սիրիային վարչակարգի հարցում օրինակ վերցնել Թուրքիայից⁷⁹:

Թուրքիան՝ վստահելի երկիր

Սիրիա-թուրքական հարաբերությունների զարգացմանը նոր ազդակ հաղորդեց 2006թ. դեկտեմբերին Էրդողանի՝ Դամասկոս կատարած մեկօրյա աշխատանքային այցը, որի ընթացքում նա

⁷⁷ www.radikal.com.tr/haber.php?haberno=155323;

⁷⁸ Milliyet, 09.06.2005;

⁷⁹ Milliyet, 11.06.2005;

հանդիպեց նախագահ Ասադի և վարչապետ Օթբիի հետ: հանդիպումներում քննարկվել են տարածաշրջանային հարցեր: Սիրիայի նախագահը կարևորել է Մերձավոր Արևելքի խաղաղության հաստատման գործում Թուրքիայի էական դերը⁸⁰:

Իսրայել-Սիրիա հարաբերություններում Թուրքիայի միջնորդական ծառայությունների հարցն օրակարգ է մտել դեռ 2004թ.⁸¹, սակայն 2005թ. Լիբանանում Ռաֆիկ Հարիրիի սպանությունը, իսկ 2006թ. իսրայելա-լիբանանյան պատերազմը անբարենպաստ մթնոլորտ էին ստեղծում բանակցությունների համար: 2007-2008թթ. տևած իսրայելա-սիրիական բանակցություններում թուրքական միջնորդությունը բարձր գնահատանքի է արժանանում միջազգային հանրության կողմից, շատերը զեկուցում են Թուրքիայի բարձրացած վարկանիշի մասին: Այդուհանդերձ, բանակցությունները կասեցվում են վարչապետ Էրդողանի դավոսյան հայտնի «One minute» ներկայացումից հետո⁸²:

Սակայն միջնորդության փաստը կարևոր է ընդգծելու Սիրիայի ու Թուրքիայի միջև վստահության բարձր մակարդակը: Սիրիան լիովին վստահել է Թուրքիային միջնորդական գործառույթում: Եվ եթե բանակցությունները շարունակվեն, ապա Սիրիան

⁸⁰ Гурьев А., Ситуация в Турции: декабрь 2006г., Институт Ближнего Востока, 29.12.2006, www.iimes.ru, стр.3 (accessed 30.12.2006)

⁸¹ Tür, Özlem, Turkish-Syrian Relations: Where Are We Going?, UNISCI Discussion Papers N23, May 2010, 163-175 pp., p. 171;

⁸² 2009թ. հունվարին Դավոսում կայացած ամենամյա Համաշխարհային տնտեսական գագաթաժողովի ժամանակ Էրդողանը ՄԱԿ նախագահ Պան Գի Մուկի, այլ բարձրաստիճան հյուրերի ու միջազգային լրատվամիջոցների ներկայությամբ մեղադրեց Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսին արաբ ժողովրդին ոչնչացնելու մեջ, իսկ երբ վերջինիս հետ բանավեճի ընթացքում հանդիպման համակագողը փորձեց ընդհատել նրան, ապա Թուրքիայի վարչապետը դուրս եկավ դահլիճից՝ սպառնալով այլևս չվերադառնալ Դավոս:

դիտարկում է Թուրքիային որպես վստահելի գործընկեր գործընթացում⁸³:

Հարաբերություններն անցան նոր փուլ, երբ 2009թ. սեպտեմբերին որոշում կայացվեց վերացնել մուտքի արտոնագրերի ռեժիմը երկու երկրների միջև: Սեպտեմբերյան այդ հանդիպումը երկու երկրների միջև հարաբերությունները, որոնք դեռ 2004թ. ստորագրել էին ազատ առևտրի մասին համաձայնագիրը, որը սկսել էր գործել 2007թ., բերեց տնտեսական ինտեգրացիայի մակարդակի⁸⁴:

Նույն հանդիպման ընթացքում էլ որոշում կայացվեց կազմել Ռազմավարական Համագործակցության Բարձրաստիճան Խորհուրդ: Սրա շրջանակներում երկու երկրների վարչապետները տարեկան նվազագույնը մեկ անգամ հանդիպում են ունենալու՝ համապատասխան նախարարների ընկերակցությամբ, իսկ մասնավորապես արտաքին գործերի, էներգետիկայի, առևտրի, պաշտպանության, ներքին գործերի ու տրանսպորտի նախարարները հանդիպելու են նվազագույնը տարեկան երկու անգամ՝ գործողությունների ընդհանուր ծրագիր կազմելու նպատակով⁸⁵:

«Արաբական գարունն» ու թուրք-սիրիական

հարաբերությունները

Սիրիայում հակա-ասադական ապստամբությունից հեն թուրք-սիրիական հարաբերությունները ճեղք սվեցին: Թեև Ան-

⁸³ «Esad: Turkiyesiz Masaya Oturmayız», Sabah, 18 Mayıs 2009; «Suriye Gorusmeler icin İstekli», Haberturk, 17 Mayıs 2009.

⁸⁴ Gürçanlı, Zeynep: «Türkiye-Suriye için Fransız-Alman Modeli», Hürriyet, 13 October 2009;

⁸⁵ Tür, Özlem, Turkish-Syrian Relations, pp. 173-174;

կարան իրեն դիրքավորում էր որպես «մոդել» երկրի, որին հետևում են Մերձավոր Արևելքում, ոչ Քադաֆին, ոչ Ասադը Թուրքիայի խորհուրդներն ուշադրության չարժանացրին: Այստեղ էլ երևացին Անկարայի արտաքին քաղաքականության սահմանափակումները: Թուրքիան, որն իր տնտեսական շահերի համար ամուր կապեր էր հաստատել այս երկրների հետ, ստատուս-քվոյի կողմնակիցն էր, ու հակակառավարական ելույթները միայն ավելորդ գլխացավանք պատճառեցին Անկարային⁸⁶: Բավական է նշել միայն գաղթականների հոծ թիվը, որն արդեն մեծ վտանգ է պարունակում Թուրքիայի համար, ինչպես նաև Թուրքիայի տնտեսական վնասները: Այսօր Անկարան մի քանի միջոց է հանձնա առնում սիրիական զարգացումների՝ իր համար հնարավոր բացասական հետևանքները հնարավորինս չեզոքացնելու ուղղությամբ.

- *Կոնտակտներ ընդդիմության հետ*: Մայիս-հուլիս ամիսներին Անկարան թույլատրեց Սիրիայի ընդդիմության ներկայացուցիչներին հանդիպել Թուրքիայում: Մինևույն ժամանակ Անկարան շարունակում է կապ պահել Ասադի հետ: Սա թույլ է տալիս Թուրքիային ցույց տալ նաև Սիրիայի ժողովրդի, որ «զրո խնդիրը» վերաբերում է ոչ միայն երկրի վարչակարգին, այլ առաջին հերթին հասարակությանը: Խաղաղույթ կատարելով երկու խաղացողների վրա էլ՝ Անկարան հույս ունի չպարտվել այս բարդ իրավիճակում:

⁸⁶ Пелин Тургут, Как Сирия и Ливия стали для Турции головной болью, «Time», <http://www.inosmi.ru/asia/20110430/168940777.html>, 2011-04-30

• *Բուֆերային գոտի Միրիայի տարածքում:* Ամենայն հավանականությամբ Թուրքիան պատերազմ չի հայտարարաի Միրիային, նույնիսկ եթե այնտեղ իրավիճակը դուրս գա վերահսկողությունից: Փոխարենը Անկարան կարող է Միրիայի տարածքում բուֆերային գոտի ստեղծել՝ գաղթականների ապաստան տալու նպատակով: Ռազմական գործողությունը ողջ արաբական աշխարհում Թուրքիային վարկանշին հուժկու հարված կհասցնի: Թուրքիան նման բուֆերային գոտի հաստատել էր Իրաքում 1991թ., երբ Սադամ Խուսեյնը բռնություններ էր գործադրում քրդերի հանդեպ:

• *Տնտեսական պատժամիջոցներ:* Հաշվի առնելով թուրքափրիական սերտ տնտեսական հարաբերությունները, թուրքական մի շարք գործարանների առկայությունը երկրում ու Միրիայի խորը տնտեսական ճգնաժամը, Թուրքիան ՄԱԿ-ի համապատասխան աջակցությամբ կարող է տնտեսական պատժամիջոցներ կիրառել Միրիայի վրա՝ ազդելու նրա այս կամ այն որոշման վրա⁸⁷:

Այս իրավիճակը լուրջ մարտահրավեր է թուրքական կողմին՝ փորձարկելու իր արտաքին քաղաքականության գործունակ կիսնելը:

⁸⁷ Soner Cagaptay and Andrew J. Tabler, How Washington Can Work with Turkey on Syria, *PolicyWatch*, July 14, 2011;

ՄԿԶՐՈՒՆՔ ԵՐՐՈՐԴ. ՆԵՈ-ՕՍՄԱՆԻԶՄ

Զարգացնել հարաբերություններ հարևան և մերձակա տարածաշրջանների հետ:

Նեո-օսմանիզմը Թուրքիայի մեծ ու ռազմավարական տեսլականն է, որ պատկերում է Թուրքիան որպես արդյունավետ տարածաշրջանային դերակատար: Դերակատար, որ փորձում է լուծել տարածաշրջանային ու գլոբալ խնդիրները: Սակայն Օսմանյան կայսրության վերածննդի փոխարեն Թուրքիան փորձում է օգտագործել իր «մեղմ» ուժի լծակները՝ կամուրջ Արևմուտքի ու Արևելքի միջև, մուսուլման ազգաբնակչություն, աշխարհիկ պետություն, ժողովրդավարական քաղաքական համակարգ ու կապիտալիստական տնտեսական ուժ⁸⁸:

Դավութօղլուի նեո-օսմանյան տեսլականը շատ է տարբերվում Թուրքիայի նախկին վարչապետ ու թուրք քաղաքական իսլամիզմի կնքահայր Նեջմեթին Էրբաքանի պատկերացումներից: Վերջինս փորձում էր ստեղծել իսլամական այլանս մուսուլմանական երկրների հետ, ինչպիսիք են Լիբիան, Իրանը, Մալայ-

⁸⁸ Ömer Taspinar, Turkey's Middle East Policies: Between Neo-Ottomanism and Kemalism, *Carnegie Papers*, Number 10, September 2008, p. 3.

զիան ու Բնդոնեզիան՝ որպես բացահայտ այլընտրանք Արևմուտքին: Արդարություն ու զարգացում կուսակցության առաջնորդները, ի տարբերություն նրան, ցանկանում են հասնել Արևելքին, որպեսզի փոխլրացնեն Արևմուտքի հետ կապերը, ոչ թե փոխարինեն դրանք: Նրանց տեսլականը հիմնվում է նախկին նախագահ Թուրգութ Օզալի մոտեցումների վրա, այդտեղ Թուրքիան վերագտնում է իր կայսերական ժառանգությունն ու փնտրում նոր ազգային փոխհամաձայնություն իր բազմակի ինքնություններով հանդերձ: Այն հիշեցնում է թուրքերին, որ նախկինում նրանք ունեին բազմազգ կայսրություն, որը ղեկավարում է Մերձավոր Արևելքը, Հյուսիսային Աֆրիկան, Բալկաններն ու Կենտրոնական Եվրոպայի որոշ հատվածները: Օսմանյան ժառանգության վրա նման շեշտադրումը Թուրքիայի արտաքին քաղաքականությունը իսլամականացնելու մաս չէ: Ավելի շատ դա փորձ է հավասարակշռելու Թուրքիայի նախկին գերհագեցածությունը Արևմտյան քաղաքակրթությամբ ու ինքնությամբ:

ԱԶԿ-ի նեո-օսմանյան միտումները բնորոշելու երեք կարևոր հատկանիշ կա:

1. Ցանկություն համաձայնության գալու Թուրքիայի օսմանյան ու իսլամական ժառանգության հետ՝ երկրի ներսում ու սահմաններից դուրս:

Նեո-օսմանիզմը դեռևս առաջ չի մղում թուրքական իմպերիալիզմը Բալկաններ ու Մերձավոր Արևելք: Նմանապես այն չի փորձում հիմնադրել իսլամական իրավական համակարգ արդի

Թուրքիայում⁸⁹: Փոխարենը, նեո-օսմանիզմը փորձում է հաստատել ավելի չափավոր աշխարհիկ վարչակարգ տանը ու ավելի նախաձեռնող արտաքին քաղաքականություն դրսում: Նեո-օսմանյան այս հարացույցի տրամաբանությամբ Անկարան ավելի շատ գործում է «մեղմ ուժի»՝ քաղաքական, տնտեսական, դիվանագիտական ու մշակութային ազդեցության, դիրքերից նախկին օսմանյան տարածքներում, ինչպես նաև այլ տարածաշրջաններում, որտեղ Թուրքիան ունի ռազմավարական ու ազգային շահեր, օրինակ՝ Կենտրոնական Ասիայում: Թուրքիայի արտաքին քաղաքականության այդ ընդգրկուն տեսլականը պահանջում է ոչ միայն օսմանյան ժառանգության ընդունում, այլև Թուրքիայի ազգային ինքնության վերաիմաստավորում:

Նեո-օսմանիզմը քրդական մշակութային իրավունքների ու քրդական ազգային ինքնության արտահայտման մեջ մեծ վտանգ չեն տեսնում, քանի դեռ քրդերը պահպանում են նվիրվածություն Թուրքիային...

Գործնական առումով նման փոփոխությունը մտածելակերպում ունի լուրջ բարդացումներ քաղաքական հարթությունում: Օրինակ, քանի որ նեո-օսմանիզմը չի հակասում Թուրքիայի կայսերական ու բազմազգ ժառանգության գաղափարին, այն դուր է բացում «քաղաքացի» հասկացության ավելի պակաս «էթ-

⁸⁹ Ibid., p. 14.

նիկ» ու ավելի շատ բազմամշակութային մեկնաբանման համար: Որպես արդյունք, նեո-օսմանիզմը քրդական մշակութային իրավունքների ու քրդական ազգային ինքնության արտահայտման մեջ մեծ վտանգ չեն տեսնում, քանի դեռ քրդերը պահպանում են նվիրվածություն թուրքիայի Հանրապետությանը: Ի դեպ այստեղ տեղին է հիշել Դավութօղլուի արտաքին քաղաքականության թիվ մեկ՝ հիմնաքարային սկզբունքը՝ հավասարակշռություն ժողովրդավարության (այստեղ՝ քրդերի մշակութային իրավունքների) ու երկրի անվտանգության (այստեղ՝ քրդերի նվիրվածությունը թուրքիային) միջև: Նմանապես, երբ նեո-օսմանյան մտածելակերպը հանդիպում է մշակութային ու քաղաքական իրավունքների քրդերի պահանջներին, ապա դրանք տեղադրում է բազմամշակութայնության ու մուսուլմանական ինքնության շրջանակներում:

Այլ կերպ ասած, ի տարբերություն քեմալիստ բազենների, ովքեր պնդում են, թե քրդերին պետք է ձուլել, նեո-օսմանցիները թույլ են տալիս, որ իսլամը խաղա ավելի մեծ դեր ընդհանուր ինքնության ձևավորման հարցում: Ինչպես օսմանյան ժամանակներում, իսլամը դառնում է էական ընդհանուր հայտարար քրդերի ու թուրքերի միջև: Սա ավելի ճկուն մտածելակերպ է, որը բերում է նեո-օսմանիզմի երկրորդ հատկանիշին:

2. Մեծության զգացում ու ինքնավստահություն արտաքին քաղաքականությունում:

Նեո-օսմանիզմը թուրքիան դիտարկում է որպես տարածաշրջանային գերուժ: Նրա ռազմավարական տեսլականն ու մշակույթն արտացոլում են Օսմանյան ու Բյուզանդական կայս-

րությունների ծավալը: Ուստի թուրքիան էլ, որպես առանցքային երկիր, պետք է խաղա շատ ակտիվ դիվանագիտական, քաղաքական ու տնտեսական դեր ընդլայնված տարածաշրջանում, որի «կենտրոնը» հենց ինքն է: Այսօրինակ մեծ ամբիցիաներն էլ իրենց հերթին պարտավորեցնում են, որ պետությունը լինի խաղաղության մեջ բազմակի իր ինքնությունների հետ՝ ներառյալ իսլամական ու օսմանյան իր անցյալը: Համաձայն ընդդիմախոս քեմալիստների՝ նեո-օսմանիզմի այս ամբիցիոզ արտաքին քաղաքականությունն անիրատեսական է ու արկածախնդիր: Քրդերին մշակութային իրավունքներ տալը, իսկ իսլամին էլ քաղաքական ասպարեզ տրամադրելը վտանգի են ենթարկում աշխարհիկ, ազգային ու հանրապետական արժեքները: Այս տեսանկյունից քեմալիստները նեո-օսմանյան մտածելակերպը վտանգավոր են համարում թուրքիայի ազգային շահերին:

Նեո-օսմանիզմի երրորդ հատկանիշը նրա նպատակն է տեղ գրավել ոչ միայն իսլամական աշխարհում, այլ նաև Արևմուտքում: Ինչպես կայսերական Կոնստանդնուպոլիս-Ստամբուլը, որը տարածվում է թե՛ Եվրոպայում, թե՛ Ասիայում, նեո-օսմանիզմը նույնպես երկու դեմք ունի: Ի վերջո, Օսմանյան կայսրությունն էլ հայտնի էր որպես «Եվրոպայի հիվանդը», ոչ թե Ասիայի կամ Արաբստանի⁹⁰: Այս առումով եվրոպական ժառանգությունը նույնպես շատ էական է նեո-օսմանցիների համար: Նրանք բաց են Արևմուտքի ու արևմտյան քաղաքական ազդեցությունների առաջ գրեթե նույնքան որքան իսլամական ժառանգության: Ահա

⁹⁰ Ibid., p. 15;

այս պրագմատիզմն ու ճկունությունն է առանձնացնում Դավու-
թողլուին իր նախորդներից⁹¹:

Գյուլենական շարժում. Թուրքիայի մեղմ ու խորքային ուժը

Համաձայն մոտավոր հաշվարկների Թուրքիայի 70 մլն բնակչության 10–15 տոկոսը կապ ունի գյուլենական շարժման հետ: Աշխարհի մոտ 100 երկրներում շարժումը ունի նա 8–10 մլն հետևորդներ: Անհնար է հաշվել շարժման նախաձեռնած նախագծերն ու ծրագրերը: Լավագույն դեպքում տեսանելի են ավելի քան 1000 դպրոցներ հինգ մայրցամաքներում, վեց բարձրորակ հիվանդանոցներ, մեկ մասնավոր համալսարան, հարյուրավոր հանրակացարաններ, միջազգային բարեգործական կազմակերպություն, Թուրքիայում ամենից շատ կարդացվող թերթը և այլն:

Ո՞վ է Ֆեթհուլլահ Գյուլենը: Արդյո՞ք, նա Գանդին է, ինչպես պնդում են իր հետևորդները, թե՞ Խոմենին է, ինչպես վախենում են նրա շատ քննադատներ: Ինչո՞ւ է 70 տարեկան հիվանդ ծերունին, որն այսօր բնակվում է ԱՄՆ-ում, առաջացնում Թուրքիայի ազգաբնակչության մի կեսի մոտ այդքան խորը հարգանք, իսկ մյուս կեսի համար վախ ու սարսափ: Ինչո՞ւ է կայանում Գյուլենական շարժման ազդեցությունը Թուրքիայի ներքին քաղաքականությունում ու ինչպե՞ս է այն

օգնում Անկարայի արտաքին քաղաքական ռազմավարությանը:

Գյուլենական ու Ազգային կարծիք շարժումները

Մինչև 1990-ականների վերջը Գյուլենական ու Ազգային կարծիք շարժումները ներկայացնում էին իրար գրեթե հակընդդեմ ուղղություններ: Մինչ Գյուլենը կենտրոնացած էր դավանական ծառայությունների, իսլամական կրոնի վերաբերյալ ամսագրերի ու գրքերի տպագրության, ուսանողական հանրակացարանների բացման ու բիզնես աշխարհին այս ամենը հովանավորելու գործում միավորելու հարցերի վրա, Ազգային կարծիք շարժումը ներկայացնում էր Թուրքիայում քաղաքական իսլամիզմը՝ հիմնելով իսլամիստական քաղաքական կուսակցություններ: Մինչդեռ Գյուլենական շարժումը խուսափում էր կուսակցական քաղաքականությունից՝ պնդելով, որ ամենակարևոր նախագիծը կլինի դաստիարակել երիտասարդությունն ու ստեղծել «ուկե սերունդ»:

Ֆեթհուլլահ Գյուլենը նախաձեռնել է իր շարժումը 1970-ականների սկզբներին՝ Իզմիրի շրջանում, որտեղ նա քարոզիչ էր: Իր հայացքներով նա մեծապես ազդված է 20-րդ դարի առաջին կեսին գործող Մաիդ Նուրսիից, որը նուրջուական շարժման հիմնադիրն էր: Մասնավորապես դա կրթության ու չափավոր իսլամի միջոցով հասարակության փոփոխությունն է⁹²: Գյուլենը ինքը նուրջուական համայնքի անդամ է եղել ու շատ է փոխառել թե

⁹¹ Ibid., p. 16;

⁹² Bayram Balci, Fethullah Gülen's Missionary Schools in Central Asia and their Role in the Spreading of Turkism and Islam, Religion, State & Society, Vol. 31, No. 2, 2003, pp.151–152;

գաղափարախոսությունից, թե կազմակերպչական ձևից⁹³: Ուստի, պատահական չէ, որ այս երկու շարժումները հաճախ միավորում են ու համարում նույնը:

1970-ականների ընթացքում Գյուլենը կենտրոնացած էր մզկիթների գործունեության և ուսանողների հանրակացարանային պայմաններով ապահովելու հարցերի վրա: 1980-ականներին նա սկսեց բացել ուսանողական հանրակացարաններ, համալսարանի ընդունելության քննությունների վարժեցման կուրսեր ու դպրոցներ ողջ Թուրքիայով մեկ: Շարժումը նաև հիմնեց մեդիա ցանց, ներառյալ հրատարակչատներ (օր. Նիլ հրատարակչատունը), ամսագրեր (օր. Սըզընթը՝ Արտահոսք, և Յենի Ումիթ՝ Նոր Հույս) և թերթ (Ջաման՝ Ժամանակ): Այսպիսով, մինչև 1990-ականների կեսերը Գյուլենական շարժումը կենտրոնացած էր կրթության վրա ու խուսափում էր քաղաքական դեբատներից: Շարժման առաջնորդ Ֆեթհուլահ Գյուլենը կապ էր հաստատում հանրության հետ միայն մզկիթներում քարոզելով ու շարժման ամսագրերում հոդվածներ հրատարակելով:

Մինևույն ժամանակ՝ 1970-ական թվականներին, Նեջմեթթին Էրբաքանը նախաձեռնեց Ազգային կարծիք շարժումը: Նրա ղեկավարած կուսակցությունները՝ Միլլի Նիզամ (Ազգային կարգ) կուսակցությունը (1970-1971թթ.) ու Միլլի Նեզամեթ (Ազգային փրկության) կուսակցությունը (1972-1980թթ.) մեղադրվել են հակաաշխարհիկ իսլամիզմի մեջ ու փակվել 1971թ. ու 1980թ. ռազմական հեղաշրջումներից հետո: 1983թ. Էրբաքանն ու իր հետևորդները հիմնեցին Ռեֆահ (Բարօրություն) կուսակցությու-

նը: Բարօրություն կուսակցությունը հաջողություններ ունեցավ 1994թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ու ստացավ Ստամբուլի ու Անկարայի քաղաքապետերի աթոռները: Իսկ խորհրդարանական ընտրություններում Բարօրություն կուսակցությունն ավելացրեց իր քվեների քանակը և 1987թ. 7,2 տոկոսից հասավ 21,4 տոկոսի 1995թ. ու դարձավ առաջատար կուսակցություն: Էրբաքանը դարձավ վարչապետ 1996թ. Բարօրություն կուսակցություն-Ճշմարիտ ուղի կուսակցություն կոալիցիայի արդյունքում:

Այս տարիներին Գյուլենական ու Ազգային կարծիք շարժումների միջև լարվածությունը խորացավ: Այդ ժամանակ Գյուլենական շարժումը երկու վերափոխում էր ապրել: Նախ այն արդեն դարձել էր միջազգային շարժում՝ դպրոցներ ու բիզնես ցանցեր ունենալով աշխարհի տարբեր մասերում: Խորհրդային Միության փլուզումից հետո նմանատիպ դպրոցներ էին բացվել նորանկախ շատ հանրապետություններում: Ապա Գյուլենի շարժումը տարածել էր իր ուսումնական ցանցն ասիական, եվրոպական, աֆրիկյան ու հյուսիս-ամերիկյան մի շարք երկրներ՝ արդյունքում ունենալով գրեթե 100 երկրում ավելի քան 500 դպրոց ու 6 համալսարան⁹⁴: Ավելին, շարժումն ուներ միջազգային մեդիա ցանց՝ ներառյալ Ջաման թերթը, որը հրատարակվում էր մոտ տասն երկրում, միաջազգային ծածկույթ ունեցող հեռուստաալիք (STV) ու միջազգային ամսագիր անգլերեն լեզվով (The Fountain): Որքան Գյուլենական շարժումը դառնում էր միջազգային՝ օգտվելով գլոբալիզացիայի ընձեռած հնարավորություններից, այդ-

⁹³ Helen Rose Ebaugh, *The Gülen Movement: A Sociological Analysis of a Civic Movement Rooted in Moderate Islam*, Springer Dordrecht Heidelberg London New York, p.47.

⁹⁴ Գյուլենական շարժման դպրոցների ցուցակի համար տես՝ *Yeni Aktüel*, No.13, October 11-17, 2005:

քան այն զարգացնում էր զլոբալացմանը սատարող միտումը: Գյուլենն անձամբ նախաձեռնեց միջկրոնական որոշ երկխոսություններ Թուրքիայում ու նրա սահմաններից դուրս: Նա հանդիպեց կրոնական առաջնորդների հետ, մասնավորապես Հովհաննես Պողոս Երկրորդ պապի, համայն հունաց պատրիարք Բարթոլոմեոսի ու երբայական գլխավոր ռաբբի Էլիյահու Բ. Դորոնի հետ⁹⁵:

Ինչևէ, Էրբաքանն ու իր հետևորդները հակառակ տեսակետներ ունեին զլոբալացման, Թուրքիայի ԵՄ անդամակցության ու միջկրոնական երկխոսության մասին: Բարժրություն կուսակցությունը բացահայտորեն դեմ էր արտահայտվում Թուրքիայի ԵՄ անդամակցությանը՝ այն դիտարկելով որպես «քրիստոնեական ակումբ»: Որպես իսլամիստական արտաքին քաղաքականության օրակարգի մի հատված, Էրբաքանն իր առաջին այցերը կատարեց Իրան ու Լիբիա: Նա նաև նախաձեռնեց մուսուլմանական ութ երկրների միությունը, որը հայտնի դարձավ որպես Զարգացող ութնյակ՝ Developing Eight (D-8)⁹⁶:

Գյուլենական շարժումը երկրորդ անգամ վերափոխվեց 1990-ականների կեսերին, երբ զարգացրեց հանրային կապերը: Հասարակական գործունեությունը համակարգելու համար շարժումը հիմնեց Լրագրողների ու գրողների հիմնադրամը, որը կազմակերպում էր ընթրիքներ Ստամբուլի ու Անկարայի հինգաստղանի հյուրանոցներում, որպեսզի պահեր շարժման կապը թուրքական էլիտայի հետ: Բազմաթիվ քաղաքական գործիչներ, լրագ-

⁹⁵ Bulent Aras and Omer Caha, Fethullah Gulen and his Liberal «Turkish Islam» Movement, Middle East Review of International Affairs, Vol. 4, No. 4 (December 2000), p. 32;

⁹⁶ D-8-ի անդամներն են Թուրքիան, Իրանը, Եգիպտոսը, Պակիստանը, Բանգլադեշը, Ինդոնեզիան, Մալայզիան ու Նիգերիան:

րողներ ու գիտնականներ էին այցելում այս ընթրիքներն ու հիմադրամի այլ միջոցառումներ, որտեղ Գյուլենը Էլույթների միջոցով կիսվում էր իր գաղափարներով: Այդ Էլույթներն, ինչպես նաև նրա հարցազրույցները մեծ տպաքանակ ունեցող թերթերին՝ (Սաբահ և Հյուրիեթ), որտեղ շեշտվում էին ժողովրդավարության, հանդուրժողականության ու երկխոսության սկզբունքները, մեծ արձագանք էին ստանում երկրի բնակչության մոտ ու դրական էին գնահատվում երկրի աշխարհիկ էլիտայի կողմից:

«մինարեթները մեր սվիններն են, գմբեթները՝ մեր զրահազլխարկները, իսկ մզկիթները՝ մեր գորանոցները»...

Հատված Էրդողանի ճառից

Մյուս կողմից Էրբաքանը գրեթե հակառակ ուղին էր որդեգրել: Նա գնալով ավելի ծայրահեղ էր դառնում ու նույնիսկ հայտարարում, թե Թուրքիայում վարչակարգը վաղ, թե ուշ փոխվելու է, հարցը միայն նրանում է, թե ինչպես դա կլինի՝ «արյամբ, թե՞ առանց արյան»: Էրբաքանի նման պահվածքը առիթ տվեց զինվորականությանը 1997թ. փետրվարի 28-ին իրագործել թավշյա հեղաշրջում: Գեներալներն ու նրանց քաղաքացիական հետևորդներն արդարացրեցին զինվորականության միջամտությունը նրանով, որ Էրբաքանի վարչապետությունը խրախուսում էր իսլամիստական ռեակցիոնիզմը: Միջամտությունից հետո մի քանի կառույցներ ու անձինք խնդրեցին Էրբաքանին հրաժարական

տալ: Գյուլենը միացավ նրանց 1997թ. ապրիլի 16-ին՝ հարցազրույց տալով Kanal D հեռուստաալիքին: Հաջորդ օրը երկու հիմնական թերթեր Հյուրիյեթն ու Միլլիյեթը Գյուլենի՝ Էրբաքանին ուղղված քննադատությունը դարձրեցին թողարկման հիմնական նյութը: Սա նշանակում էր երկու շարժումների միջև լարվածության խորացում: Այս ճգնաժամից հետո էլ թե՛ Թուրքիայի ներքաղաքական դաշտում, ընդհանրապես, թե՛ իսլամիստական երկու շարժման հարաբերություններում, մասնավորապես, սկսվեց նոր փուլ:

Գյուլենական շարժումը և Արդարություն ու զարգացում կուսակցությունը

1997թ. հունիսին Էրբաքանը հրաժարական տվեց: Յոթ ամիս անց՝ 1998թ. հունվարին, Սահամանդրական դատարանը փակեց Բարօրություն կուսակցությունը: Ի դեպ, Սահամանդրական դատարանի նախագահը Թուրքիայի հաջորդ նախագահ Ահմեդ Նեջդետ Սեզերն էր⁹⁷, իսկ փակման հիմնական հիմնավորումներից մեկն էլ ԲԿ անդամ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ճառն էր Միիրթում, որտեղ նա Զիյա Գյոքալփի «Զինվորի աղոթքը» բանաստեղծության բառերը փոխելով արտասանել է, թե «մինարեթները մեր սվիններն են, գմբեթները՝ մեր գրահագլխարկները (աղեմ), իսկ մզկիթները՝ մեր գորանոցները»⁹⁸:

⁹⁷ Aras, Cahra, Fethullah Gulen, p. 37;

⁹⁸ Milliyyet, December 27, 1997.

ԲԿ-ի փակումից հետո կուսակցության անդամները հիմնեցին Ֆազիլեթ (Առաքինություն) կուսակցությունը: Այս կուսակցությունում ի հայտ եկան տարաձայնություններ Ազգային կարծիքի հին սերնդի՝ Էրբաքանի առաջնորդությամբ ու նոր սերնդի միջև: Նոր սերունդի ղեկավարներն էին երեք անձինք՝ Թայիփ Էրդողան, Արդուլլահ Գյուլ ու Բյուլենթ Արընչ: Այս երեք առաջնորդներն ունեին ավելի լավ անձնական հարաբերություններ Գյուլենական շարժման հետ քան Էրբաքանը: Էրդողանը մասնակցել էր Լրագրողների ու գրողների հիմնադրամի երկխոսության հանդիպումներին ու ելույթ ունեցել: Արընչն առաջին քաղաքական գործիչն էր, որը կանգնեց ի պաշտպանություն Գյուլենին, երբ ԶԼՄ-ները 1999թ. հունիսին նրա դեմ արշավ սկսեցին: Արշավն սկսվեց նրանից հետո, երբ հատուկ ծառայությունների գործակալը, որ թափանցել էր նեղ շրջանակ, գաղտնի կերպով ձայնագրել էր Գյուլենին, երբ նա ասում էր, թե Թուրքիայի վարչակարգը պետք է փոփոխվի դանդաղ գործընթացով՝ կառավարությունում ու վարչակարգում հանգուցային պաշտոններն ստանձնելու ուղիով: Այս ձայնագրությունները հեռարձակվել են 1999թ. հունիսի 18-ին ATV, իսկ ապա նաև այլ ալիքներով⁹⁹:

Բացի անձնական հարաբերություններից, իսլամիստների երիտասարդ սերունդը գաղափարապես մոտ էր Գյուլենի շարժմանը: Մասնավորապես, արտաքին քաղաքականության ասպարեզում նրանք աջակցում էին Թուրքիայի ԵՄ անդամակցությանը, իսկ ներքին քաղաքականությունում՝ կողմնակից էին երկխոսությանը:

⁹⁹ www.youtube.com/watch?v=oNi3Z3qZ7Z4; www.youtube.com/watch?v=4tbnGnzdmgU; www.youtube.com/watch?v=SRAYGkEI9S0, դիտվել է՝ 22 մայիսի, 2008թ.:

Ազգային կարծիքի երիտասարդ սերունդն ու Գյուլենական շարժումն ունենին գաղափարների փոխանակման երկու վայր: Առաջինը Գյուլենի մեդիա ցանցն էր ու մասնավորապես Ջաման օրաթերթը, որտեղ Էրդողանն ու Արընչը ժամանակ առ ժամանակ հոդվածներ էին հրապարակում¹⁰⁰: Հաջորդ վայրը Գյուլենական շարժման կողմից կազմակերպված Աբանթ լճի հանդիպումներն էին, որտեղ ամեն տարի հիսուն մտավորական (գիտնականներ, լրագրողներ, քաղաքական գործիչներ) տարբեր գաղափարական ճամբարներից (իսլամիստներ, ազատականներ, սոցիալիստներ, ազգայնականներ ու քեմալիստներ) քննարկում էին Թուրքիայի խնդիրները: Այս հանդիպումները ու այնտեղ տեղի ունեցող քննարկումները մեծապես օգնեցին նաև նոր կուսակցության՝ ԱԶԿ-ի ձևավորմանը, որտեղ Էրդողանին միացան նախկինում Ազգային կարծիք շարժման հետ կապ չունեցող անձինք:

2001թ. Սահմանադրական դատարանը փակեց Առաքինություն կուսակցությունը: Կուսակցության փակումից հետո նրա անդամները, ովքեր գաղափարապես հետևում էին Էրբաքանին¹⁰¹, հիմնեցին նոր կուսակցություն՝ Սաադեթ (Երջանկություն) կուսակցությունը, մինչդեռ Էրդողանը, Գյուլն ու Արընչը հրաժարվեցին միանալ նրանց ու հիմնեցին առանձին կուսակցություն՝ Արդարություն ու զարգացումը: ԵԿ-ն ուներ իսլամիստական ու հակաեվրոպական քաղաքական կուրս: ԱԶԿ-ն, ընդհակառակը, հրաժարվում էր իսլամիստական պիտակավորումից ու կողմ էր Թուրքիայի ԵՄ անդամակցությանը:

¹⁰⁰ Էրդողանի ու Արընչի հետ հարցազրույցները, *Zaman*, February 6, 2000;

¹⁰¹ Էրբաքանն այդ ժամանակ գրկված էր քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից:

2002թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական ընտրություններին ԵԿ-ն մարզինալացվեց՝ ստանալով 2,5 տոկոս քվե, իսկ ԱԶԿ-ն Թուրքիայի քաղաքական պատմության մեջ բացեց նոր էջ՝ ստանալով 34,3 տոկոս քվե ու խորհրդարանում տեղերի գրեթե երկու երրորդը: Էրդողանը, Գյուլն ու Արընչը բաժանեցին իրար մեջ Թուրքիայի կարևորագույն պաշտոնները:

Ներքին ու արտաքին քաղաքականություններում ունենալով բազում գաղափարական ընդհանրություններ՝ Գյուլենական շարժումն աջակցում է ԱԶԿ կառավարությանն իր հզոր մեդիա ցանցով: Ի դեպ Շարժումն ակտիվ է նաև միջազգային բիզնեսում: 2005թ. այս շարժման հետ կապված ձեռնարկատերերը միավորվեցին Թուրքիայի ձեռնարկատերերի ու արդյունաբերողների համադաշնության (TUSKON) մեջ, որը ներառեց 124 բիզնես միություններ ու 9500 ձեռներեց: Այսօր տեսնում ենք, որ մի քանի տարի առաջ շատերի համար անհայտ Բանկ Ասիան, որը մուսուլմանական սկզբունքներով տոկոս չի գանձում և հանդիսանում է աշխարհով մեկ գյուլենական դպրոցների դրամավարկային ծառայություններ մատուցող հիմնական բանկը, դարձել է Թուրքիայի առաջատար բանկերից մեկը:

Ամեն դեպքում, որքան էլ հստակ ու բացահայտ կապ չկա ԱԶԿ-ի ու գյուլենականների միջև, Թուրքիայի ներքաղաքական դաշտում տեսնում ենք, որ ԱԶԿ-ն քայլ առ քայլ իրականացնում է Ֆեթոհիլլահ Գյուլենի մի շարք գաղափարներ: Դրանցից մեկը միջկրոնական հարաբերություններն են ու կրոնական հանդուրժողականությունը: 2010թ. Հայաստանում լայնորեն քննարկվում էր Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու վերաբացումը, Դիարբեքիրի Սբ. Կիրակոս եկեղեցու վերանորոգման աշխատանքները՝

դրանք դիտարկելով Անկարայի՝ ՀՀ-ին ուղղված քայլեր: Սակայն եթե դրան գումարեն Տրաքոնում հունական Սումելա վանքի վերաբացումը, ինչպես նաև ասորական ու եգիպական սրբավայրերի վերաբացումները, ապա կտեսնենք, որ դա քիչ ավելի մեծ ռազմավարության մասնիկն է: Այն համապատասխանում է Գյուլենական շարժման գաղափարախոսությանը, որը սատարում է ոչ մահմեդական փոքրամասնությունների կրոնական իրավունքները: Դեռ 2003թ. հուլիս 15-ին ԱԶԿ-ի խմբակցությունը խորհրդարանում առաջնորդեց կրոնական ինստիտուտների վերաբերյալ իրավական բարեփոխումը, որի արդյունքում «մզկիթ» բառը օրենքում փոխարինվեց «պաշտամունքի վայր» արտահայտությամբ: Ընդհանուր առմամբ, երբ պոլսահայ համայնքում գրույց է գնում Թուրքիայի ներքաղաքական կյանքի մասին, հայերի մեծ մասը սատարում են ԱԶԿ-ին որպես միակ այլընտրանք: Պատահական չէ, որ Պատրիարք Մեսրոպ Երկրորդը 2007թ. խորհրդարանական ընտրությունների նախօրեին բացահայտորեն հայտարարեց, թե համայնքը քվեարկելու է ԱԶԿ-ի օգտին¹⁰²:

Մինչև վերջերս Գյուլենական շարժումը բացահայտորեն չէր սատարել որևէ քաղաքական կուսակցության: Շարժումը 1990-ականների սկզբներին մոտ հարաբերությունների մեջ էր Թուրգութ Օզալի հետ, իսկ 1990-ականների վերջերին՝ Բյուլենթ Էջևիթի հետ, սակայն այն միայն 2007թ հուլիսի 22-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ բացահայտորեն սատարեց ԱԶԿ-ին:

2007թ. բավականին կարևոր շրջադարձային կետ էր Թուրքիայի ներքաղաքական պատմությունում: 2007թ. ապրիլին ավարտվում էր 10-րդ նախագահ Ահմեդ Նեջդեդ Սեզերի պաշտոնավարման ժամկետն ու ժամանակն էր նոր ընտրության: 1982թ. սահմանադրությամբ նախագահի պաշտոնը շատ էական էր Թուրքիայում՝ հատկապես աշխարհիկության գերիշխանությունը պահպանելու տեսանկյունից: Նախագահի պաշտոնը էական է, քանի որ նա է վավերացնում բարձրաստիճան գեներալների ու քաղաքացիական բյուրոկրատների նշանակումները, ինչպես նաև նշանակում է բարձրագույն աստյանի դատավորներին ու համալսարանների ռեկտորներին: Նախագահը ընտրվում էր 7 տարով խորհրդարանի կողմից, ու զինվորականությունը մշտապես միջամտում էր, որպեսզի ընտրվի աշխարհիկության կողմնակից անձնավորություն: ԱԶԿ-ն, այնուամենայնիվ, դրեց Գյուլի թեկնածությունը: Աշխարհիկության կողմնակիցները հավաքեցին մեկ միլիոնից ավել ցուցարարների, ովքեր դեմ էին հանդես գալիս Գյուլի թեկնածությանը: Խորհրդարանական մյուս կուսակցությունների բոյկոտի արդյունքում առաջին փուլում Գյուլը չկարողացավ հավաքել ձայների անհրաժեշտ քանակը: Ավելին, վաղ, թե ուշ Գյուլի հաղթանակը զգացող զինվորականությունը իր համացանցային կայքում հրատարակեց մի հայտարարություն, որտեղ սպառնում էր միջամտությամբ: Սա Թուրքիայի արդի պատմության մեջ ստացավ էլեկտրոնային հեղաշրջում անվանումը: Արդյունքում, թեև Գյուլը չհրաժարվեց իր թեկնածությունից, սակայն վերջնական լուծումը թողնվեց խորհրդարանական ընտրություններից հետո:

¹⁰² «Ermeni Cemaati Seçimlerde Ak Parti'yi Destekleyecek, *Yeni Şafak*, June 4, 2007.

Այս ընթացքում Գյուլենական շարժումն, իր ողջ մեղիա ցանցով մեծապես աջակցում էր նրա թեկնածությանը: Մասնավորապես, Զամանը, որն իր 700 հազար տպաքանակով դարձել էր ամենակարգացվող թերթը, լայնորեն արշավում էր ԱԶԿ-ի օգտին: Գյուլենն անձամբ ցուցաբերեց աննախադեպ աջակցություն ԱԶԿ-ին ընտրություններում: ԱԶԿ-ն խորհրդարանական ընտրություններում ստացավ 47 տոկոս ձայն, իսկ Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը կորցրեց խորհրդարանական մանդատների գրեթե կեսը: Նոր խորհրդարանն արդեն օգոստոսի 28-ին ընտրեց Արդուլլահ Գյուլին որպես Թուրքիայի 11-րդ նախագահ: Նախագահ, որի կինը կապում է իսլամական գլխաշոր: Նախագահ, որը սերում է իսլամիստական կուսակցությունից:

Գյուլենական շարժման կարևորությունը

Գյուլենի շարժման կարևորությունը քննարկելու համար պետք է այն դիտարկել թե՛ կազմակերպության կառուցվածքի, թե՛ շարժման՝ Թուրքիայի քաղաքական ու տնտեսական համակարգում դերի, թե՛ Թուրքիայից դուրս նրա ազդեցության շրջանակի տեսանկյունից:

Նախ, կազմակերպության կառուցվածքը հիերարխիկ է ու ոչ ժողովրդավարական, թեև համայնքը քարոզում է ազատական մոտեցումներ ու տարբերությունների հանդեպ հանդուրժողականություն: Գյուլենը շարժման միակ առաջնորդն է ու աստիճանակարգը ձգվում է վերևից մինչև ներքև արիների (ավագ եղբայրների) միջոցով: Հիերարխիան խիստ պահպանվում է, և ամեն մակարդակի արի ունի միայն որոշակի գիտելիք գործունեության

որոշակի փուլի մասին և խուսափում է հարցեր տալ ավելի բարձր մակարդակում տեղի ունեցողի մասին: Թեև, բնականաբար, նա կարող է զրուցել այլ արիի հետ գործունեության մասին ոչ պաշտոնական կերպով: Թեև նման կառույցը թույլ է տալիս խուսափել կառավարության կողմից անձնական հետապնդումից, սակայն սա մի շարք հարցականներ է բարձրացնում կառույցում ժողովրդավարության ու որոշումների ընդունման գործընթացում հետևողների մասնակցության մասով, ինչը շատ հիշեցնում է իսլամական խումբ, որտեղ շեյխն ու իր մերձավոր աշակերտները որոշում են ողջ խմբի ապագան:

Այդուհանդերձ, Գյուլենի համայնքը մեծաքանակ է: Այն հիմնականում մոբիլիզացնում է այն հատվածը, որը կապված չէ պետության հետ: 1980-90-ական թվականներին Թուրգութ Օզալի ղեկավարությամբ Թուրքիայի տնտեսությունն ազատականացվեց ու դրվեցին արտահանմանն ուղղված տնտեսության հիմքերը: Սա բերեց նոր, դինամիկ փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը հիմնականում ավանդապես պահպանողական անատոլիական քաղաքներում: Հենց հասարակության այս սեգմենտն է և մոբիլիզացվել Գյուլենի շարժման կողմից: Ու նոր ծնված ձեռնարկատերերը՝ Անատոլիական վագրերը, պատրաստ էին փոխել առկա տնտեսական ռեժիմն ու ընդհանրապես քաղաքական դաշտը, ինչը և արեցին ԱԶԿ-ի ձեռքերով¹⁰³:

Թուրքիայի սահմաններից դուրս Գյուլենի շարժումը կարևոր է հատկապես Կովկասի ու Կենտրոնական Ասիայի թյուրքական

¹⁰³ Aras, Caha, Fethullah Gulen, pp. 38-39;

երկրներում, որտեղ թուրքական իսլամի վրա Գյուլենի շեշտադրումը մրցակցում է Իրանի համանման ազդեցության հետ:

**Գյուլենական դպրոցները որպես արտաքին քաղաքական
ռազմավարական գործիք Կենտրոնական Ասիայում**

1991թ. Խորհրդային Միության փլուզումը ու Կովկասի և Կենտրոնական Ասիայի թուրքական հանրապետությունների անկախացումը հնարավորություն ընձեռեց գյուլենական շարժմանը դառնալ միջազգային: Դեռ 1980-ականների վերջերին իր ելույթներում Գյուլենը խորհուրդ էր տալիս իր հետևորդներին պատրաստվել գործունեություն ծավալելու այն երկրներում, որոնք մոտ ապագայում անկախանալու են, որոնց մեծ մասը լինելու են թուրքական՝ ծագումով ու լեզվով¹⁰⁴: Արդեն 1992թ. գյուլենական մի խումբ գործարարներ ու ուսուցիչներ բացեցին առաջին դպրոցը Ադրբեջանում: Նույն տարում գյուլենական դպրոց բացվեց նաև Ղազախստանում, իսկ հաջորդ երկու տարվա ընթացքում այդ երկրում բացվեց ևս 28 դպրոց: Ղրղզստանում բացվեց շուրջ 12 դպրոց և մեկ համալսարան, իսկ Թուրքմենստանում հիմնադրվեց 20 դպրոց¹⁰⁵:

Գյուլենական շարժման զարգացման համար ժամանակը շատ բարենպաստ էր երկու պատճառով: Նախ, Թուրքիայի ու Կենտրոնական Ասիայի հանրապետությունների միջև հարաբերությունները զերազանց էին, թերևս քանի որ նոր էին: Թուրքերն առաջ էին քաշում «զարգացման թուրքական մոդելը», որը բերե-

¹⁰⁴ Helen Rose Ebaugh, *The Gülen Movement*, p.43

¹⁰⁵ Ավելի մանրամասն տես՝ Kalyoncu M., *A civilian response to ethno-religious conflict: the Gülen movement in southeast, Turkey*, Light, NJ, 2008.

լու էր «թյուրք եղբայրների վերամիավորման»: Երկրորդ, Թուրքիայի առաջնորդ Թուրգութ Օզալը հիմնականում հենց նույն՝ նորանկախ երկրների «ավագ եղբայրը դառնալու» մղումներից էլնելով սկզբում աջակցեց գյուլենական դպրոցների գործունեությանը: Այսպես, գյուլենական դպրոցներում տեղադրված էր Թուրգութ Օզալի մեծ պատկերը:

Իրականում, Գյուլենի առաջամարտիկները Կենտրոնական Ասիայում գործունեություն ծավալելու համար չէին սպասել բարենպաստ պայմանների: Նույնիսկ Խորհրդային Միության փլուզումից ու Կենտրոնական Ասիայի երկրների անկախացումից առաջ շարժման անդամ գործարարների մի ստվար զանգված այցելել էր տարածաշրջան: Նախքան Խորհրդային Միության փլուզումը Թուրքիայի տարբեր քաղաքներում շատ նուրջուներ՝ գործարարներ, ուսանողներ, ուսուցիչներ, լրագրողներ, պատրաստվում էին «գրավել» Կենտրոնական Ասիան¹⁰⁶: Թյուրքական հանրապետությունների անկախացումից առաջ Գյուլենն ու իր խորհրդականները համոզում էին այս մարդկանց գնալ Կենտրոնական Ասիա:

Հետաքրքիր է թուրքերի՝ մի երկրում հաստատվելու մեթոդը, որը հիմնականում միշտ նույնն է: Թուրքիայի որևէ մի քաղաքից, օրինակ Բուրսայից, գործարարները որոշում են կենտրոնացնել իրենց ջանքերը որևէ կոնկրետ կենտրոնասիական քաղաքի նկատմամբ, օրինակ Թաշքենթի: Նուրջուական ներդրումները դառնում են էական այդ քաղաքի համար, ու արդյունքում քաղաքները դառնում են քույրեր: Նուրջուական խմբի անդամները,

¹⁰⁶ Can, 1996, pp. 53–61 Can, E. (1996) *Fethullah Gülen Hocaefendi ile ufuk turu* (Istanbul, A.D. Yayincılık).

որոնց կարելի է համեմատել միսիոներների հետ, ուղարկվում են շարժման կողմից հստակ նպատակներով՝ կապ հաստատել կարևոր ընկերությունների, չինովնիկների ու անձանց հետ, որպեսզի հասկանան տեղական կարիքները: Դրանից հետո նրանք հրավիրում են մի քանի կարևոր անձանց Թուրքիա, որտեղ վերջիններս հյուրընկալվում են նուրջուական համայնքներում, նրանց ցույց են տալիս մասնավոր դպրոցներն ու հիմնադրամները: Այս կապերի շնորհիվ դյուրին է դառնում իրականացնել աշխատանքները Կենտրոնական Ասիայում:

Այսպիսով, Կենտրոնական Ասիայում հաստատված այս կարևոր անձանց ցանցը հանգուցային է դառնում համայնքի համար: Նրանց օգնությամբ գյուլենականները կարողանում են հաղթահարել բյուրոկրատական արգելքները, որոնց առջև կանգնում էին ներդրում անել ցանկացող օտարերկրացիները: Շնորհիվ այդ կապերի, տվյալ երկրներում նրանց թույլատրում էին վերցնել մի հին դպրոց ու վերափոխել այն: Նոր դպրոցը մնում էր պետության վերահսկողության ներքո, ինչը թույլ էր տալիս հոգալ պահպանման ծախսերը՝ գազ, լույս, էլեկտրաէներգիա: Մյուս կողմից, բոլոր մնացած ծախսերը, օրինակ գրքեր, սեղանները, համակարգիչներ, լաբորատորիաներ և այլն, նվիրաբերվում էին թուրքական ընկերությունների կողմից¹⁰⁷: Շարժման՝ Կենտրոնական Ասիայում հաստատվելու ռազմավարությունը բավականին հաջողված էր: Միայն երկու տարվա ընթացքում՝ 1991–1993թթ. հարյուրավոր ընկերություններ ու տասնյակ դպրոցներ բացվեցին Կենտրոնական Ասիայում, իսկ համայնքի խոսափող Ջաման

¹⁰⁷ Balci, Fethullah Gülen's Missionary Schools, pp.154–155;

թերթը հրապարակվում է բոլոր հանրապետությունների մայրաքաղաքներում:

Կենտրոնական Ասիայի թուրքական ընկերությունների մեծ մասը պատկանում էին նուրջուներին: Նրանց մեծ մասը փոքր ձեռնարկություններ են, որոնք զբաղվում են շինարարությամբ, ռեստորանային բիզնեսով, թեթև արդյունաբերությամբ: Ընկերությունը կարելի է անվանել «նուրջուական», երբ նրա տնօրենները ու այլ անդամներ հետևում են Նուրսիի և Գյուլենի գաղափարներին: Ընկերությունը հիմնականում փորձում է քարոզել այս գաղափարները տարբեր եղանակներով: Օրինակ, անկախության առաջին տարիներին այս ընկերությունները Թուրքիայից գրքեր ու գրականություն էին ներկրում Սաիդ Նուրսիի ու նրա շարժման մասին: Ամեն երկրում նուրջուական ընկերությունների մեծ մասը կազմում են գործարարների միություններ, որոնց միջոցով փորձում են առաջ տանել իրենց շահերը:

Աղյուսակ 1

Ֆեթուլլահ Գյուլենի շարժման դպրոցները Կենտրոնական Ասիայում՝ ըստ 1997–1998թթ. տվյալների

Երկիր	Բնակչության քանակը	Դպրոցների քանակը	Աշակերտների քանակը	Ուսուցիչների քանակը	Հովանավոր թուրքական ընկերության հայրենի քաղաքը
Ուզբեկստան	24 մլն	18	3334	210	Բուրսա
Ղազախստան	17 մլն	29	5684	580	Ստամբուլ

Ղրղզստան	5 մլն	12	3100	323	Ադափագարը
Թուրքմենստան	4 մլն	13	3294	353	Անկարա
Հնդկաստան	50 մլն	72	15372	1466	

Դպրոցների քանակը կենտրոնասիական երկրներում հավասար չեն: Ամենից շատ բնակչություն ունի Ուզբեկստանը, սակայն այնտեղ դպրոցներն ի սկզբանե համեմատաբար շատ չէին: Թաշքենթը տարբեր պատճառներով միշտ փորձել է սահմանափակել նրանց ներկայությունը ու ի վերջո դրանք արգելվեցին 2000թ. սեպտեմբերին:

Այս պահին դպրոցների ամենամեծ քանակը Ղազախստանում է, որտեղ համայնքն ունի 28 ավագ դպրոց ու Մուլեյման Դեմիրելի անվան համալսարանը: Դպրոցների քանակի աճին նպաստող գործոններից մեկն էլ այն է, որ Ղազախստանը ավելի քիչ կենտրոնացված է քան մյուս երկրները, այսինքն շրջանային ղեկավարներն ունեն բավականին լայն իրավասություններ: Ղազախստանում շրջանների ղեկավարների առաջնայնությունների մեջ է մտնում օտարերկրյա ընկերությունների հետ կրթական պայմանավորվածությունների հասնելը: Այսպես, 1991-1992թթ. Գյուլենի ներկայացուցիչներն իրենց պայմանագրերը ստորագրում էին հենց մարզային ղեկավարների հետ: Ղազախստանի կառավարությունն իր հերթին դրականորեն էր վերաբերվում այս համագործակցությանը, քանի որ դա օգնում էր արագացնել երկրի «ղազախացումը»՝ ընդդեմ ռուսական ուժեղ ազդեցության:

Թուրքական դպրոցներ շատ կան նաև Ղրղզստանում ու Թուրքմենստանում՝ չնայած համեմատաբար սակավ բնակչությանը:

Աղյուսակ 2

Ֆեթհուլլահ Գյուլենի շարժման դպրոցներն աշխարհում՝
ըստ 1997թ. տվյալների

Երկիր	Դպրոցների քանակը	Աշակերտների քանակը	Ուսուցիչների քանակը
Ղազախստան	29	5684	580
Ադրբեջան	12	3023	338
Ուզբեկստան	18	3334	210
Թուրքմենստան	13	3294	353
Ղրղզստան	12	3100	323
Տաջիկստան	5	694	107
Թաթարստան	6	1802	217
Չուվաշիա	2	311	79
Բաշկիրիա	3	462	88
Կարաչայ	1	93	13
Միբիր	4	438	101
Դաղստան	5	938	123
Ռուսաստան (այլ վայրեր)	5	323	63
Ղրիմ	2	218	47
Վրաստան	3	244	48
Մոնղոլիա	4	442	85
Բուլղարիա	4	523	123
Մոլդավիա	2	225	40
Ռումինիա	4	415	78
Ալբանիա	2	966	74
Բոսնիա	2	109	22
Մակեդոնիա	1	102	16

Իրաք	4	184	26
Ավստրալիա	5	718	37
Ինդոնեզիա	1	41	18
Ընդհանուր ¹⁰⁸	149	27,683	3209

Դպրոցների կառուցվածքն ու գործունեությունը

Յուրաքանչյուր հանրապետությունում դպրոցի կառավարումը գլխավոր վարչության ու նրա ղեկավարի՝ գլխավոր տնօրենի ձեռքում է: Նա հիմնականում նուրջուական հեղինակավոր «Թուրքիայի լրագրողների ու գրողների հիմնադրամի» անդամ է: Գլխավոր տնօրենը համակարգում է հարաբերությունները թուրքական բիզնեսի, տեղի կառավարության, հատկապես կրթության նախարարության հետ:

Հիերարխիայի հաջորդ մակարդակին դպրոցի տնօրենն է: Բոլոր տնօրենները հանդիպում են ամսական մեկ անգամ մայրաքաղաքում, որպեսզի գլխավոր տնօրենի հետ քննարկեն առաքելությունը, օրակարգային փոփոխությունները և այլն: Ի դեպ, գլխավոր վարչությունում կան նաև մասնագետներ, ովքեր «առարկաների պատասխանատուներն» են ու մշակում են ամեն առարկայի համար հատուկ դասընթաց, որին պետք է հետևեն ցանցի բոլոր դպրոցները:

Դպրոցի ուսուցիչները շատ ուշադիր են ընտրվում: Նրանք հիմնականում պետք է լինեն համայնքի շրջանակներից կամ գոնե հայտնի լինեն համայնքին երկար ժամանակ: Ի դեպ, ուշադրության է արժանի համայնքի անդամ դառնալու գործընթացը:

¹⁰⁸ Yurtdışında Açılan Özel Eğitim Kurumları Temsilcileri: İkinci Toplantısı (Ankara, Milli Eğitim Bakanlığı, Yurtdışı Gençlik Müdürlüğü, 1997).

Չկա հատուկ անդամակցության վկայական կամ հատուկ արարողություն: Ամեն անդամ առաջարկում է իր ծառայությունները՝ օգնելու Նուրսիի ու Գյուլենի գաղափարների տարածման հարցում, ինչպես նաև նա պետք է ընդունի համայնքի առաքելություն-առաջադրանքը: Համայնքին անդամության մի քանի մակարդակ կա՝ ակտիվ անդամ, հասարակ անդամ ու համակիր: Կենտրոնական Ասիայում համայնքի անդամ դառնում են հիմնականում նրանք ում ընտանիքի անդամները կամ ընկերները աշխատում են թուրքական ընկերություններում կամ դպրոցներում: Նրանք կրթվել են համայնքի մասնավոր դպրոցներում, բնակվել են ուսանողական հանրակացարաններում կամ հանրահայտ «լույսի տներում», որոնք համայնքին պատկանող կամ համայնքի գործարարների կողմից վարձակալված բնակարաններ են, որտեղ երիտասարդ ու սովորաբար աղքատ ուսանողները բնակվում են ուսումնառության շրջանում: Ամեն «լույսի տուն» մեկ աբի վերահսկողության ներքո է, ով օգնում է բնակվողներին կրթվելու հարցում: Ուսուցիչների ընտրությունը կատարվում է Թուրքիայում՝ հովանավոր ընկերությունների ներկայացուցիչների կողմից: Ամեն թեկնածու պետք է հայտնի լինի համայնքին ընտրվելուց առաջ: Նրան ներկայացնում են իր ընկերները կամ բարեկամները, ովքեր արդեն համայնքի անդամ են: Կենտրոնական Ասիայի մայրաքաղաքներում տեղակայված դպրոցներ են ուղարկվում Թուրքիայի լավագույն համալսարանների շրջանավարտ դասախոսներ, իսկ ծայրամասեր՝ Թուրքիայի պակաս հեղինակավոր համալսարաններից¹⁰⁹:

¹⁰⁹ Balci, Fethullah Gülen's Missionary Schools, pp.157-159;

Վարժապետի առաքելությունը պարզ է՝ վարվել ինչպես ավագ եղբայր կրտսեր աշակերտների համար: Նրա ամենակարևոր առաքելությունն է փոխանցել համայնքի ուղերձը երեխաներին:

Վարժապետները նույնպես Կենտրոնական Ասիայում համայնքի կարևոր հենասյուներից են: Մանրամասն ուսումնասիրության դեպքում բացահայտում ենք շատ նմանություններ Խորհրդային Միությունում պիոներ ջոկատավարների հետ: Նրանք հիմնականում ուսանողներ են ու համայնքի անդամ Թուրքիայում: Նրանք եկել են Կենտրոնական Ասիա տարբեր պատճառներով. ոմանք՝ քանի որ տապալել են իրենց համալսարանական քննությունները, ոմանք՝ ճանապարհորդելու ու նոր վայրեր տեսնելու համար: Այս ուսանողներին, որոնց հավաքագրում են կրկին տվյալ ընկերության ներկայացուցիչները, աջակցում է համայնքը: Ընկերությունը վճարում է կենտրոնասիական համալսարաններում նրանց ուսումնառությունը ու կազմակերպում նրանց ներկայությունը դպրոցներում: Նրանք քնում են հանրակացարաններում, ինչպես աշակերտները, որոնց համար նրանք դառնում են պատասխանատու: Նրանց առաքելությունը պարզ է՝ վարվել ինչպես ավագ եղբայրներ կրտսեր աշակերտների համար, որոնք կոչում են նրանց հենց *աբի*՝ այսինքն ավագ եղբայր: Աբիները պետք է օգնեն նրանց պատրաստել տնային աշ-

խատանքները ու պարապել դասերը: Աբիները պետք է տան նրանց տարրական կրթություն ամեն ինչում՝ սկսած սեղանի շուրջ վարվեցողության կանոններից մինչև ընկերների ու ընտանիքի հետ վեճերը հարթելու հմտություններ: Երբ աշակերտները դասի են, վարժապետը նույնպես կարող է գնալ համալսարան: Վարժապետի համար ստեղծվում են բոլոր պայմանները՝ նրա ուսումնառությունը, սնունդն ու կացարանը անվճար են: Ընկերությունը նրա հետ նույն հարաբերության մեջ է, ինչ ինքը՝ աշակերտների: Նրա ամենակարևոր առաքելությունն է փոխանցել համայնքի ուղերձը երեխաներին¹¹⁰: Սակայն ամենից կարևորն այն է, որ վարժապետի ռազմավարությունն է դառնալ իր աշակերտի մտերիմ ընկերը և ոչ թե ուսուցչի ներկայացուցիչը, ում գործն է աչք պահել աշակերտների վրա¹¹¹:

Համայնքի ավագ դպրոցների աշակերտների ընտրությունը նույնպես շատ կարևոր տարր է: Ոսկե սերնդի գաղափարը շատ կարևոր է Գյուլենի ու իր հետևորդների համար, քանզի նրանց նպատակն է ապահովել «կատարյալ կրթություն կատարյալ սերնդի համար, որպեսզի ստացվի կատարյալ հասարակություն»: Այսպիսով, ընտրությունը էլիտիստական է՝ ընտրվում են միայն լավագույնները, որոնց համար էլ ստեղծվում են լավագույն պայմանները: Գյուլենական դպրոց ընդունվելուց հետո աշակերտները ոտք են դնում կյանք, որն էականերոն տարբերվում է այլ դպրոցներից: Նրանք պարտավոր են ապրել ու քնել հանրակացարանում, նույնիսկ եթե իրենց ընտանիքը նույն քաղաքում է բնակվում: Աշակերտներին թույլատրվում է շաբաթավերջն անցկացնել ընտանիքի

¹¹⁰ Ibid., p.159;

¹¹¹ Ibid., p.164;

հետ, սակայն ժամանակ առ ժամանակ նրանք մնում են դպրոցում մեկ ամիս կամ ավել՝ առանց տեսակցության: Գիշերօթիկ այս համակարգը թույլ է տալիս իրականացնել ազդու վերահսկողություն աշակերտների վրա՝ համայնքի ուղերձը հասցնելու հարցում: Գյուլենական այս մեթոդը կարելի է համեմատել ճիզվիթական դպրոցների հետ, երբ աշակերտները ուսուցանվում են անկախ նրանից, թե նրանք դպրոցում են, թե՞ հանրակացարանում: Կենտրոնական Ասիայի դպրոցների մեծամասնությունում աշակերտները կրում են այն հագուստն, ինչ ուզում են, սակայն գյուլենական դպրոցում կա հատուկ հագուստ: Սա թույլ է տալիս ջնջել դասային տարբերությունները երեխաների միջև:

Գյուլենական այս դպրոցները շատ լավ են պատրաստում իրենց աշակերտներին համալսարանական ընդունելության քննությունների համար: Գրքերը և ուսումնական ծրագրերը հիմնականում գյուլենական բոլոր դպրոցներում նույնն են, իսկ համայնքն ունի նույնիսկ իր սեփական հրատարակչատունը՝ Սյուրաթ յայընլարը:

Պաշտոնյաների մեծ մասը ուղարկում են իրենց երեխաներին այնտեղ ու պաշտպանում այդ դպրոցների շահերը: Կառավարության համար այդ դպրոցները հետաքրքիր գործընկերներ են նոր էլիտայի ձևավորման հարցում:

Այսպիսով, 5–6–րդ դասարանից հետո աշակերտները բավականին բարդ քննություններ հանձնելով ընդունվում են գյուլենական դպրոց: Առաջին տարվա ընթացքում նրանք խորացված կերպով սովորում են անգլերեն ու թուրքերեն: Սա կարևոր է, քանի որ հաջորդ տարիներին դասերի մեծ մասը այս լեզուներով է մատուցվում: Սրանից հետո հաջորդ 4 տարվա ընթացքում աշակերտները պատրաստվում են համալսարանի ընդունելության քննությունների: Առավել շեշտադրվում են գիտատար ուղղություններն, ինչպիսիք են կենսաբանությունը, ֆիզիկան, մաթեմատիկան, համակարգչային գիտելիքները: Օտար լեզուներն ու դասավանդման որակը բարձր են գնահատվում ծնողների կողմից, ովքեր անում են ամեն ինչ, որպեսզի իրենց երեխաներն այցելեն այդ դպրոցները: Օտար լեզուների բարձր մակարդակի իմացությունն ավելի մրցունակ է դարձնում իրենց զավակներին օտարերկրյա ընկերություններում աշխատելու կամ արտասահմանի հայտնի համալսարաններում ուսանելու հարցում: Իշխանությունները նույնպես հետաքրքրված են այդ դպրոցներով: Պաշտոնյաների մեծ մասը ուղարկում են իրենց երեխաներին այնտեղ ու պաշտպանում այդ դպրոցների շահերը: Կառավարության համար այդ դպրոցները հետաքրքիր գործընկերներ են նոր էլիտայի ձևավորման հարցում¹¹²:

Արդյունքում, գյուլենական դպրոցներն իրենցից ներկայացնում են թուրքական մշակույթը, մասնավորապես լեզուն ու իսլամի թուրքական մոդելը, տարածող գործիք, որի օգնությամբ վերափոխվում է երիտասարդների մի սերունդ, որոնք Կենտրոնա-

¹¹² Ibid., pp.159–161;

կան Ասիայում 10–15 տարի հետո կազմելու են էլիտայի հիմնական մասը: Գյուլենական դպրոցներն ավարտելուց հետո նրանք այդուհետ «դատապարտված» են կապված լինել Թուրքիայի հետ, քանի որ հիմնականում աշխատում են թուրքական ընկերություններում կամ շարունակում իրենց ուսումը Թուրքիայի համալսարաններում կամ ձեռնարկատիրական կապեր հաստատում Թուրքիայի հետ: Թուրքական այս «մեղմ ուժը» նույնիսկ էթե անարդույնավետ է նուրջուական իսլամ արտահանելու հարցում, մշակութային էքսանսիայի հարցում արդյունավետ է, որի հետևանքները արդեն սկսում են երևալ:

ՄԿՋԲՈՒՆՔ ՉՈՐՐՈՐԴ.

ԲԱԶՄԱՎԵԿՏՈՐ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞ւ Աթաթյուրքը հրաժարվեց Արևելքից

Օսմանյան կայսրության պարտությունը Առաջին համաշխարհային պատերազմում, լայնածավալ տարածքների կորուստը, Մերի դաշնագիրն ու աշխարհի քարտեզից Թուրքիայի կորստի սպառնալիքը շրջադարձային նշանակություն ունեցան երկրի համար: Հենց այդ ժամանակ Մուստաֆա Քեմալը որոշեց Թուրքիայի առաջիկա տասնամյակների զարգացման վեկտորը՝ «Դեպի Արևմուտք»: Փորձառությունը հուշեց նրան, որ պարտությունների հիմնական պատճառն Արևելքի հետ կապվածությունն էր: Մասնավորապես, հասարակության իսլամականության բարձր աստիճանը պետության զարգացման արգելակներից մեկը համարվեց: Աթաթյուրքի հրամաններով վերացվեցին իսլամական միաբանություններն ու կրոնական հաստատությունները, արաբական գիրը փոխվեց լատինականով, օրենսդրությունը կրկնօրինակվեց արևմտաեվրոպական երկրներից, իսկ աշխարհիկու-

թյունը դարձավ ղեկավար սերուցքի կարևորագույն խնդիրը¹¹³: Թուրքիան փորձեց մեկ հարվածով ձերբագատվել Արևելքից ու շատ բան հաջողվեց:

Պետությունն արտաքին քաղաքականության ասպարեզում որոշումներ է ընդունում՝ առաջնորդնվելով ազգային շահերով, երբ վատագույն դեպքում առաջնահերթությունը ինքնապահպանումն է, իսկ լավագույն դեպքում այն քայլեր կանի ազդեցության ընդլայնման ուղղությամբ՝ ընդհուպ մինչև ունիվերսալ գերիշխանություն:

Առաջին հայացքից Աթաթյուրքի քայլերը տրամաբանական են ու թելադրված մի քանի գործոնով: Առաջին հերթին աշխատեց ինքնապահպանման բնագոյր: Այս կապակցությամբ հայտնի է նաև Մուստաֆա Քեմալի ևս մեկ արտահայտություն. «Խաղաղություն հայրենիքում՝ խաղաղություն աշխարհում»¹¹⁴: Ծանր պարտությունից հետո Թուրքիան պետք է ինքնամեկուսանար, բուժեր վերքերը, հասներ համերաշխության սեփական հասարակության մեջ, հանգստացներ քրդերին: Երկրորդ, թուրքերը հասկացան, որ արևմտյան քաղաքակրթությունը շատ հարցերի պատասխաններ

¹¹³ Ավելի մանրամասն տե՛ս՝ Hamza Eroğlu, Yurtta Sulh, Cihanda Sulh, Atatürk Araştırma Merkezi Dergisi, Sayı 2, Cilt: I, Mart 1985, <http://www.atam.gov.tr/index.php?Page=Dergiler&IcerikNo=72>; Сурен Багдасарян, Политическая система Турции в 1920–30-ые гг., Ереван, 2001, 160 стр.;
¹¹⁴ Eroğlu, Yurtta Sulh, Cihanda Sulh;

ունի, և հաջողության բաղադրատոմսն Արևմուտքի հետ լիարժեք ինտեգրման հասնելն է և այն կրկնօրինակելը՝ սկսած բանակից և ավարտած զգեստապահարանով: Ըստ էության, շատ պատմաբաններ ու վերլուծաբաններ կանգ են առնում այստեղ ու բավարարվում են այս բացատրությամբ, որը պարզ պատասխաններ է տրամադրում հարցերին, ինչպես նաև համապատասխանում է այսօրվա Թուրքիայի պատկերին:

Նեո-ոեալիզմի հարացույցը պնդում է, թե պետությունն արտաքին քաղաքականության ասպարեզում որոշումներ է ընդունում՝ առաջնորդնվելով ազգային շահերով, երբ վատագույն դեպքում առաջնահերթությունը ինքնապահպանումն է, իսկ լավագույն դեպքում այն քայլեր կանի ազդեցության ընդլայնման ուղղությամբ՝ ընդհուպ մինչև ունիվերսալ գերիշխանություն¹¹⁵: Ընտրությունը հոգուտ «խաղաղասեր» ու արևմտամետ Թուրքիան թելադրված էր աշխարհաքաղաքական իրականություններով, այլ ոչ թե արևմտյան քաղաքակրթության հետ մերձենալու բուռն ցանկությամբ:

Հիշենք, որ նույն երիտասարդ Թուրքիան ուժերի ներածին չափով բավականաչափ տարածքներ զրավեց Հունաստանի ու Հայաստանի հետ պատերազմների արդյունքում: Այստեղ ոչ «խաղաղասեր» եզրն է տեղին, քանի որ պատերազմը Թուրքիայի նախաձեռնությունն էր, ոչ էլ՝ «արևմտամետ», քանզի Հայաստանը գտնվում է Թուրքիայից արևելք: Հարավ-արևելյան ճակատում թուրքական ուժերը պայքարում էին արևմտյան ուժերի դեմ ու նույնիսկ երեք անգամ պարտության մատնեցին արևմտաեվրո-

¹¹⁵ Kenneth Waltz, Theory of International Politics, New York, 1979, p.118;

պական գորամիավորումները՝ գրավելով Մարաշ, Ուրֆա ու Այնթեփ քաղաքները¹¹⁶: Թուրքիան արդեն այն ժամանակ պատրաստվում էր փոխհատուցել Առաջին աշխարհամարտում կրած իր տարածքային կորուստները՝ օգտվելով Ռուսական կայսրության փլուզումից ու ցանկանալով գրավել ողջ Հարավային Կովկասը: Սակայն դա նրանց չհաջողվեց մասնավորապես հայկական բանակի դիմադրության արդյունքում¹¹⁷: Հետագայում Թուրքիայի կովկասյան պլաններն ի չիք դարձան, քանի որ այդ տարածքների խորհրդայնացումը ապահովեց երկարաժամկետ անձեռնմխելիություն:

Աթաթյուրքը կատարեց ընտրություն հոգուտ ինքնամեկուսացման ու Արևմուտքի, քանի որ դեպի Արևելք բոլոր ճանապարհները փակ էին:

Իրանը նույնպես անձեռնմխելի էր. նրա տարածքը բաժանված էր ազդեցության գոտիների. հյուսիսը պատկանում էր Ռուսաստանին, իսկ հարավը՝ Մեծ Բրիտանիային:

Մերձավորարևելյան ճակատում Թուրքիայի գործերը ավելի վատ էին: Սահմանակից Սիրիան ու Իրաքն արդեն Ֆրանսիայի

¹¹⁶ Արևմտամերձկասկան ուժերի հանդեպ հաղթանակների կարևորությամբ էլ պայմանավորված են այդ քաղաքների վերաանվանումը՝ Քահրաման (հերոս) Մարաշ, Շանլը (փառավոր) Ուրֆա ու Ղազի (հաղթանակած) Այնթեփ:

¹¹⁷ 1920թ. մայիսին Հայաստանի բանակն ու աշխարհագորը հերոսաբար դիմադրեցին թուրքական բանակի հարձակմանը Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաբիլիսայում:

ու Մեծ Բրիտանիայի մանդատի տակ էին, իսկ Անկարան չէր կարող ոտք մեկնել նման պետությունների հետ: Թուրքիան չկարողացավ դիպչել նույնիսկ Հյուսիսային Իրաքում գտնվող Քիրքուքի տարածքին, որը մտնում էր «Ազգային Ուխտի»¹¹⁸ մեջ, այսինքն ի սկզբանե պլանավորված էր, որ այն մտնելու է նոր Թուրքիայի տարածքային կազմի մեջ:

Այլ կերպ ասած, Աթաթյուրքը կատարեց ընտրություն հոգուտ ինքնամեկուսացման ու Արևմուտքի, քանի որ դեպի Արևելք բոլոր ճանապարհները փակ էին: Որոշում կայացվեց արդիականացնել հասարակությունն ու հատկապես բանակը՝ սպասելով իրերի ներկա վիճակը փոխելու համար հարմար առիթի:

Թուրքիան Մերձավոր Արևելքում Սառը պատերազմի տարիներին

Իրերի ներկա վիճակը փոխելու համար ամենից հաճախ օգտագործվող լծակը պատերազմներն են: Այդ ժամանակ բանաձևում հայտնվում են ուժի վակուումներ, որը լրացնում է դրան ամենից շատ պատրաստ կողմը: Երկրորդ համաշխարհային պատերազմն անհանգստացնում էր թուրք գեներալներին: Մի կողմից նրանք դեռ հիշում էին Առաջին համաշխարհային պատերազմի դառը փորձը ու արեցին ամեն ինչ, որպեսզի բացահայտ կերպով պատերազմում չներգրավվեն: Սակայն մյուս կողմից էլ Գերմանիայի հաղթանակը կբացեր ուղիները դեպի Ար-

¹¹⁸ Ազգային ուխտը կամ «Misak-ı Milli» ներառում է Թուրքիայի այսօրվա տարածքը, ինչպես նաև Քիրքուքի ու Բաթումի շրջանները: Ազգային ուխտը ընդունվել է 1920թ. հունվարին: Nejat Kaymaz, «Misak-ı Milli Üzerinde Yapılan Tartışmalar Hakkında», VIII. Türk Tarih Kongresi, Ankara, 1977;

նելք: Անկարայի ընտրությունը կրկին պայմանավորված էր տարածքային սահմաններն ընդլայնելու ցանկությամբ: Բայց 1942թ. Խորհրդային զորքերի հաղթանակը Ստալինգրադի ճակատամարտում սառը ցնցուղ էր թուրքերի ոգևորության համար, որոնք արդեն պատրաստ էին նոր ճակատի բացմանը:

Երկրորդ աշխարհամարտում դաշնակիցների հաղթանակը ի չիք դարձրեց Թուրքիայի տարածքային հույսերը: Ավելին, Անկարան մտնում էր Արևմուտքի պլանների մեջ և պետք է օգներ կանխել Մերձավոր Արևելքում Մոսկվայի ազդեցության աճը: Ստալինի կողմից տարածքային պահանջներն էլ ավելի արագացրին Անկարայի ընտրության գործընթացը¹¹⁹: Թուրքիան դարձավ Հյուսիսատլանտյան դաշինքի կարևոր օղակ: Եվ կրկին Անկարան այլընտրանք չունեի: Անկարան չկատարեց ընտրություն հօգուտ Արևմուտքի՝ ունենալով այլ ընտրություն: Արևմուտքը տրամադրում էր նրան միջուկային վահան ու հարձակման դեպքում պաշտպանության մասին համար 5 հոդվածը¹²⁰, իսկ Խորհրդային Միությունը իրական տարածքային սպառնալիք էր ներկայացնում: Ավելին, արաբական ազգայնականության աճը ու Խորհրդային Միության ազդեցության ուժեղացումը Մերձավոր Արևելքում ավելի էր մղում Թուրքիային դեպի Արևմուտքի գիրկը:

ՆԱՏՕ-ի հովանոցը խաղաց նաև իր բացասական ազդեցությունը Թուրքիայի համար: Նույնիսկ լինելով իսլամական երկիր՝

Թուրքիան Մերձավոր Արևելքում «յուրային» չէր: Իսրայելի ու ԱՄՆ-ի հետ սերտ համագործակցությունը պիտակավորեց Անկարային որպես «տարածաշրջանում Արևմուտքի ժանդարն»: Այդ ժամանակաշրջանում Թուրքիան չէր էլ կարող մտածել Մերձավոր Արևելքում ազդեցության ընդլայնման մասին: Համաձայն Ռոբերտ Գիլպինին՝

«...պետությունները հաշվարկում են ծախսերն ու շահերը առկա այլընտրանքային գործողությունների շարքից ... [Բացի այդ,] պետությունը կփորձի վերափոխել առկա միջազգային համակարգը տարածքային, քաղաքական և տնտեսական էքսպանսիայի միջոցով մինչև այն ժամանակ, երբ նրա սահմանային ծախսերը չեն հավասարվի կամ չեն գերազանցի սահմանային շահերը»¹²¹:

Այսինքն, այս համատեքստում Արևմուտքի հետ առավել սերտ համագործակցության, Եվրոպական Միությանն անդամագրվելու որոշումները թելադրված են եղել մրցունակ այլընտրանքների բացակայությամբ:

Իրերի ներկա վիճակը փոխվեց. զսպանակը գործողության մեջ

Սառը պատերազմի ավարտը, բեռլինյան պատի անկումը ու ԽՍՀՄ փլուզումը նշանավորեցին տարածաշրջանում ուժի վակո-

¹¹⁹ Այս խնդրի մասին առավել մանրամասն տես՝ Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945–1946гг, Ред. А. Киракосян, Ереван, 2010, 332 стр.

¹²⁰ The North Atlantic Treaty, Washington D.C. – 4 April 1949, http://www.nato.int/cps/en/natolive/official_texts_17120.htm; см. также Protocol to the North Atlantic Treaty on the Accession of Greece and Turkey, 22 Oct. 1951, http://www.nato.int/cps/en/SID-01DC9A5F-F1348A97/natolive/official_texts_17245.htm;

¹²¹ James Dougherty & Robert Pflatzgraff, Contending Theories of International relations: A Comprehensive Survey, New York, 2000, p.81;

ումի նոր փուլը: Անկարան անպատրաստ գտնվեց այս հնարավորությունից լիարժեք օգտվելու հարցում:

Արևմուտքն այլևս Խորհրդային Միության դեմ առաջապահի դերում Թուրքիայի կարիքը չունեք: Անկարայի կարևորությունը հասավ նվազագույնի: Ի՞նչ այլընտրանքներ ունեք Թուրքիան: Չպահանջված Արևմուտքի կողմից ու մերժված Արևելքից՝ Անկարան որոշեց իրենով լցնել վակուումը Կենտրոնական Ասիայում՝ օգտագործելով ազգայնական երանգներն ու ինքնահռչակվելով հետխորհրդային թյուրքական հանրապետությունների «ավագ եղբայրը»: Այս կերպ Թուրքիան փորձում էր նվազագույն ծախսերով ավելացնել իր տեսակարար կշիռը տարածաշրջանային հաշվեկշռում ու վերականգնել իր պահանջը Արևմուտքում: Ավելին, այդ քաղաքականությունն աջակցություն ստացավ ԱՄՆ-ի ու այլ արևմտյան երկրների կողմից, որոնք զգուշանում էին տարածաշրջանում Իրանի ազդեցության աճից ու Իսլամական հեղափոխության արտահանումից Կենտրոնական Ասիա: Սակայն Մոսկվայից նորանկախ թյուրքական հանրապետությունները չէին շտապում մտնել մեկ այլ «ավագ եղբոր» տանիքի ներքո: Նեղրումներ ու ֆինանսական հոսքեր. ահա թե ինչի կարիք ունեին թյուրքական հանրապետությունները ու ինչ չէր կարող տրամադրել Թուրքիան իր սեփական տնտեսական ճգնաժամի հետևանքով:

Թուրքիայի տնտեսական սահմանափակումներն արտաքին քաղաքականության վրա 1990-ական թվականներին

Տնտեսության թույլ ու անհամաչափ զարգացումը հաճախ է խանգարել Թուրքիային իրականացնել իր անհամեմատ ավելի ամբիցիոզ ծրագրերը: Մասնավորապես, Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիան հայտնվեց մի իրավիճակում, երբ Անկարան, որպես ՆԱՏՕ-ի հարավ-արևելյան հակախորհրդային պլացդարմ, ռազմավարական տեսանկյունից այլևս անհետաքրքիր էր Արևմուտքի համար: Սակայն ԽՍՀՄ ազդեցությունից ազատված թյուրքական նորանկախ հանրապետությունները իրենցից բավականին մեծ հետաքրքրություն առաջացրեցին Արևմուտքի համար: 1990-ականների Թուրքիան որոշեց, օգտագործելով արյունակցական իր կապերը, ստանձնել ավագ եղբոր դերը, իր ազդեցության տակ վերցնել Ադրբեջանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ղազախստանը և Ղրղզստանը: Սրանով Անկարան կրկին կվերգտներ իր ռազմավարական կարևորությունը Արևմուտքի համար և կդառնար ավելի հանգուցային խաղացող: Բայց թեև նորանկախ հանրապետություններում զարգացում էր ապրում ազգայնականությունը, սակայն այն ուներ ավելի նեղ բնույթ և ուղղված էր ներպետական ինքնության զարգացմանը: Բացի դա, նորանկախ

պետությունները նոր էին ձեռքբերում և մի ավագ եղբորից և հոգեբանորեն դեռ ցանկանում էին վայելել անկախությունը: Այդուհանդերձ, «Ադրիատիկից մինչև չինական պատ» Թուրքիայի նոր պանթյունիստական ռազմավարության ձախողման հիմնական պատճառը տնտեսության թույլ զարգացվածությունն էր: Նորանկախ հետխորհրդային պետությունները խեղդվում էին տնտեսական ճգնաժամից: Նրանց վրա ազդեցություն սահմանելու հիմնական գործիքը կարող էին լինել տնտեսական օգնությունները, վարկերն ու ներդրումները: Մակայն Թուրքիան ինքն էր տնտեսական բարդ իրավիճակում և այդ հարցում անկարող էր: Մրա արդյունքում նորանկախ պետություններից Թուրքիայի ազդեցության տակ հայտնվեց միայն Ադրբեջանը, որը ոչ միայն ազգակցական կապով անատոլիական թուրքերին ամենամերձավորն է, այլև գտնվում էր պատերազմական իրավիճակում հայերի հետ ու կարիք ուներ ոչ թե Թուրքիայի տնտեսական, այլ ռազմական օգնության¹²²:

Հարավային Կովկասում նույնպես Թուրքիան չկարողացավ հասնել մեծ հաջողությունների: Չնայած տարածաշրջանի բոլոր երկրները պատերազմական վիճակում էին, ինչը գործողություն-

¹²² Մույն գործընթացի մասին առավել մանրամասն տես՝ Çelikpala, Mitat, *Türkiye ve Kafkasya: Reaksiyoner Dış Politikadan Proaktif Ritmik Diplomasiye Geçiş*, Uluslararası İlişkiler, Cilt 7, Sayı 25 (Bahar 2010), ss. 93–126;

ների համար լայն դաշտ էր բացում, սակայն Հարավային Կովկասը դեռ յուրահատուկ տարածքային կարևորություն ուներ Ռուսաստանի համար, որը թույլ չտվեց թուրքական ազդեցության աճ: Մասնավորապես, Թուրքիան կարող էր ուժեղացնել իր ազդեցությունը Վրաստանին չենթարկվող Աբխազիայի ու Աջարիայի նկատմամբ, ու թեև որոշ հաջողություններ գրանցվեցին, սակայն երկու տարածքներն էլ Մոսկվայի լիակատար ազդեցության տակ էին: Հայաստանը գտնվում էր ՀԱՊԿ-ի հովանու ներքո ու թուրք գեներալների՝ Երևանի ուղղությամբ հենց առաջին «մկանային խաղը» կանխվեցին ռուսների կողմից¹²³:

Թուրքական ազդեցությունը տարածվեց միայն մեկ երկրի վրա՝ Ադրբեջանի, որը պատերազմական դրությունում էր ու, բացի ֆինանսական հոսքերից, նաև ռազմատեխնիկական աջակցության սուր կարիք ուներ: Նման աջակցությունը Թուրքիայից սահմանային ծախսերի բարձրացում չէր պահանջում, և Անկարան պատրաստակամությամբ առաջարկեց իր ծառայությունները, իսկ դրա հետ մեկտեղ՝ նաև տարածեց իր ազդեցությունը¹²⁴:

Թուրքական ազդեցության հնարավոր հետևանքների սցենարը երևում է Նախիջևանի դեպքի վրա: Երկար տարիներ դարաբայան պատերազմի հետևանքով Թուրքիայի ու Նախիջևանի

¹²³ Փետրվարի 20-ին Ռուսաստանի Դաշնության խորհրդարանում նույնիսկ լսումներ անցան ԱՊՀ Միացյալ զորքերի գլխավոր հրամանատար մարշալ Ե.Տապոշնիկովի մասնակցությամբ, որտեղ քննարկվում էր Թուրքիայի Երրորդ զորաբանակի՝ ՀՀ սահմանների մոտ գործախաղերի բնույթը: Մի քանի ամիս անց Ե.Տապոշնիկովը նախագուշացրեց թուրքական կողմին, որ «եթե հայ-ադրբեջանական պատերազմին ավելանա ևս մեկ կողմ, ապա մեք կարող ենք հայտնվել Երրորդ համաշխարհային պատերազմի եզրին»:

¹²⁴ См. Левон Овсепян, *Восенная промышленность и модернизация ВС Турции*, Ереван, 2010, стр. 144–150;

միջև առկա ցամաքային սահմանը վեջինիս համար թարմ օդի միակ հույսն է: Սա բերել է Անկարայի կողմից համապարփակ ազդեցությանը տարածքի տնտեսությունում¹²⁵: Թուրքական ակտիվության տեսանկյունի արդյունքն է Անկարայի բաց հավակնությունները Նախիջևանի հանդեպ, չի բացառվում նաև տվյալ տարածքում Թուրքիայի ռազմական ներկայության հնարավորությունը¹²⁶, իսկ սա արդեն մեղմ ուժի բացահայտ փոխանակում է տարածքային լծակի:

Սակայն առանց այդ էլ նավթային նախագծերի ու դարաբաղյան բախման հետևանքով Արևմուտքի ազդեցության տակ գտնվող Ադրբեջանի վրա ազդեցությունը չդարձավ Թուրքիայի մրցակցային առավելությունը:

Դուռ դեպի Արևելք

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումը և Արևմուտքի ուշադրությունը Մերձավոր Արևելքի հանդեպ ստատուս-քվոն փոխելու շանս տվեցին Թուրքիային: Իրանի մասնակի մեկուսացումը, Մերձավոր Արևելքում Մոսկվայի դիրքերի թուլացումը ու պատերազմը Իրաքում թույլ տվեցին Թուրքիային վերադառնալ տարածաշրջան:

Անկարան կրկին դարձավ կարևոր խաղացող ՆԱՏՕ-ի համար: Թուրքիայի սահմանների մոտ անկայունությունն ու արևմտյան վեկտորի նոր ուղղվածությունը դարձրեցին Անկարային

նետի ծայր՝ դեպի Մերձավոր Արևելք¹²⁷: Սակայն ինչպես և կանխագուշակում է նեո-ոեալիզմի հարացույցը՝ թուրքական պետության մեխանիզմն աշխատեց ոչ թե գործընկերության սկզբունքներից՝ առաջնորդվելով այս կամ այլ իդեալով, այլ Անկարան, օգտագործելով հնարավորությունների բացված հորիզոնը, քայլեր կատարեց իր ազդեցության աճի ուղղությամբ:

Ինչպես վերը նշվեց, Միացյալ Նահանգների ու Իսրայելի հետ ռազմավարական համագործակցության արդյունքում Թուրքիան Մերձավոր Արևելքում մերժված էր: Իսլամական աշխարհը չէր վստահում Անկարային ու ամեն քայլ ընկալում էր որպես Վաշինգտոնից հրամանի կատարում: Եթե Թուրքիան իրականում ցանկանում էր լրացնել Մերձավոր Արևելքում առկա ազդեցության բացը, ապա պետք էր փոփոխեր իր իմիջը. անհավատ, արևմտամետ Անկարան տեղ չունեք տարածաշրջանում:

2002թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները շատ տեղին էին: Իսլամամետ Արդարություն ու զարգացում կուսակցությունն ստացավ իշխանությունը գրեթե լիարժեք վերահսկողության ներքո: Թուրքերի իմիջում փոփոխության շրջադարձային կետի հնարավորություն հայտնվեց նույն պահին: 2003թ. մարտին Թուրքիայի խորհրդարանը մերժեց ԱՄՆ-ի պահանջը՝ հյուսիսային ճակատ բացելու համար ամերիկյան զորքերն Իրաք ուղարկելու նպատակով ցամաքային անցուղի բացելու վերաբերյալ¹²⁸: Մերձավոր Արևելքը ցնծության մեջ էր. «մոլորյալ որդի»

¹²⁵ Интервью с Митатом Челикпалой, 22 мая, 2010; см. Также: Чтобы напасть на Армению, Турции военная база в Нахичевани не нужна: эксперт, ИА Регнум, <http://regnum.ru/news/1286515.html> (09:54 24.05.2010)

¹²⁶ Виген Акопян, Новая политическая карта Кавказа: изоляция Армении и России, ИА Регнум, <http://regnum.ru/news/1288632.html> (20:09 30.05.2010); Россия не против экспансии Турции в Нахичевани?, ИА Регнум, <http://regnum.ru/news/1285403.html> (19:34 19.05.2010);

¹²⁷ Արտակ Շաքարյան, Թուրք-ամերիկյան հարաբերությունները (2003-2006թթ.), 21-րդ դար, 2 (12), 2006, էջ 89;

¹²⁸ Michael Rubin, A Comedy of Errors: American-Turkish Diplomacy and the Iraq War, Turkish Policy Quarter, # 18, www.esiweb.org/pdf/esi_turkey_tpq_id_18.pdf, p. 6; Zaman, 02.03.2003; Turkey's future directions and U.S. – Turkey relations, Hearing before the Subcommittee on Europe

Թուրքիան քայլեր էր անում իսլամական ընտանիք վերադառնալու ուղղությամբ: Իսկ ի՞նչ էր անհրաժեշտ մերձավորարևելյան երկրների վստահությունն ամրապնդելու համար: Իսրայելի հետ հարաբերությունների առավելագույն վատթարացումը: Հետագա տարիները նվիրվեցին այդ գործընթացին: Վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի առաջնորդությամբ Իսրայելը մեղադրվեց պաղեստինցիներին ցեղասպանության ենթարկելու մեջ, Դավոսում ու այլուր տեղի ունեցան սկանդալային ելույթներ, դիվանագիտական վեճեր ու համատեղ զինվարժությունների հրապարակավ հրաժարումներ¹²⁹. այս ամենը մեծապես դրական էր Թուրքիայի՝ որպես Արևմուտքում Մերձավոր Արևելքի շահերը պաշտպանող իսլամական երկրի իմիջի ձևավորման համար: Անկարան այս դերակատարման մեջ գերազանցում է նույնիսկ Թեհրանին, քանի որ Իրանի մեկուսացումը բացասաբար է ազդում նրա դիվանագիտական մանևրելու հնարավորությունների վրա: Իսկ Միջին, Լիբանանի, Իրանի հետ հարաբերությունների աննախադեպ ջերմացումը կարելի է համարել տարածաշրջանում Թուրքիայի հաջողված արտաքին քաղաքականության չափանիշներից¹³⁰:

of the Committee on International Relations, House of Representatives, One Hundred Eighth Congress, First session, October 1, 2003, Serial No. 108-50, www.house.gov/international_relations/108/89669.PDF, p.25;

¹²⁹ Daniel Steinvoth, Erdogan's Feeling for Rage: A Turkey-Israel Clash at Davos, Spiegel, 30 Jan., 2009; Katrin Bennhold, Leaders of Turkey and Israel Clash at Davos Panel, New York Times, January 29, 2009, http://www.nytimes.com/2009/01/30/world/europe/30clash.html?_r=1; Maayana Miskin, Erdogan: Israel Worse than Sudan, 'Muslims Don't Cause Genocide', <http://www.israelnationalnews.com/News/news.aspx/134297> (Published: 11/08/09, 10:33 PM / Last Update: 11/09/09, 7:22 AM);

¹³⁰ Suriye vize uygulamasını kaldırdı, Hurriyet, 17/09/2009, <http://www.hurriyet.com.tr/gundem/12504689.asp>; Lübnan'la da vize kalktı, Sabah, 11/01/2010, http://www.sabah.com.tr/Gundem/2010/01/11/lubnana_vize_kalkti; Türkiye, Suriye'den sonra Libya ile vizeyi kaldırdı, 24/11/2009, <http://www.euractiv.com.tr/ticaret-ve-sanayi/article/trkiye->

Ռեջեփ Թայիփ Էրդողան

Էրդողանի նախնիներն իսլամացած վրացիներ են, ինչպիսիք բավականին շատ են Թուրքիայի սևծովյան ափամերձ շրջանների արևելյան հատվածում: Արմատներով սևծովյան Ռիզե քաղաքից Ռեջեփ Թայիփ Էրդողանը ծնվել ու մեծացել է 1954թ. Ստամբուլի Քասըմփաշա աղքատ թաղամասում: Տարրական կրթությունը Փիլյալե Փաշա դպրոցում ստանալուց հետո 1965թ. ընդունվել է Ստամբուլի «Իմամ-հաթիփ»՝ կրոնական դպրոցը: 1973թ. ընդունվել է Մարմարայի համալսարանի տնտեսագիտության ու կոմերցիայի ֆակուլտետը: Արդեն իմամ-հաթիփ դպրոցում ուսանելիս Էրդողանն սկսել է պրոֆեսիոնալ կերպով խաղալ ֆուտբոլային ակումբներում, ինչը շարունակել է մինչև 1980թ.:

Համալսարանական տարիներին սկսել է ներգրավվել սոցիալական ու քաղաքական կյանքում: Թուրք ազգային ուսանողական միությունում մի քանի տարի ակտիվությունից հետո 1976թ. ընտրվել է Ազգային երջանկություն կուսակցության Բեյոզլու համայնքի երիտասարդական թևի նախագահ, իսկ նույն թվականին՝ նաև ԱԵԿ-ի Ստամբուլի նահանգային նախագահ: 1978թ. ամուսնացել է:

suriyeden-sonra-libya-ile-vizeyi-kaldird-007866; А.Г. Гаджиев, К вопросу о турецко-иранских отношениях на современном этапе, Институт Ближнего Востока, <http://www.iimes.ru/rus/stat/2010/07-04-10c.htm>;

1980-ական թթ. աշխատել է մասնավոր սեկտորում:

1983թ. Բարձրություն կուսակցության անվան տակ վերաբացված իսլամիստական կուսակցությամբ վերսկսվեց Էրդոդանի քաղաքական կյանքը: 1984թ. նա ընտրվեց կուսակցության Բեյոլլու համայնքի նախագահ, 1985թ.՝ նահանգային նախագահ ու կուսակցության ղեկավար բյուրոյի անդամ: 1984-1994թթ. կուսակցությունը մասնակցել է բազում ընտրություններին, որտեղ Էրդոդանը միշտ դրել է իր թեկնածությունն այս կամ այն պաշտոնի համար:

1994թ. մարտի 27-ի տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքում Էրդոդանն ընտրվեց Ստամբուլի քաղաքապետ: Այս ընթացքում նրա դեմ մի շարք դատական գործեր են բացվել՝ պաշտոնական դիրքի չարաշահման կապակցությամբ, որոնք դադարեցվել են նրա՝ որպես պատգամավոր ընտրվելուց հետո:

Դատական հայցերը Էրդոդանի կյանքում բավականին կարևոր տեղ ունեն: Առաջին անգամ 1989թ. Բեյոլլուի թաղապետի ընտրություններում պարտվելուց հետո ընտրության արդյունքները բողոքարկելիս դատավորին անվանել է «հարբած», ինչի համար կալանավորվել է մեկ շաբաթով ու դրամական տուգանք վճարել:

1997թ. դեկտեմբերի 12-ին, Սիիրթ քաղաքում ունեցած ճառի ժամանակ պանթուրքիզմի հիմնադիր բանաստեղծ Ջիյա Գյոքալփի «Զինվորի աղոթքը» բանաստեղծության բա-

ռերը փոխելով, արտասանել է. «մինարեթները մեր սվիններն են, գմբեթները՝ մեր զրահագլխարկները (ալեմ), իսկ մզկիթները՝ մեր գորանոցները», ինչպես նաև հայտարարություններ է արել, թե երկիրը բաժանված է երկու մասի՝ Աթաթյուրքի բարեփոխումներին հետևողների ու իսլամ դավանողների: Սրա արդյունքում նրա դեմ դատական հայց է ներկայացվել «կրոնական ու ռասայական հողի վրա ժողովրդի մեջ թշնամություն սերմանելու» մեղադրանքով, ինչի արդյունքում նա դատապարտվեց 10 ամիս բանտարկության, դրամական տույժի, ինչպես նաև զրկվեց առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու իրավունքից:

2001թ. Սահմանադրական դատարանը փակեց Առաքինություն կուսակցությունը, քանի որ այն պաշտպանում էր գլխաշորեր կրելու ազատությունը, այսինքն հակաաշխարհիկ էր: Կուսակցության փակումից հետո նրա անդամները հիմնեցին նոր կուսակցություն՝ Սաադեթ (Երջանկություն) կուսակցությունը, մինչդեռ Էրդոդանն ու իր գաղափարակիցները հրաժարվեցին միանալ նրանց ու հիմնեցին առանձին կուսակցություն՝ Արդարություն ու զարգացումը (2001թ. օգոստոսի 14-ին):

2002թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական ընտրություններին ԵԿ-ն մարզինալացվեց՝ ստանալով 2,5 տոկոս քվե, իսկ ԱԶԿ-ն Թուրքիայի քաղաքական պատմության մեջ բա-

ցեց նոր էջ՝ ստանալով 34,3 տոկոս քվե ու խորհրդարանում տեղերի երկու երրորդը:

Էրդողանի՝ քաղաքականությամբ զբաղվելու արգելքը դեռ ուժի մեջ էր, ուստի նա չկարողացավ 2002թ. նոյեմբերի ընտրություններով մտնել խորհրդարան ու ստանձնել վարչապետի պաշտոնը: Միայն հաջորդ տարի նա օրենսդրական փոփոխության ու Սիիրթում անցկացված արտահերթ ընտրության արդյունքում ընտրվեց պատգամավոր ու դարձավ վարչապետ: 2007թ. խորհրդարանական հաջորդ ընտրություններում ԱԶԿ-ն հավաքեց 46,6 տոկոս քվե, ինչի շնորհիվ Էրդողանը երկրորդ անգամ ստանձնեց վարչապետի պաշտոնը:

Այս զարգացումները, ինչպես նաև եվրաինտեգրման գործընթացի դանդաղումը վերլուծաբաններին առիթ տվեցին ենթադրելու, որ Թուրքիայում տեղի է ունենում առանցքի արմատական փոփոխություն. Անկարան Արևմուտքին շրջվում է մեջքով: Այլոք, մեջբերելով Թուրքիայի արտաքին քաղաքականության նորագույն փուլի ճարտարապետ Ահմեդ Դավութօղլուին՝ նրա հանձարին են վերագրում բոլոր փոփոխությունները:

Ա. Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» գիրքն¹³¹, իրոք, ուշադրության կարիք ունի, քանի որ այնտեղ նկարագր-

¹³¹ Ahmet Davutoğlu, *Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu*, İstanbul, 2005; Ahmet Davutoğlu, *Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007*, *Insight Turkey*, vol. 10. No. 1, 2008, p. 81–82;

վում են այն սկզբունքները, որոնցով տեսականորեն պետք է աշխատի թուրքական արտաքին քաղաքականության մեխանիզմը: Մասնավորապես, նեո-օսմանիզմի քաղաքականությունն ու բազմավեկտորության սկզբունքը մեծավ մասամբ պատասխաններ են տալիս այն հարցերին, որոնք քննարկվում են այստեղ:

Նեո-օսմանիզմի քաղաքականությունը Թուրքիայի հարակից տարածքներում Օսմանյան կայսրության վերստեղծելու փորձ է: Ներկա պայմաններում խոսքը չի գնում տարածքային անեքսիայի մասին, այլ քաղաքական ու տնտեսական ազդեցության: Դրա նախատիպը կարող են լինել Ռուսաստանի Ближнее Зарубежье արտաքին քաղաքական մոտեցումը կամ Եվրոպական Միության Հարևանային քաղաքականությունը: Թուրքիան մեղմ ուժի մեթոդներով ձգտում է իր ազդեցության տակ վերցնել նախկին Օսմանյան կայսրության տարածքները՝ հույս ունենալով, որ ապագայում տարածաշրջանում և միջազգային ասպարեզում իրերի ներկա վիճակի փոփոխման պարագայում կկարողանա մեղմ ուժը փոխարինել ավելի ավանդականի:

Ավելին, նեո-օսմանիզմն այսօր չի սահմանափակվում օսմանյան պետության սահմաններով: Անկարան, հմտանալով այդ գործիքի կիրառման մեջ, դա օգտագործում է նաև այն տարածաշրջանների հանդեպ, որտեղ ցանկանում է ամրապնդել իր ազդեցությունը: Մասնավորապես, խոսքը գնում է Կենտրոնական Ասիայի թուրքական հանրապետությունների մասին, որտեղ Թուրքիան դեռևս ցանկանում է վերահաստատվել որպես ավագ եղբայր ու ազդեցության կենտրոն, թեև այժմ բացահայտ կերպով չի մրցակցում Ռուսաստանի ու Չինաստանի նման հսկաների դեմ:

Բազմավեկտորության սկզբունքը ուրվագծում է Թուրքիայի արտաքին քաղաքականության ուղղվածությունը: Համաձայն թուրք բարձրաստիճան ղեկավարության՝ «Թուրքիան մեջք չունի: Եթե մենք դեմքով դեպի Արևելք ենք շրջվել, ապա դա չի նշանակում, որ մեր արևմտյան քաղաքականությանը կարևորություն չենք հաղորդում»¹³²: Համաձայն Դավութօղլուի՝ հավասարակշռված քաղաքականության փորձը կրերի առավելագույն դիվիդենտները, քանի որ Արևմուտքը, մասնավորապես Եվրոպական Միությունը, որը արգելակում է Թուրքիայի անդամակցությունն իր ընտանիք, ավելի հետաքրքրված կլինի Թուրքիայով, որն ազդեցություն կունենա Մերձավոր Արևելքում և ածխաջրածնային նախագծերի վրա, իսկ մերձավորարևելյան երկրներին էլ միշտ ձեռնտու կլինեն բարիդրացիական հարաբերություններն Անկարայի հետ, որը կկարողանա պաշտպանել իսլամական աշխարհը:

Սակայն պետք է նշել, որ Դավութօղլուի ռազմավարությունը միշտ էլ գոյություն ունեցող մեխանիզմների գեղեցիկ նկարագրությունն է: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, որևէ մեխանիզմի զսպանակի նման, միշտ էլ պատրաստ է եղել թռիչքի այն կողմ, որտեղ ծախսված ջանքերը կբերեն առավելագույն օգուտները: Եվ «նախորդ տարիներին Թուրքիայի բազմավեկտոր արտաքին քաղաքականության բացակայությունը ոչ թե քաղա-

¹³² Ռեջեփ Թայիփ Էրդողան, հատված Ջ.Մեյսոն համալսարանի ուսանողների հետ հանդիպման ելույթից, 2010 ապրիլի 12, TRT հեռուստաընկերություն:

քական մտքի պակասի հետևանքով էր, բայց այլ ուղղություններով ծավալվելու անհնարինության պատճառով»¹³³:

Թուրք-ամերիկյան հարաբերություններ (2003–2010թթ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր՝ մոտ 50 տարի, Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Թուրքիան ունեին սերտ հարաբերություններ, որը կարելի էր բնորոշել իբրև «ռազմավարական գործընկերություն»: Վաշինգտոնը Սառը պատերազմի ընթացքում պաշտպանում էր Անկարային կոմունիզմից, Միացյալ Նահանգների գործուն աջակցությամբ Թուրքիան դարձավ Եվրոպայի արևելքում Արևմուտքի թերևս թիվ մեկ գործընկերը, Թուրքիան ԱՄՆ-ի օգնությամբ նախ դարձավ ՄԱԿ-ի հիմնադիր անդամ, ապա ընդունվեց ՆԱՏՕ: XX դարավերջին Միացյալ Նահանգների հեղինակած Բաքու-Թբիլիսի-Ջեյհան ածխաջրածնային նախագծում Թուրքիան դառնում է Կասպից ծովից դեպի Արևմուտք գնացող էներգետիկ միջանցքի գործարքի հիմնական գործընկերներից մեկը: Բացի այդ Վաշինգտոնը գրեթե միշտ աջակցել է Անկարայի ԵՄ լիիրավ անդամակցության գործընթացին:

Թուրքիան իր հերթին որպես տարածաշրջանային ուժ օժանդակում էր ԱՄՆ-ին իր հարևան տարածքներում՝ Բալկաններից մինչև Կովկաս ու Մերձավոր Արևելք, նախ հանդիսանալով առա-

¹³³ Պաշտոնաթող գեներալ լեյտենանտ, նախկինում Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի աշխատակից Շադի Էրգյուվենլի հետ հարցազրույցից, մարտ 27, 2010թ.:

ջապահ կետ ԽՍՀՄ-ի, ապա Իրաքի հանդեպ վերահսկողության հարցում: Թուրքիան գործընկերության ձեռք է մեկնել ԱՄՆ-ի դաշնակից Իսրայելին, երբ վերջինս մնացել է միայնակ տարածաշրջանում, ինչպես նաև հարկ եղած ժամանակ գրեթե միշտ պաշտպանել է ԱՄՆ-ի շահերը միջազգային թատերաբեմում:

Մակայն ԽՍՀՄ փլուզումից հետո երևան եկած աշխարհաքաղաքական նոր վերադասավորումը, բնականաբար, իր ազդեցությունը թողեց նաև այս երկու տերությունների հարաբերությունների վրա: Մառը պատերազմի ավարտից հետո Թուրքիան կարծես մի պահ կորցրեց իր հրատապ անհրաժեշտությունն Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի համար. Անկարան այլևս առձակատման սահմանագծում չէր:

Մեկտեմբերի 11-ը շրջադարձային էր միջազգային հարաբերություններում: Թուրքիան կրկին հայտնվեց իրադարձությունների կենտրոնում: Նախ կարևոր է նրա աշխարհագրական դիրքը, երկրորդ, լինելով մահմեդական երկիր՝ Թուրքիան այնուամենայնիվ բռնել է ժողովրդավարության ու արևմտականացման ուղին, ինչով կարևորվում է ԱՄՆ-ի համար նախ որպես դաշնակից ահաբեկչության դեմ պայքարում, ապա որպես վարակիչ օրինակ տարածաշրջանի մահմեդական այլ երկրների համար: Թուրքիայի միջոցով ԱՄՆ-ն փորձում է ցույց տալ մերձավորարևելյան երկրների ազգաբնակչությանը, որ իսլամն ու ժողովրդավարությունն ամենևին իրարամերժ չեն:

Այդուհանդերձ, վերջին տարիներին Թուրքիան ԱՄՆ-ի համար դարձել է անկատավարելի ու անհասկանալի գործընկեր: Անկարան շատ հաճախ քայլեր է անում, որոնք քննադատության են արժանանաում Վաշինգտոնի կողմից, որտեղ արդեն խոսում

են Թուրքիայի՝ «առանցք» փոխելու, Արևմուտքից երես թեքելու ու հակամերիկյան զարգացումներում դերակատարություն ունենալու մասին:

Իրաքյան պատերազմին նախորդող իրավիճակն ու թուրք-ամերիկյան հարաբերությունները

Իրաքյան պատերազմը փորձաքար հանդիսացավ թուրք-ամերիկյան հարաբերություններում: Այն ազդարարեց հարաբերությունների որակական փոփոխությունների մասին:

ԱՄՆ-ն Իրաքի դեմ գործողություններ սկսելու ու դրանց առավել հաջող ընթացքի համար հյուսիսային ճակատի բացման կարիք ուներ և այդ գործում ապավինում էր Թուրքիայի աջակցությանը: ԱՄՆ-ն ցանկություն ուներ 60-90 հազար զինվոր մտցնել Հյուսիսային Իրաք Թուրքիայի տարածքով: Թուրքիան իր հերթին առաջ էր քաշում իր պատասխան պահանջները:

Նախ և առաջ Թուրքիան պնդում էր, որ պատերազմն անկարագրելի մեծ հարված էր հասցնելու իր տնտեսությանը ու ԱՄՆ-ից սպասում էր ստանալ անհատույց նվիրատվություններ, վարկեր, առևտրային արտոնություններ և այլն: Վաշինգտոնում հավատացած էին, որ Թուրքիան փորձում է իրաքյան պատերազմի շնորհիվ իր տնտեսության վիճակը բարելավել:

Մասնավորապես, այդ ժամանակվա վարչապետ Աբդուլլահ Գյուլը հայտարարել էր, թե Թուրքիայի մոտավոր վնասները կկազմեն 25-100 մլրդ ԱՄՆ դոլար: Այդ հարցով ԱՄՆ-ի հետ սակարկությունները վարում էին հիմնականում արտաքին գործերի նախարար Յաշար Յաքըջն ու պետնախարար Ալի Բաբաջանը: Իրաքյան պատերազմում Թուրքիայի մասնակցության դիմաց

ԱՄՆ-ն ի վերջո առաջարկեց 27 մլրդ.՝ 4 մլրդ նվիրատվություն, 2 մլրդ ռազմական պարտքի մարում, 1 մլրդ նավթային շահույթի տրամադրում, 20 մլրդ դոլար վարկի երաշխիք¹³⁴:

Երկրորդ հարցը կապված էր Հյուսիսային Իրաքում երկրորդ ռազմաճակատի բացման ու դրա համար Թուրքիայում 60-90 հազար զինվոր տեղակայման հետ: Թուրքիան դեմ էր, որ ռազմաճակատ բացվի ու նույնիսկ ժամանակավոր կերպով Թուրքիայում կռալիցիոն ուժերի զինվորների կուտակում լինի: Բացի այդ կառավարությունը հրաժարվեց որոշում ընդունել այս հարցով՝ պատճառաբանելով, որ քանի դեռ դա ՆԱՏՕ-ի ռազմական գործողություն չէր, ապա դրա համար անհրաժեշտ էր Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի որոշումը:

Դեռ 2002 թվականի դեկտեմբերի 2-ին այցով Անկարայում էին ԱՄՆ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մարք Գրոսմանը, որը նախկինում եղել է ԱՄՆ-ի դեսպանն Անկարայում, ու պաշտպանության նախարարի տեղակալ Փոլ Վուլֆովիցը, որոնք բանակցեցին այդ ժամանակ Թուրքիայի վարչապետ Աբդուլլահ Գյուլի, Արդարություն ու զարգացում կուսակցության (ԱԶԿ) նախագահ Էրդողանի և ևս երեք ԱԶԿ անդամների հետ: Սա թերևս նախապատրաստական զրույց էր, քանի որ մեկ շաբաթ հետո Էրդողանն ընդունելության արժանացավ Մալիտակ տանը: Արդեն 2002թ. դեկտեմբերի 18-ին Թուրքիայի կառավարությունը թույլատրեց ամերիկացի մասնագետներին ուսումնասիրություններ կատարել Թուրքիայի ռազմակայաններում¹³⁵:

¹³⁴ Milliyet, 17.02.2003;

¹³⁵ Radikal, 14.01.2003;

2003թ. հունվարի 19-ին ԱՄՆ գլխավոր շտաբի պետ գեներալ Ռիչարդ Մայերսը այց կատարեց Անկարա: Մայերսը Թուրքիայից պահանջեց 8 ռազմակայան, 3 նավահանգիստ ու Հյուսիսային Իրաք անցնելու համար 80 հազարի թույլատվություն: ԱՄՆ-ն ցանկություն էր հայտնել օգտագործել Ինջիրլիքի, Բաբմանի, Վանի, Մուշի, Գազիայնթեփի ու Դիարբեքրի օդանավակայանները: Սակայն Թուրքիայի Գլխավոր սպայակույտի նախագահ Հիլմի Օզքոքն ու պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը կանաչ լույս են վառել միայն 40 հազար զինվորի, 4 ռազմակայանի ու 2 նավահանգստի հարցում: Ի վերջո պայմանավորվածություն է ձեռք բերվում 62 հազար զինվորի, 255 ինքնաթիռի, 65 ուղղաթիռի տեղակայման մասին¹³⁶:

Երրորդ կետն այն էր, որ Թուրքիան ուզում էր ռազմական ուժ մտցնել Հյուսիսային Իրաք, ինչին համաձայն չէին ամերիկացիները, որոնք ի նկատի էին առնում քրդերի անհամաձայնությունն ու արձագանքները: ԱՄՆ-ն մտահոգված էր, որ թուրքերի մուտքը տարածք կարող էր բերել քրդերի հետ բախումների և կամ որ այդ դեպքում Իրանը ևս գորք կմտցնի Հյուսիսային Իրաք, ինչն անհաջողության կմատնեք ողջ պատերազմը: Իսկ թուրքական կողմը հավատացած էր, որ եթե Մոսուլ-Քիրքուքի նավթերն անցնեն քրդերի ձեռքը, ապա անխուսափելի կլինեք քրդական պետության հիմնումը: Անկարան չէր բավարարվում այդ խնդրում Վաշինգտոնի բանավոր երաշխիքներով, իսկ թուրքական որոշ շրջանակներ պատերազմի բարեհաջող ավարտի դեպքում ԱՄՆ-

¹³⁶ Türkiye, 26.02.2003;

ից պահանջում էին նույնիսկ Թուրքիային հանձնել Մոսուլն ու Քերքուքը¹³⁷:

Չորրորդ կետը քաղաքական բնույթ ուներ. Իրաքի տարածքային ամբողջականության պահպանումը կենսական նշանակություն ունի Թուրքիայի համար, թուրքերը պահանջում էին հստակեցնել պատերազմից հետո հյուսիսային Իրաքի քրդերի ու թուրքմենների վիճակը:

Թուրքիան միշտ իր հետաքրքրությունն է ցուցաբերել իրաքյան թուրքմենների ճակատագրով: Պնդումներ կան Իրաքում թուրքմեն ստվար բնակչության առկայության վերաբերյալ:

1991թ. հյուսիսային Իրաքի համեմատաբար ինքնավարության անցման հետ միաժամանակ մի քանի թուրքմենական խմբերի միությանը հիմնվեց Իրաքյան Թուրքմենների ճակատը (ԻԹՃ): Չնայած վերջինս սկզբնապես անկախ էր Թուրքիայից, սակայն արդեն 1996 թ. նախկին ղեկավարները, ինչպես օրինակ հիմնադիր Մուզաֆֆար Արսլանը, հեռացան այդ խմբավորումից՝ բողոքելով թուրք զինվորականության ու հետախուզության խիստ միջամտություններից: Իրաքյան թուրքմենների ներկայիս ղեկավարները հաստատեցին այդ խոսքերը՝ բանակցությունների ժամանակ թուրք զինվորականության ու հետախուզության հետ իրենց հաճախակի շփումներով¹³⁸:

Թուրքիան դիտարկում էր թուրքմեններին որպես հակակշիռ հյուսիսային Իրաքում քրդական տարրին, սակայն Անկարայի այս քայլերը բերում էին Վաշինգտոնում այն եզրակացության, որ

¹³⁷ Radikal, 04.01.2003;

¹³⁸ Michael Rubin, A Comedy of Errors: American-Turkish Diplomacy and the Iraq War, www.esiweb.org/pdf/esi_turkey_tpq_id_18.pdf, p. 6;

Թուրքիան ամենևին հետաքրքրված չէր Իրաքում կռալիցիոն գորքերի ճակատագրով, այլ միայն կենտրոնացած էր հյուսիսային Իրաքի վրա:

Փետրվարի 25-ին Թուրքիայում 62 հազար ամերիկացի զինվորի տեղակայման հարցը քննարկվեց Թուրքիայի կառավարության նիստում, արժանացավ հավանության և ուղարկվեց Թուրքիայի Ազգային Մեծ Ժողով՝ քվեարկության:

2003թ. մարտի 1-ին ԹԱՄԺ-ն մերժեց 62 հազար ամերիկյան զինվոր Թուրքիայում տեղակայելու ու թուրք զինվորներին երկրից դուրս ուղարկելու վերաբերյալ օրինագիծը՝ 264 կողմ, 250 դեմ, 19 ձեռնպահ: Սա վկայում էր նրա մասին, որ ԱԶԿ-ի 100 պատգամավոր դեմ են քվեարկել, ինչն անակնկալ էր ԱՄՆ-ի համար¹³⁹:

Համաձայն ԱՄՆ-ի պաշտպանության նախարարի տեղակալ Փոլ Վուլֆովիցի՝ այս անսպասելի քայլից Վաշինգտոնի վարչակարգն ապրեց «մեծ հիասթափություն»¹⁴⁰:

Պարզ է, որ մարտի 1-ի քվեարկությունն արտացոլում էր նաև հասարակական կարծիքը, որը մեծավ մասամբ դեմ էր ԱՄՆ-ի Իրաք ներխուժմանը: Արդարություն ու զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) միայն մի քանի ամիս առաջ էր հաղթանակ տարել խորհրդարանական ընտրություններում, և չնայած դրանց արդյունքում նա հնարավորություն էր ստացել կազմել միակուսակցական իշխանություն, սակայն կարիք ուներ ամրապնդելու իր

¹³⁹ Zaman, 02.03.2003;

¹⁴⁰ Turkey's future directions and U.S.-Turkey relations, Hearing before the Subcommittee on Europe of the Committee on International Relations, House of Representatives, One Hundred Eighth Congress, First session, October 1, 2003, Serial No. 108-50, www.house.gov/international_relations/108/89669.PDF, p.25;

հեղինակությունը ազգաբնակչության մոտ, քանի որ ընտրվել էր բնակչության միայն մեկ երրորդի կողմից: Իսկ բնակչության 70-90%-ը դեմ էր ԱՄՆ-ի Իրաք ներխուժմանը¹⁴¹:

Թուրքիան այդ օրերին հավատացած էր, որ ինքն այնքան կարևոր էր այս պատերազմում ԱՄՆ-ի համար, որ առանց Անկարայի օժանդակության ԱՄՆ-ն կհետաձգի մուտքն Իրաք¹⁴²: Մալավագոյնս բնութագրել է ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարի տեղակալ Մարք Գրոսմանը. «ԱՄՆ-ի սխալը կայանում էր նրանում, որ թուրքերը հավատացած էին, որ իրենք այնքան կարևոր են, որ մենք միայնակ չենք կարողանա ոչինչ անել»¹⁴³:

ԱՄՆ-ի սխալներից կարելի է նշել նաև քվեարկմանը նախորդող բանակցություններում պատվիրակության ղեկավարի ընտրությունը: 2003թ. փետրվարին ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը նշանակեց բանակցությունների պատասխանատու դեսպան Մարիսա Լինոյին: Թեև վերջինս փորձ ուներ Միրիայում և Իրաքում, եղել էր դեսպան Ալբանիայում, սակայն շատ քիչ փորձառություն ուներ կապված Թուրքիայի հետ: Որպես Իրաքում ամերիկաթուրքական համագործակցության վերաբերյալ բանակցություններում ԱՄՆ պատվիրակության ղեկավար՝ նա ուներ խիստ բացասական տրամադրվածություն, ինչը թերևս սրվել է նաև Անկարան ներկայացնող իր ազգայնականությամբ հայտնի դեսպան Ղենիզ Բյույուքբաշի կողմից¹⁴⁴:

Օրինագծի հետ կապված իրադարձությունը երևան հանեց այն, որ ԱԶԿ-ի և պետական կառույցների միջև որոշակի անհա-

¹⁴¹ Radikal, 04.03.2003;

¹⁴² Türkiye, 06.03.2003; Zaman, 11.03.2003;

¹⁴³ Turkey's future directions and U.S.-Turkey relations, p. 25;

¹⁴⁴ Michael Rubin, A Comedy of Errors, p. 4;

մաճայնություն կա: Կառավարությունը պատասխանատվությունը ցանկացավ դնել զինվորականության վրա, իսկ վերջիններս սպասեցին, որ կառավարությունը տա պատերազմի կամ խաղաղության որոշումը: Արդյունքում օրինագծի մերժումը ԱԶԿ-ի մեջ որոշ խմբեր կապեցին վարչապետ Գյուլի, իսկ ոմանք էլ՝ «զինվորների լռության» հետ¹⁴⁵:

Արդուլլահ Գյուլ

Արդուլլահ Գյուլը ծնվել է Քայսերի (Կեսարիա) քաղաքում՝ նախկինում հայաշատ քաղաքում, որն այսօր պահպանողականների կենտրոնն է, 1950թ. հոկտեմբերի 29-ին: Գյուլի ազգանունը գալիս է քաղաք Գյուլյուք մզկիթից, որտեղ նրա պապերը եղել են իմամ՝ հոգևորականներ: Գյուլի մոր՝ Ադվիյե Սաթողլուի ընտանիքը հնաբնակ է Քայսերիում: Մոր հայրը եղել է ուսուցիչ: Հիշեցնենք, որ Ժողովրդահանրապետական կուսակցության անդամ Ջանան Արըթմանը Գյուլին մեղադրեց նրա մոր հայ լինելու մեջ:

Քայսերիի ավագ դպրոցն ավարտելուց հետո նա շարունակել է իր ուսումը Ստամբուլի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում: Թեկնածուական ատենախոսությունը գրելիս երկու տարի անցկացրել է Լոնդոնում և էքսետերում: Ատենախոսությունը պաշտպանել է 1983թ.՝

¹⁴⁵ Zaman, 11.03.2003;

Ստամբուլի համալսարանում: Գյուլը մասնակցել է Սաքարյայի համալսարանում Արդյունաբերական ինժեներության ֆակուլտետի հիմնադրմանը, որտեղ 5 տարի դասավանդել է տնտեսագիտություն: Ապա Ստամբուլի համալսարանում ստացել է դոցենտի կոչում 1989թ.:

Աշխատել է որպես տնտեսագետ Սաուդյան Արաբիայում տեղակայված Իսլամական զարգացման բանկում 1983–1991թթ՝ 8 տարի ընտանիքով բնակվել է այդ երկրում:

1991–2007թթ. եղել է Թուրքիայի ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) պատգամավոր՝ Քայսերիի ընտրացուցակներով: ԹԱՄԺ-ում 1991–1995թթ. եղել է պլանավորման ու բյուջեի հանձնաժողովի անդամ: Գյուլը նաև աշխատել է Եվրոպայի խորհրդի միջխորհրդարանական վեհաժողովի մշակույթի, գիտության ու կրթության հանձնաժողովում, տնտեսական հարցերի ու զարգացման հանձնաժողովում, քաղաքական հարցերի հանձնաժողովում 1991–2001թթ.: 1995–2001թթ. եղել է ԹԱՄԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ: 2001–2002թթ. եղել է ՆԱՏՕ-ի միջխորհրդարանական վեհաժողովի անդամ:

Գյուլը խոսնակ էր ու պետնախարար 1996թ. հիմնադրված 54-րդ կառավարությունում (Էրբաքանի իսլամիստական կառավարությունը): Նա ղեկավարում էր Բարեփոխիչների շարժումն ու մրցում էր Առաքինություն կուսակցության նախագահի պաշտոնի համար 2000թ.: Դրանից հետո

նա Արդարություն ու զարգացում կուսակցության հիմնադիրներից մեկը դարձավ, որտեղ ստաձնեց կուսակցության փոխնախագահի պաշտոնը՝ զբաղվելով իրավաբանական ու քաղաքական հարցերով:

2002թ. նոյեմբերի 18-ին նա դարձավ վարչապետ ու ձևավորեց 58-րդ կառավարությունը: 2003–2007թթ. նա 59-րդ կառավարությունում փոխվարչապետ էր ու արտաքին գործերի նախարար: 2007թ. օգոստոսի 28-ին Արդուլլահ Գյուլը ԹԱՄԺ-ի կողմից ընտրվեց Թուրքիայի Հանրապետության 11-րդ նախագահ:

Ամուսնացած է (կինը՝ Հայրունիսա Գյուլ), ունի երեք զավակ:

<http://www.tccb.gov.tr/pages/president/biography/>

<http://news.ebru.tv/en/special/abdullahgul/106>

http://www.iyibilgi.com/haber.php?haber_id=101783

Մարտի 1-ի հարվածը փոքր-ինչ թեթևացնելու համար ԱՄՆ-ն անմիջապես պահանջեց խորհրդարան մտցնել երկրորդ օրինագիծը՝ փոփոխություններ մտցնելով այնտեղ: Մարտի 19-ին երկրորդ օրինագիծն արժանացավ կառավարության հավանությանն ու մտավ խորհրդարան: ԹԱՄԺ-ն ընդունեց թուրք զինուժի՝ երկրի սահմաններից դուրս գալն ու Թուրքիայի օդային տարածքը օտար զինուժի կողմից օգտագործելը թույլատրող օրինագիծը: Քվերակությանը մասնակացած 535 պատգամավորից 332-

ը քվեարկել են կողմ, 202՝ դեմ¹⁴⁶։ Ինչպես պարզ դարձավ ընդունված օրինագծից Թուրքիան դեռ հավակնում էր իր զինված ուժերն անհրաժեշտության դեպքում Հյուսիսային Իրաք մտցնել, ինչին բազմիցս դեմ են արտահայտվել Հյուսիսային Իրաքի բոլոր քրդական կազմակերպությունները։

Թուրք-ամերիկյան հարաբերությունները իրաքյան պատերազմի ժամանակ

ԱՄՆ-ն թույլ չտվեց թուրքական զորքերի մուտքը Հյուսիսային Իրաք և գործի դրեց ծրագիր «Բ»-ն՝ անկարգելներով մոտ 1000 զինվոր իջեցնելով Հյուսիսային Իրաք։ ԱՄՆ-ին այնտեղ սկսեցին մեծ աջակցություն ցույց տալ քրդերը (Մ.Բարզանի՝ 60 հազար զորք, Ջ.Թալաբանի՝ 40 հազար¹⁴⁷), ինչն անհանգստացնում էր Թուրքիային, քանի որ վերջինս վախենում էր, որ այդ դեպքում ամերիկացիները նրանց կխոստանան անկախություն և, որ ամենակարևորն է, Մոսուլն ու Քերքուքը։ Այդ օրերին Իրանի արտաքին գործերի նախարար Քամալ Խարազին նույնպես իր մտահոգությունն է հայտնել քրդերի դեպի Մոսուլ ու Քերքուք շարժվելու փաստի կապակցությամբ, սակայն կոչ է արել Թուրքիային հրաժարվել Հյուսիսային Իրաք զորք մտցնելուց¹⁴⁸։

Փաստորեն, արդեն պատերազմի առաջին օրերից սկսվում էր իրականանալ Թուրքիայի համար ամենից անցանկալին՝ քրդերի համագործակցությունն ամերիկացիների հետ, ինչն ըստ Անկարայի բերելու էր քրդերի ամրապնդմանը տարածաշրջանում։ Մա

¹⁴⁶ Milliyet, 20.03.2003;

¹⁴⁷ Türkiye, 05.04.2003;

¹⁴⁸ Zaman, 31.03.2003;

Թուրքիայի համար վտանգավոր էր, եթե հաշվի առնենք, որ Անկարան դեռ չի լուծել իր երկրում քրդական խնդիրը։

Արդեն 2003թ. ապրիլի 3-ին ԱՄՆ արտաքին գործերի նախարար Քոլին Փաուելը այցելեց Անկարա և հանդիպումներ ունեցավ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլլահ Գյուլի, հանրապետության նախագահ Ահմեդ Նեջդեդ Սեզերի, վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ու Գլխավոր սպայակույտի նախագահ Հիլմի Օզքոքի հետ։ Փաուել-Գյուլ հանդիպման ժամանակ քննարկվեցին Թուրքիային հուզող այնպիսի հարցեր, ինչպես Հյուսիսային Իրաքից դեպի Թուրքիա փախստականների հնարավոր մեծ ալիքը՝ Մոսուլ-Քիրքուք շրջաններում թուրքմենների անվտանգությունը, Քրդստանի բանվորական կուսակցության ահաբեկչական սպառնալիքները։ Որոշում ընդունվեց, որ Թուրքիայի զինված ուժերը իրավունք կունենան միջամտել, այսինքն անցնել Իրաքի սահմանը միայն այս հարցերում անվերահսկելի իրադարձությունների ծավալման դեպքում¹⁴⁹։ Իսկ Փաուելն իր այցով ստացավ այն, ինչի համար գնացել էր Անկարա՝ աջակցություն հյուսիսային ճակատի կազմակերպչական հարցերում։ Դա է վկայում այն, որ իր այցից անմիջապես հետո աշխուժացավ Հյուսիսային Իրաք զինամթերք տեղափոխող փոխադրամիջոցների երթևեկությունը։

ԱՄՆ-ն Թուրքիայի համագործակցության համար որպես խայծ շարունակում էր օգտագործել տրամադրվելիք 1 մլրդ դոլար

¹⁴⁹ 1991թ. Օոցի պատերազմից հետո Թուրքիան փախստականների հզոր ալիքի տակ մնաց և վերջիններիս հետ միասին Թուրքիա ներթափանցեցին ՔԲԿ զինյալներ, ինչն ահաբեկչական ալիքի պատճառ դարձավ։

¹⁴⁹ Milliyet, 03.04.2003;

անհատույց օգնությունը, որը հետագայում փոխարինվեց 8,5 մլրդ դոլար վարկով¹⁵⁰:

Հարաբերությունները, սակայն, շարունակում են մնալ այն աստիճան լարված, որ ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆիլդը մայիս ամսին այցելել է Ինջիրլիք, Բայջ չի հանդիպել Թուրքիայի ղեկավարների հետ¹⁵¹: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ն զիտակցում էր, որ ընդհանրապես առանց Թուրքիայի իրաքյան պատերազմն ավելի բարդ կլինի վարել և քայլեր էր անում հարաբերությունների նորոգման համար: Այսպես, 2003. մայիսի 6-ին CNN Türk հեռուստաալիքով կազմակերպվեց հարցազրույց ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Փոլ Վուլֆովիցի հետ, որը հայտնեց ԱՄՆ-ի նոր սպասումները Թուրքիայից՝ կապված Հյուսիսային Իրաքի, Սիրիայի ու Իրանի հետ և շեշտեց, որ այս անգամ չեն ուզում կրկին հուսախաբ լինել¹⁵²: Վուլֆովիցի հետևեցին նույն ոգով արված ԱՄՆ արտաքին գործերի փոխնախարար Մարք Գրոսմանի և ԱՄՆ պաշտպանության նախարարության խորհրդական Ռիչարդ Փերլի հայտարարությունները¹⁵³: Վուլֆովից-Գրոսման-Փերլ եռյակի այս խստության հետ համեմատելի էր ԱՄՆ արտաքին գործերի նախարար Բ. Փաուելի ուղերձների մեղմությունը¹⁵⁴:

Ամեն դեպքում Թուրքիան, հույս ունենալով մասնակցություն ունենալ Իրաքի վերականգման ծրագրերում, փորձում էր մեղմել հարաբերությունների սրացումը: Այսպես, 2003թ. հունիսի 23-ին

¹⁵⁰ Milliyet, 09.04.2003;

¹⁵¹ Türkiye, 06.05.2003;

¹⁵² Zaman, 08.05.2003;

¹⁵³ Yeni Şafak, 10.05.2003;

¹⁵⁴ Milliyet, 09.05.2003;

կառավարությունը, շրջանցելով խորհրդարանը, ընդունեց գաղտնի բանաձև, համաձայն որի օտարերկրյա զինվորներն, այնուամենայնիվ, ստացան Թուրքիայի տարածք մուտք գործելու իրավունք¹⁵⁵: Թուրքիայի այս վարքը լիովին բացատրելի է, քանի որ Անկարան զգում էր ԱՄՆ-ի կարիքը հատկապես Կիպրոսի հարցում: Այսպես, արդեն հուլիսի 1-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլլահ Գյուլը Կիպրոսի հարցում օգնություն է խնդրել ամերիկացի իր գործընկեր Քոլին Փաուելից¹⁵⁶:

Թուրք-ամերիկյան հարաբերություններում 2003թ. մարտի 1-ից հետո առաջին լուրջ բախումն էր, թերևս, նույն տարվա հուլիսի 4-ին տեղի ունեցած միջադեպը Հյուսիսային Իրաքի Սուլեյմանիյե քաղաքում¹⁵⁷, երբ ամերիկյան զինվորները ձերբակալեցին թուրքական հատուկ ծառայությունների 11 աշխատակցի՝ Քիրքուբի քուրդ նահանգապետի հանդեպ մահափորձ նախապատրաստելու մեղադրանքով¹⁵⁸: Ընդ որում թուրքերին վրդովվեցրել էր հատկապես ձերբակալման ձևը՝ ամերիկացիները ձերբակալվածների գլուխներին պարկեր էին անցկացրել, ինչպես դա անում են Իրաքում ձերբակալված ահաբեկիչների հետ¹⁵⁹:

¹⁵⁵ Milliyet, 01.07.2003;

¹⁵⁶ Milliyet, 01.07.2003;

¹⁵⁷ U.S. remains coy about where Turkish troops would go, Slate, By Timothy Noah, July 27, 2003, lists.stir.ac.uk/pipermail/media-watch/2003-August/000753.html;

¹⁵⁸ Abdel-Aziz Mahmoud Hanafi, New Trends in Turkish Foreign Policy, www.siyassa.org.eg/esiyassa/ahram/2004/4/1/REPO7.htm;

¹⁵⁹ US-Turkish ties hit new low with arrest of soldiers, Jeffrey Donovan, Radio Free Europe, July 7, 2003, www.why-war.com/news/2003/07/07/usturkis.html;

Հուլիսի 4-ի միջադեպի հիման վրա Թուրքիայում 2006թ. նկարահանվել է գեղարվեստական կինոնկար «Գայլերի հովիտ – Իրաք», որը պարունակում է հակաամերիկյան երանգներ: 10 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ ֆիլմն ամենաթանկն է Թուրքիայի կինոարտադրության պատմության մեջ: Այն պատմում է, թե ինչպես է թուրքական մի հատուկ գործողությունների խումբ Իրաքում վրեժխնդիր լինում ամերիկացիների կողմից Սուլեյմանիեի միջադեպում պատվազրկված թուրք սպայի ինքնասպանության համար:

«Գայլերի հովիտ – Իրաք» կինոնկարը հավաքել է աշխարհում շուրջ 25 մլն ԱՄՆ դոլար, իսկ ցուցադրման առաջին 6 օրվա ընթացքում այն դիտել է 1,75 մլն թուրք:

Թուրք-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունները շարունակվեցին նոր ուժով: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլլահ Գյուլը հուլիսի 22-ին այցելեց Վաշինգտոն, ինչին նախորդեց ՆԱՏՕ-ի հրամանատար, բանակային գեներալ Ջոնսի ու ԱՄՆ գեներալ Աբիգայդի այցն Անկարա հուլիսի 18-ին, որտեղ նրանք հանդիպումներ են ունեցել Գլխավոր սպայակույտի ղեկավարության հետ և համաձայն թուրքական մամուլի քննարկել հիմնականում միայն Թուրքիայի մոտեցումները քրդա-

կան խնդրին¹⁶⁰: Մակայն ըստ ամերիկյան մամուլի Աբիգայդը Թուրքիայից պահանջել է զինվորներ, որպեսզի վերջիններս օժանդակեն Իրաքում գտնվող ամերիկացի ռազմուժին: Մա առաջին դեպքն էր, երբ Վաշինգտոնը պաշտոնապես ընդունել է, որ այդպիսի դիմում է հղել Թուրքիային:

Երկու երկրների կառավարությունների կողմից էլ սա ընդունվեց որպես հարաբերությունները բարելավելու մի հնարավորություն¹⁶¹:

Գյուլը հանդիպումներ է ունեցել իր գործընկեր Քոլին Փաուելի, պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆիլդի, Ազգային անվտանգության խորհրդական Քոնդոլիզա Ռայսի, փոխնախագահ Դիք Չենիի հետ¹⁶² և խոստացել հնարավորինս շուտ որոշում ընդունել այդ հարցում¹⁶³: Նախքան Քոլին Փաուելի հետ հանդիպումը «Washington Post» թերթին տված հարցազրույցում Գյուլը նշել է, որ Թուրքիան կհամաձայնվի ապահովել ԱՄՆ-ի պահանջները, եթե Վաշինգտոնը տա երաշխիքներ, որ Անկարան իր կարևոր դերը կունենա Իրաքի վերակառուցման գործում¹⁶⁴:

Թեև ԱՄՆ արտաքին գործերի նախարարը խոստացել է ամեն կերպ աջակցել Թուրքիայի այս պահանջին, բայց Թուրքիայի թե՛ հասարակական կարծիքը, թե՛ պետական շրջանակները սկզբունքորեն դեմ էին գորքերը Իրաք ուղարկելուն, նվազագույնս նրանք համաձայն էին գորքերի՝ միայն Հյուսիսային Իրա-

¹⁶⁰ Türkiye, 21.07.2003;

¹⁶¹ AFP, July 28, 2003; lists.stir.ac.uk/pipermail/media-watch/2003-August/000753.html;

¹⁶² Envoy denies talk of Iraq troops for business pacts, Washington Times, By David R. Sands, July 26, 2003;

¹⁶³ Jean-Christophe Peuch, Washington Turns To Ankara For Help In Iraq, RFE/RL, 25 July 2003, lists.stir.ac.uk/pipermail/media-watch/2003-August/000753.html;

¹⁶⁴ Խոյն տեղում;

քում տեղակայվելուն, որը շատ ձեռք էր տալիս Թուրքիային, քանի որ այսպիսով վերահսկողության տակ կմնային այդ տարածքի քրդերը: Վաշինգտոնը, սակայն, դեմ էր թուրքական զորքերի Հյուսիսային Իրաքում տեղակայվելուն, քանի որ դա միայն կուժեղացներ լարումը տարածաշրջանում և կարգելակեր Իրաքի կայունացմանը¹⁶⁵: Վաշինգտոնը բավարար էր համարում Հյուսիսային Իրաքում առկա 1 500 թուրք զինվորների առկայությունը: Ավելի մեծ քանակը թույլ կտա վերջիններիս օժանդակել թուրք մեններին ընդդեմ քրդերի¹⁶⁶:

Թուրքիան կրկին գործադրեց իր հետաձգելու քաղաքականությունը, և արդեն Անկարայում՝ վարչապետ Էրդողանի և Գլխավոր սպայակույտի հրամանատար Հիլմի Օզքոքի մասնակցությամբ գազաթաժողովից հետո¹⁶⁷, Գյուլը հայտարարեց, որ չնայած Վաշինգտոնի շտապողականությանը՝ զորքերի տրամադրման խնդրի պատասխանը կլինի միայն սեպտեմբերին, քանի որ անհրաժեշտ է անցկացնել քննարկումներ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում¹⁶⁸, իսկ այն գտնվում է ամառային արձակուրդում: Անկարան կրկին դիմեց ՄԱԿ-ի կամ ՆԱՏՕ-ի մանդատին սպասելու պատրվակին, ինչպես դա արել էր անցյալ անգամ:

2003 թվականի սեպտեմբերի 2-ին Անկարա այցելեց ՆԱՏՕ-ի հրամանատար բանակային գեներալ Ջոնսը: Նա քննարկեց շուրջ 30 000 թուրք զինվորների Իրաք ուղարկվելու հավանականու-

¹⁶⁵ Sami Shoursh, What About Turkish Troops In Kurdistan Iraq?, *Al Hayat*, 30 July 2003, lists.stir.ac.uk/pipermail/media-watch/2003-August/000753.html;

¹⁶⁶ Henri J. Barkey, A New Basis for an Old Friendship, *Los Angeles Times*, July 27, 2003, lists.stir.ac.uk/pipermail/media-watch/2003-August/000753.html;

¹⁶⁷ Troops talks speed up in Ankara, *Turkish Daily News*, July 29, 2003;

¹⁶⁸ www.washingtoninstitute.org/media/speakers/gul072503.htm

թյունը ու դրա հետ կապված ծախսերը: Նա հանդիպում է ունեցել Գլխավոր սպայակույտի հրամանատար Հիլմի Օզքոքի հետ, որի բռնած դիրքը հայտնի էր. «Ջինվոր չուղարկելն ավելի վտանգավոր է, քան զինվոր ուղարկելը»: Իհարկե, զինվոր ուղարկելու խնդիրն այլ հարցեր էր ներառում, մասնավորապես թուրք զինվորների Հյուսիսային Իրաքում տեղակայվելու կետը, որը մեծապես կարևորվում էր հատկապես Քրդստանի բանվորական կուսակցության գործունեության դեմն առնելու համար¹⁶⁹: Այս անգամ էլ հասարակական կարծիքը դեմ էր Իրաք զորք ուղարկելուն. համաձայն ANAR հետազոտական կենտրոնի անցկացրած սոց.հարցման արդյունքների դեմ էր բնակչության 64,4 %-ը¹⁷⁰:

Հոկտեմբեր ամսին իրավիճակը Իրաքում փոխվեց, իրաքյան տարբեր խմբեր, հիմնականում քրդերը, հայտարարություններով հանդես եկան, որ թուրք զինվորները Իրաքում անցանկալի են: Այս կապակցությամբ Վաշինգտոնն այլևս հակված չէր շտապեցնել Անկարային: Այս զարգացումը թեթևություն բերեց Անկարային, հատկապես այն պատճառով, որ ԱՄՆ-ն դեմ էր թուրք զինվորականների Հյուսիսային Իրաքում տեղակայվելուն, իսկ Իրաքի այլ տարածքները չէին մտնում Թուրքիայի հետաքրքրությունների շրջանակի մեջ:

Իրաքյան պատերազմն ու հետագա զարգացումները, այսպիսով, քանդեցին թուրք-ամերիկյան հարաբերությունների վերաբերյալ երկու դիցույթ: Առաջինն այն էր, որ Թուրքիան չափազանց կարևոր դաշնակից է ԱՄՆ-ի համար, որպեսզի անտեսվի Իրաքի

¹⁶⁹ Zaman, 03.09.2003;

¹⁷⁰ Yeni Şafak, 07.09.2003;

դեմ պատերազմում¹⁷¹: Քրդերի ջերմ ընդունելությամբ ԱՄՆ-ի զինված ուժերի հաջողությունները Հյուսիսային Իրաքում ցույց տվեցին, որ Անկարայի կարևորությունը սահմանափակ էր: Պատերազմի կողմից չեզոքացված երկրորդ դիցույթն էր այն, որ երկու երկրների միջև միակ իրական կապող օղակը ռազմական հետաքրքրությունն է: Պենտագոնը ավանդաբար միշտ պաշտպանում էր Թուրքիայի շահերը: Սակայն 2003 թվականին երևաց, որ թուրք զինվորականությունը չկարողացավ կամ չցանկացավ օգնել ԱՄՆ-ի պահանջների բավարարմանը: Դրանով է հենց պայմանավորված այն, որ 2003թ. մարտի 1-ի օրինագծի տապալման մեջ ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Փոլ Վոլֆովիցը մեղադրեց ոչ թե իսլամամետ նոր կառավարությանը, այլ զինվորականությանը¹⁷²: Ուշադրության արժանի են Փոլ Վոլֆովիցի խոսքերն այն մասին, թե «Թուրքիայի հետ ռազմավարական համագործակցության հիմքն այսուհետ լինելու է ոչ թե ավելի շատ ռազմական, այլ տնտեսական ու քաղաքական»¹⁷³:

Հաջորդ մի քանի տարիների ընթացքում թուրք-ամերիկյան հարաբերությունները չի կարելի բնութագրել որպես «ռազմավարական», ինչպես նախկինում: Ավելին, աստիճանաբար Թուրքիայի ու Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական վեկտորներն էին տարբերվում, հատկապես երբ խոսքը գնում էր Մերձավոր Արևելքի մասին: Այսպես, որպես դրա ամենաակնառու նշան 2006թ. հունվարին Պաղեստինյան ինքնավարությունում կայա-

¹⁷¹ Harry Dinella, John Sitilides, Repairing Turkish-American relations, *Washington Times*, July 27, 2003, lists.stir.ac.uk/pipermail/media-watch/2003-August/000753.html;

¹⁷² Barkey, A New Basis for an Old Friendship;

¹⁷³ www.milliyet.com/2004/02/01/yazar/sazak.html;

ցած խորհրդարանական ընտրություններից մի քանի շաբաթ անց ԱԶԿ ղեկավարությունն Անկարայում հյուրընկալեց ՀԱՄԱՍ-ի ռազմական առաջնորդ Խալեդ Մաշալին¹⁷⁴, մինչդեռ ԱՄՆ-ն անում էր ամեն քայլ ահաբեկչական կազմակերպությունների ցանկում ընդգրկված այդ կազմակերպությանը մեկուսացնելու ուղղությամբ:

Թուրքիան ցուցաբերել է ամենախորը հակաամերիկյան մոտեցումները սոց.հարցման գրեթե բոլոր կարևոր կատեգորիաներում:

Ընդհանուր առմամբ, Բուշ-կրտսերի կառավարման ժամանակահատվածում Միացյալ Նահանգների վարկանիշը Թուրքիայում շատ ցածր էր: Այսպես, 2005թ. մայիսին SONAR ընկերության կողմից անցկացված սոցիալաբան արդյունքում պարզվեց, որ մասնակցիների միայն 3,8%-ն է ԱՄՆ-ն համարել «Թուրքիայի ամենից մոտ ընկերը թուրքական պետություններից հետո»¹⁷⁵: Աշխարհի 47 պետություններում անցկացված ու 2007թ. հունիսին հրապարակված մի ուսումնասիրության համաձայն Թուրքիան ցուցաբերել է ամենախորը հակաամերիկյան մոտեցումները գրեթե բոլոր կարևոր կատեգորիաներում: Թուրքերն ամենաքիչը դրական են մոտենում Միացյալ Նահանգներին ու նրա քաղաքա-

¹⁷⁴ J. Scott Carpenter, Soner Cagaptay, Regenerating the U.S.-Turkey Partnership., Policy Note, The Washington Institute for Near East Policy, Number 2, November 2010, p. 4;

¹⁷⁵ www.sansursuz.com/haberler/templates/sansursuz.asp?articleid=10387&zoneid=1&y=;

ցիներին (համապատասխանաբար 9 տոկոս ու 13 տոկոս): Ավելին, Թուրքիան պաղեստինցիների հետ միասին ամենացածր դրական կարծիքն ունեն ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության արդարացիության մասին՝ մոտ 2 տոկոս¹⁷⁶:

Հարաբերությունների կարգավորումը

Բարաք Օբամայի օրոք

Ստանձնելով նախագահի պաշտոնն Օբաման ԱՄՆ արտաքին քաղաքական թիվ մեկ նպատակ հռչակեց Աֆղանստանում իրավիճակի կայունացումը, ինչն առաջին պլան մղեց Թուրքիային, որը կարևոր դիրքեր ունի այնտեղ տեղակայված ՆԱՏՕ-ի ուժերում: Բացի այդ Օբաման իր նախագահությունն սկսեց իսլամական աշխարհի հետ հաշտություն գտնելու քայլերով, իսկ այդ ասպարեզում կրկին նա Անկարայի աջակցության կարիքն ուներ: Վերջինս անցած 6 տարիների ընթացքում արդեն հասցրել էր վստահելի գործընկեր դառնալ Մերձավոր Արևելքում: Միաժամանակ Օբաման հայտարարեց Իրանի հետ երկխոսություն սկսելու հավանականության մասին, որտեղ նույնպես Թուրքիան կարող էր դերակատարում ունենալ: ԱՄՆ նախագահը նաև հայտարարեց Իրաքից ամերիկյան զորքերի դուրս բերման ծրագրերի մասին, և թեև Թուրքիան 2003թ-ին արգելեց իր տարածքով մտնել Իրաք, այսօր այն ամերիկյան զորքերի թիվ մեկ տարանցիկ ուղին է:

¹⁷⁶ «Rising Environmental Concern in 47-Nation Survey,» Pew Global Attitudes Project, June 27, 2007, <http://pewglobal.org/reports/display.php?ReportID=256>;

Թուրքիան գտնվում է այնպիսի մի վայրում, որտեղ խաչվում են ԱՄՆ արտաքին քաղաքականության ու ազգային անվտանգության այնքան շատ խնդիրներ:

Ֆ. Գորդոն

Այս առումով պատահական չէր, որ Օբաման որպես նախագահ իր առաջին արտասահմանյան շրջայցում 2009թ. ապրիլին ներառեց Թուրքիան, որին նախորդել էր պետքարտուղար Քլինթոնի այցը՝ մարտին: Օբամայի ելույթը Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում ցույց տվեց, որ Վաշինգտոնը թեև դեռ անհանգստանում է Թուրքիայի արտաքին քաղաքականության փոփոխված վեկտորներից, սակայն որոշում է կայացրել նաև օգտվել այդ փոփոխությունից ու գործի դնել Անկարայի՝ Մերձավոր Արևելքում կուտակված սոցիալական կապիտալը:

Ամեն դեպքում պետք է նշել, որ թուրք-ամերիկյան հարաբերությունները կապված են իրար բազում տեսանելի ու անտեսանելի ռազմավարական խնդիրներով, որոնք այդքան էլ դյուրին չէ քանդել: Մեջբերենք ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական ու եվրասիական հարցերով տեղակալ Ֆիլիփ Գորդոնի խոսքերը, որ նա ասաց 2009թ. նոյեմբերի 12-ին Անկարայում՝ մամլո ասուլիսի ժամանակ.

«Թուրքիան այնքան կարևոր է այնքան շատ հարցերում, որ հնարավոր չէ աստիճանակարգել դրանք: ... Կարելի է նշել

Իրանի միջուկային խնդրի կարևորությունը, Աֆղանստանի կարևորությունը, որտեղ մեր գործերն են կոչվում ու մահանում... կարելի է նշել Մերձավոր Արևելքում խաղաղության կարևորության ու տարածաշրջանի համար դրա հետևանքների մասին, կարելի է նշել թուրք-եվրոպական հարաբերությունների մասին, կարելի է նշել հայկական հարցը, կարելի է նշել էներգիան. Թուրքիան գտնվում է այնպիսի մի վայրում, որտեղ խաչվում են մեր արտաքին քաղաքականության ու ազգային անվտանգության այնքան շատ խնդիրներ: Եվ պարզապես անհնար է ու անիմաստ աստիճանակարգել դրանք, որովհետև անմիջապես կարելի է նայել մեկ այլ խնդրի ու նշել, որ դա հավասարապես կարևոր է»¹⁷⁷:

Քննարկենք Ֆ.Գորդոնի նշած կարևոր կետերն ավելի մանրամասն:

Աֆղանստան

Անկարան արդեն երկու անգամ ստանձնել է այնտեղ տեղակայված միջազգային ուժերի հրամանատարությունը: Մուսուլման երկրի զինվորների առկայությունն այնտեղ շատ էական է, քանի որ դրանով ցույց է տրվում, որ ահաբեկչության դեմ պատերազմը քրիստոնեություն-իսլամ պայքար չէ: Մասնավորապես, Թուրքիան կազմակերպում է ու իրականացնում աֆղանական զինվորների կրթությունը:

¹⁷⁷ Europe and Eurasia: U.S.–Turkey Relations, 6076 words, 30 November 2009, State Department Press Releases And Documents, STDP, Copyright 2009 Federal Information & News Dispatch, Inc.

Ամեն աֆղանստանցի ունի այս կամ այն տիպի կապ Թուրքիայի հետ:

Չ. Ռասուլ

Միաժամանակ, Թուրքիան ակտիվ դեր է կատարում Աֆղանստանում միջազգային հումանիտար գործունեության ոլորտում: Այսպես, Թուրքիայի մասնակցությամբ վերականգնվել կամ կառուցվել է 68 տարրական ու միջնակարգ դպրոց: 2003թ. մինչ այսօր թուրքական պետական տարատեսակ ծրագրերով աֆղանստանցի ուսանողներին է տրամադրվել ավելի քան 1200 կրթաթոշակ: Սրա հետ մեկտեղ, Թուրքիան ընդհանրապես ակտիվ դերակատարում ունի Աֆղանստանի շինարարական ոլորտում՝ հիվանդանոցներ, մզկիթներ, ճանապարհներ, կամուրջներ և այլն: Աֆղանստանցի զինվորականներն ու քաղաքացիական անձինք բուժում են անցնում թուրքական հիվանդանոցներում՝ Աֆղանստանում ու Թուրքիայում:

Թուրք-աֆղանական հարաբերությունների բարձր մակարդակի մասին է փաստում Աֆղանստանի արտաքին գործերի նախարար Զալմայ Ռասուլի այն հայտարարությունը, թե «ժամանակակից աֆղանական բանակը ստեղծվել է թուրք սպաների կողմից» և որ «ամեն աֆղանստանցի ունի այս կամ այն տիպի հարաբերություն Թուրքիայի հետ»¹⁷⁸:

¹⁷⁸ И.А. Свистунова, О политике Турции в отношении Афганистана, Институт Ближнего Востока, iimes.ru/rus/stat/2011/21-01-11.htm;

Իրաք

Ամերիկայի Միացյալ Նահանգները պատրաստվում են դուրս հանել զորքերը Իրաքից ու հետաքրքրված են այդ երկրի կայունությամբ ապագայում, ինչպես նաև հույժ անհնազատացած են Իրաքի՝ հարևան Իրանի ազդեցության տակ ընկնելու հավանականությունից¹⁷⁹: Թուրքիան նաև կարևոր դերակատարում է խաղում ու կարող է խաղալ ապագայում Իրաքի վերակառուցման հարցում: Թուրքական ձեռներեցներն ու շինարարական ընկերությունները մասնավորապես ակտիվ են երկրում: Ի վերջո, Թուրքիայում տեղակայված Ինջիրլիքի ամերիկյան ռազմակայանը հնարավորություն է վերահսկելու իրավիճակը տարածաշրջանում:

Քրդեր

Իրաքյան պատերազմի հենց սկզբից Թուրքիայի թիվ մեկ վախը դաշնային, իսկ ապա նաև անկախ քրդական պետության ստեղծումն էր: Նավթով հարուստ Քիրքուքը կարող է դառնալ անկախ Քուրդիստանի հիմքը: Իրաքյան պատերազմի սկզբին Անկարան թշնամական վերաբերմունք էր որդեգրել իրաքյան քրդերի հանդեպ՝ փորձելով խաղարկել թուրքմենական իր քարտը:

Թուրքիան նախաձեռնողական իր քաղաքականության շնորհիվ այսօր արդեն լավ հարաբերություններ ունի Հյուսիսային Իրաքի Քրդստանի տարածաշրջանային կառավարության հետ:

¹⁷⁹ George Friedman, The Turkish Role in Negotiations with Iran, *Geopolitical Weekly*, <http://www.stratfor.com/weekly/20110110-turkish-role-negotiations-iran> (accessed 11 January 2011);

Մասնավորապես, նրանք համատեղ ջանք են գործադրում ՔԲԿ-ի դեմ պայքարում, սակայն համագործակցությունն ավելի երկարաժամկետ նպատակ ունի: Ինչպես նշվեց վերը, թուրքերը գիտեն, որ վաղ թե ուշ ամերիկացիները գնալու են Իրաքից: Ուստի, Անկարան հիմնում է քաղաքական ու տնտեսական հարաբերություններ Իրաքյան Քրդստանի հետ, որպեսզի կարողանա թե՛ վերահսկել նրան, թե՛ հովանավորել այն, եթե Իրաքը քանդվի: Բացի այդ, քանի որ թե՛ թուրքերը, թե՛ իրաքյան քրդերը անհանգստացած են Իրաքի շիական կառավարության վրա Իրանի աճող ազդեցությունից, նրանք գտել են, որ իմաստ ունի միավորվել՝ մրցակցելու փոխարեն:

ՔԲԿ-ի դեմ պայքարում Թուրքիայի հիմնական նպատակն է վերացնել Հյուսիսային Իրաքում նրա հենակետերը: Այս հարցում Անկարան մշտապես աջակցություն էր պահանջում Վաշինգտոնից, թեև վերջերս ՎիքիԼիքսի միջոցով գաղտնագրված փաստաթղթերը ցույց են տալիս, որ թուրք-ամերիկյան հարաբերությունների այս հատվածում ամեն ինչ լավ չէ¹⁸⁰:

Իրան

Իրանի միջուկային ծրագրի ընթացքի արգելակումն ու դրա՝ խաղաղ ատոմի ուղիով ընթանալը երաշխիքի տակ վերցնելը մնում է Միացյալ Նահանգների առաջնահերթ արտաքին քաղաքական նպատակներից մեկը: Դրանից գատ, թույլ Իրաքի պարագայում Իրանը դառնում է ամենաուժեղ երկիրը Պարսից ծոցում,

¹⁸⁰ Wikileaks reveal US, PKK 'links', *Hürriyet Daily News*, <http://www.hurriyettailynews.com/n.php?n=wikileaks-on-the-relations-between-the-us-and-pkk-2011-03-31>; 'Wikileaks documents show Turkey helped al-Qaida', *The Jerusalem Post*, <http://www.jpost.com/International/Article.aspx?id=196752>;

ինչը նույնպես չի բխում Միացյալ Նահանգների շահերից¹⁸¹: Անկարան՝ բարելավված թուրք-իրանական հարաբերություններով, բայց մինևույն ժամանակ երկարաժամկետ առումով Իրանի հետ մրցակցային հեռանկարով կարող է օգտակար լինել Վաշինգտոնին: Մասնավորապես, Թուրքիան, Բրազիլիայի հետ համատեղ, իր վրա է փորձում վերցնել Իրանի հետ միջուկային ծրագրի վերաբերյալ բանակցությունները կազմակերպելու առաքելությունը:

Էներգետիկա

Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի ու Մերձավոր Արևելքի միջև կամուրջի դեր ստանձնած Թուրքիան արդեն դարձել է կարևոր էներգետիկ խաչմերուկ: Թուրքիան ակտիվորեն զազային առևտուր է անում Ռուսաստանի հետ, որից արդեն մեծ կախում ունի: Բայց նայնպես, հիմնական ռազմավարական ուղիների պարագայում Թուրքիան հակառուսական դեր է խաղում: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը հիմնականում ստեղծվեց որպես քաղաքական ծրագիր՝ խաթարելու Ռուսաստանի մենաշնորհային դիրքը Կասպիցի նավթի արտահանման հարցում: Այսօր, երբ համաշխարհային շուկայում ավելի է կարևորվում կապույտ վառելիքը, Միացյալ Նահանգների կողմից առաջ է մղվում Հարավային միջանցքի, մասնավորապես Նաբուկկո գազատարի նախագիծը, որը կրկին այլընտրանք է ռուսական ուղուն:

¹⁸¹ George Friedman, The Turkish Role;

Եվրոպական Միություն

Միացյալ Նահանգները միշտ աջակցել են Թուրքիայի մուտքը եվրոպական ընտանիք: ԵՄ անդամակցության գործընթացի բոլոր շրջադարձային կետերում Թուրքիայի հաջողությունները պայմանավորված են եղել այդ թվում նաև Միացյալ Նահանգների դիվանագիտական մեքենայի ջանքերով: Սա հասել էր այն աստիճանի, որ Թուրքիային վերագրվում էր Միացյալ Նահանգների «տրոյական ձիու» դերը, որը մուտք գործելով ԵՄ՝ կբանդի այն ներսից կամ կստանձնի վերահսկողությունը՝ հավասարակշռելով Ֆրանսիային ու Գերմանիային:

Թուրքիայի երիտասարդության վիճակը

Թուրք-եվրոպական հարաբերությունները քննարկելիս ու Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության մասին խոսելիս շատ վերլուծաբանների նշում են, թե ծերացող Եվրոպային պետք են Թուրքիայի երիտասարդ կադրերը, որոնք կփրկեն եվրոպական աշխատաշուկան: Սակայն Թուրքիայի աշխատաշուկայի ավելի ուշադիր ուսումնասիրության դեպքում տեսնում ենք, որ թուրք երիտասարդները բավականին ինդրահարույց կարող են դառնալ ԵՄ-ի համար ապագայում:

Համաձայն Թուրքիայի վիճակագրական ծառայության 2009թ. տնային տնտեսությունների աշխատուժի ուսում-

նասիրության՝ Թուրքիայի գալիք սերունդը խնդիրներ կունենա նույնիսկ իր սեփական երկրի տնտեսությունում դեր կատարելու հարցում: Մեր հարևան երկրում ավագ դպրոց են հաճախում թուրք աղջիկների ընդամենը 50,4 տոկոսը, իսկ տղաների՝ 57,1 տոկոսը:

Այն, որ 15–19 տարեկանների ընդամենը միջին 53,8 տոկոսն է ներգրավված կրթական համակարգում Թուրքիային տեղավորում է միջինը 81,5 տոկոս ունեցող զարգացած երկրների հետնամասում: Ի դեպ Եվրոպական Միությունում այդ թիվը 84,4 տոկոս է:

Այսինքն, Թուրքիայի ապագա աշխատուժը չի համընկնում նույնիսկ իր սեփական երկրի տնտեսական աճի տեմպերոին ու շուտով Թուրքիան ինքն է որակյալ աշխատուժի կարիք զգալու: Եթե Թուրքիան չունենա որակյալ աշխատուժ, ապա բարձրորակ արդյունաբերություն չի կարողանա ունենալ: Թուրքիան դեռ տառապում է անգրաճանաչության բարձր մակարդակով, իսկ նրա արևելյան շրջաններում բարձր է նաև մանուկների մահացության ցուցանիշը:

Արդյունքում, երիտասարդ կանանց մեծ մասը չի աշխատում, իսկ տղամարդկանց մեծ մասը հավատացած է, որ աշխատանքային շուկան փակ է իրենց առջև, քանի որ նրանք չեն տիրապետում համապատասխան ունակությունների: Թուրք աշխատավորների 66 տոկոսը վճար-

վում է նվազագույն աշխատավարձի սանդղակից ավելի ցածր¹⁸²:

Պատահական չէ, որ Թուրքիայի երիտասարդների շրջանում շատ բարձր է քրեական հանցագործությունների տոկոսը:

Մերձավոր Արևելք

Թուրքիան այսօր ունի մեծ հեղինակություն Մերձավոր Արևելքում: Թուրքիան իրեն ներկայացնում է որպես միջնորդող ուժ տարածաշրջանում և զարգացնում հարաբերությունները բոլոր դերակատարների հետ: Մինչ այսօր Անկարան որպես միջնորդ է հանդես եկել Իսրայել–Սիրիա, Ֆարժ–Համաս (պաղեստինյան երկու՝ իրար ընդդիմադիր ուժեր), Սիրիա–Սաուդյան Արաբիա երկխոսություններում: Այստեղ կարելի է նաև հիշատակել Իրանի միջուկային ծրագրի շուրջ խնդրի կարգավորման մեջ Թուրքիայի միջնորդական առաքելությունը: Թուրքիայի ու Սիրիայի և Թուրքիայի ու Իրաքի միջև 2009թ. Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհուրդների մասին պայամանավորվածությունները աննախադեպ են:

Անկարայի նման հեղինակությունը մեծապես օգտակար է նաև ԱՄՆ–ին: Օրինակ, երբ խոսքը գնում է Լիբանանում կայունությունն ապահովելուց, ապա ԱՄՆ–ի համար Անկարան ավելի

¹⁸² Joe Parkinson, In Turkey: The Kids Aren't Alright..., http://blogs.wsj.com/new-europe/2010/10/21/in-turkey-the-kids-arent-alright/?mod=google_news_blog, 21 հոկտեմբերի 2010

գրավիչ ու պատասխանատու գործընկեր է, քան Դամասկոսը կամ Թեհրանը:

Դրանից բացի, որպես տարածաշրջանի ամենամեծ ու դինամիկ տնտեսություն ունեցող երկրներից մեկը Թուրքիան առաջ է մղում Մերձավորարևելյան Տնտեսական Միության ստեղծման գաղափարը՝ ԵՄ մոդելի հիման վրա, ուր Թուրքիայից բացի մտնում են Լիբանանը, Հորդանանը, Սիրիան, իսկ ապագայում գուցե և Իրաքը¹⁸³: Այս երկրներն արդեն հաստատել են ապրանքների ազատ շարժի, ազատ առևտրի ու առանց մուտքի արտոնագրի ռեժիմներ Անկարայի հետ: Մերձավոր Արևելքում տնտեսական առավել մեծ փոխկախվածությունը դրական կլինի տարածաշրջանային կայունության համար ու նաև կսահմանափակի Իրանի ազդեցությունը՝ Իրաքից ԱՄՆ-ի դուրս գալուն հաջորդող ժամանակահատվածում¹⁸⁴:

Հայկական հարց

Թուրք-ամերիկյան հարաբերություններում ուրույն տեղ ունի հայկական գործոնը: Այսպես, ամեն տարի ապրիլին Հայոց ցեղասպանության՝ ԱՄՆ Կոնգրես որպես օրինագիծ ներկայցումն ու վերջին պահին հետ կանչումը, Նախագահի կողմից Հայոց ցեղասպանություն եզրի գործածումը կամ դրան փոխարինող մակդիրի բարձրաձայնումը մեծ ուշադրության են արժանանանում թե՛ Հայաստանում, թե՛ հատկապես Թուրքիայում:

¹⁸³ Այս մոդելի մասին ավելի մանրամասն տես՝ Turkey, Arab neighbors gear up for Mideast free trade zone, «Today's Zaman», September 27, 2010. <http://www.todayszaman.com/tz-web/news-222767-turkey-arab-neighbors-gear-up-for-mideast-free-trade-zone.html>;

¹⁸⁴ Joshua W. Walker, The United States and Turkey: Can They Agree to Disagree?, Middle East Brief, Crown Center for Middle East Studies, November 2010, No. 46, p. 6;

ԱՄՆ-ի հայկական համայնքը վճռական է տրամադրված Կոնգրեսի կողմից Ցեղասպանության վերաբերյալ բանաձևի ընդունման հարցում: Բնականաբար, վերը նշված հարցերում Թուրքիայի կարևոր դերակատարությունը մինչև այժմ ամեն անգամ խանգարել է հայկական լոբբիի մեծ հաղթանակին, սակայն հայ համայնքն առանց հուսահատվելու ամեն ընտրություններից առաջ փորձում է լիակատար կերպով օգտագործել իր ուժը:

Ըստ էության, թուրք վերլուծաբանների մի մասը հավատացած է, որ նույն Անկարայի համար ավելի խելամիտ կլիներ մեկ անգամ տանել «Կոնգրեսի հարվածը» ու թույլ տալ, որ ԱՄՆ-ն ճանաչի Հայոց ցեղասպանությունը, քան թե տարիներով ծախսել մեծ գումարներ ու ջանքեր լոբբիստական ընկերությունների, քարոզարշավի ու այցերի վրա: 1990թ., երբ Սենատն ուր որ է ընդունելու էր Հայկական բանաձևը, Թուրքիայի նախագահ Օզալը մերձավորների շրջապատում հայտարարել էր, թե «թող ընդունեն այդ բանաձևն ու դադարենք դրա մասին մտածելուց»¹⁸⁵:

Ի՞նչ կանի Անկարան, եթե ԱՄՆ-ն ճանաչի Հայոց ցեղասպանությունը, բարդ է ասել: Ամենայն հավանականությամբ դա շատ չի տարբերվի 2006թ. Ֆրանսիայի նմանատիպ բանաձև ընդունելուց հետո Թուրքիայի արձագանքից. առևտրային հարաբերությունների ժամանակավոր դադարեցում, ընկերությունների գործունեության ժամանակավոր կասեցում, դեսպանի ժամանակավոր հետկանչ, ապրանքների ժամանակավոր բոյկոտ: Թեև ԱՄՆ-ն Թուրքիայի հետ կապված է շատ ավելի բազում թելերով ու Անկարայի հնարավոր քայլերը կարող են նաև ներառել ամերիկյան

¹⁸⁵ Morton Abramowitz, The Turkish Portfolio, The American Interest, January–February 2009, Volume 4, Number 3.

ռազմակայանի գործունեության ժամանակավոր կասեցում, ժամանակավոր հետքայլ Իրաքից ու Աֆղանստանից, ինչպես նաև ավելի սերտացում Ռուսաստանի, մերձավորարևելյան երկրների ու նույնիսկ Իրանի հետ, սակայն պետք է ընդգծել այս ամենի ժամանակավոր բնույթը: Թուրքիան նույնպես մեծ, ավելի մեծ կախում ունի Միացյալ Նահանգներից և չի կարող երկար ժամանակով իրեն թույլ տալ առանց Վաշինգտոնի գործելու ճոխությունը: Թեև ամեն դեպքում տեղին է նշել, որ այս ժամանակահատվածում, հաշվի առնելով թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքական բարդ իրադրությունն ու երկու պատերազմներում ներգրավված լինելու փաստը, Միացյալ Նահանգների համար շատ բարդ կլինի գնալ ռիսկի ու նույնիսկ ժամանակավոր կերպով հրաժարվել Թուրքիայի մատուցած էական ծառայություններից:

ՄԿՋԲՈՒՆՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ.
ՌԻԹՄԻԿ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հինգերորդ սկզբունքը ռիթմիկ դիվանագիտությունն է: Այս սկզբունքը ստիպում է Թուրքիային վարել նախաձեռնող քաղաքականություն: Եթե հայացք նետենք 2003թ. ի վեր Թուրքիայի հյուրընկալված միջազգային հանդիպումներին ու կազմակերպություններին, ապա կտեսնենք, որ դիվանագիտության ոլորտում նա լուրջ ու հիմնավոր գործ է կատարել: ՆԱՏՕ-ի ու Իսլամական Կոնֆերանսի կազմակերպության գագաթաժողովները երկու օրինակներ են, որոնք ցույց են տալիս, թե Թուրքիան որքան ավելի մեծ ազդեցություն ստացավ միջազգային կազմակերպություններում: Տարածաշրջանի համար այսօր կարևոր ու հեռանկարային գրեթե բոլոր զարգացումներում Թուրքիան ներկա է:

Թուրքիայի նպատակն է մշտապես ներգրավվել գլոբալ խնդիրներում՝ օգտագործելով միջազգային հարթակները, որը կնշանավորի Թուրքիայի անցումը կենտրոնական երկրից դեպի գլոբալ ուժ:

Ա. Դավութզյու

Օրինակ, որպես արդյունք 2005թ. Թուրքիայի լուրջ առաջխաղացմանը Աֆրիկայում, 2007թ. ի վեր Անկարան Աֆրիկյան Միությունում դիտորդի կարգավիճակ ունի: Անկարան զարգացած քաղաքական ու հատկապես տնտեսական հարաբերություններ է ստեղծել աֆրիկյան մի շարք երկրների հետ:

Թուրքիան հրավիրվել է Արաբական լիգա երկու անգամ՝ երկու անգամ էլ արտաքին գործերի նախարարի ու վարչապետի մակարդակով: Թուրքիան ստորագրել է հատուկ պայմանագիր արաբական երկրների հետ 2007թ. նոյեմբերի 2-ին Ստամբուլում տեղի ունեցած՝ Իրաքի հարևան երկրների գազաթափողովի ընթացքում: Համաձայն այդ պայմանագրի ստեղծվել է Թուրք-արաբական ֆորում, որը զբաղվելու է Իրաքի կայուն զարգացման հարցերով:

Թուրքիան ակտիվ դերակատարում է ունեցել իսրայելա-սիրիական բանակցություններում, զրուցակից է նաև պաղեստինցիների հետ: Եվ այսօր, երբ խոսքը գնում է Մերձավոր Արևելքում խաղաղության բանակցությունների մասին, ապա ԱՄՆ-ի հետ զուգահեռ Թուրքիան նույնպես առաջին հիշատակվող երկրներից է:

Թուրքիան նաև իր դերակատարումն ունի Իրանի միջուկային ծրագրի խնդրում: 2007թ. Խ.Սոլանսան ու Ա.Լարիջանին հանդիպեցին Թուրքիայում քննարկելու իրանական միջուկային ծրագրի հարցը, իսկ 2009-2011թթ. Թուրքիան նույնիսկ միջնորդական պարտավորություններ է ստանձնել Իրանի ու միջազգային հանրության բանակցություններում:

2008թ. ռուս-վրացական պատերազմից անմիջապես հետո Թուրքիան առաջ եկավ Կովկասյան կայունության պլատֆորմ հիմնադրելու գաղափարով, որին իր աջակցությունը հայտնեցին նաև Հայաստանն ու Ադրբեջանը:

Թուրքիան ակտիվորեն փորձում է միջամտել նաև հարավ-կովկասյան չլուծված հակամարտություններին, մասնավորապես, քանիցս հայտարարել է ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահության կազմում ընդգրկվելու իր ցանկության վերաբերյալ:

2011թ. սկզբին Լիբանանում քաղաքական ճգնաժամը հնարավորություն ընձեռեց Թուրքիայի ղեկավարությանը փորձելու ստանձնել իրադրությունը կարգավորելու միջնորդական առաքելությունը: 2011թ. հունվարի 13-ի ճգնաժամի արդյունքում վարչապետ Սաադ Հարիրիի կառավարությունը ցրվեց այն բանից հետո, երբ կառավարության՝ շիական շեզբալլահ կուսակցության շահերը ներկայացնող 11 անդամ հայտարարեցին իրենց հրաժարականի մասին: Հրաժարականի պատճառն էր Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի՝ 2005թ. սպանությունը հետաքննող ՄԱԿ-ի հատուկ տրիբունալի եզրակացությունների հետ անհամաձայնությունն էր:

Թուրքիայի արտաքին գործերի նախարարության՝ հունվարի 13-ին տարածած հայտարարությունում նշվում է, որ անհրաժեշտ է պահպանել քաղաքական կայունությունը Լիբանանում, որը հանգուցային կարևորություն ունի տարածաշրջանային անվտանգության համար: Թուրքիայի ղեկավարությունը ցանկություն արտահայտեց միանալու տարածաշրջանային ու միջազգային ջանքերին՝ ուղղված Լիբանանի քաղաքական ուժերի միջև համաձայնության հասնելուն:

Թուրքիայի ակտիվությունը նպաստում է նրա միջազգային վարկանիշի աճին՝ անկախ առանձին վերցված նախաձեռնությունների արդյունավետությունից:

Նույն երեկո Ս.Հարիրին ժամանեց Անկարա որպեսզի հանդիպի Թուրքիայի վարչապետ Էրդոհանի ու արտաքին գործերի նախարար Դավութօղլուի հետ: Հարիրին եկել էր խնդրանքով՝ մասնակցել Հեզբալլահի ղեկավարների ու իր հետ բանակցություններում: Ի պատասխան դրան՝ Էրդոհանն առաջարկեց ստեղծել ճգնաժամային հանձնաժողով՝ Լիբանանի, Թուրքիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Հորդանանի, Սիրիայի ու Սաուդյան Արաբիայի ներկայացուցիչների մասնակցությամբ: Միջազգային խորհրդակցություն հրավիրելու գաղափարն ստացավ իր հետագա զարգացումը, երբ հունվարի 17-ին Էրդոհանն իր աջակցությունը հայտնեց Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին, որն առաջարկել էր Լիբանանում քաղաքացիական պատերազմը կանխելու նպատակով ստեղծել հանձնաժողով Լիբանանի, Ֆրանսիայի, Թուրքիայի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի, Քաթարի ու Եգիպտոսի մասնակցությամբ:

Թուրքիայի իշխանությունների հստակ քայլերն այս ուղղությամբ եղան Քաթարի հետ համատեղ միջնորդական առաքելություն ստանձնելու փորձերը: 2011թ. հունվարի 17-ին վարչապետ Էրդոհանը Դամասկոսում հանդիպեց Սիրիայի նախագահ Բ.Ա-

սադի հետ՝ քննարկելու Լիբանանում ստեղծված իրադրությունը, իսկ հունվարի 18-ին Բեյրութում էր Ահմեդ Դավութօղլուն, ով բանակցություններ վարեց Լիբանանի նախագահ Մ.Սուլեյմանի, նախկին վարչապետ Ս.Հարիրիի, խորհրդարանի խոսնակ Ն.Բերրիի և Հեզբալլահի ղեկավար շեյխ Նասրուլլայի հետ:

Թեև բանակցությունները չօգնեցին փոխզիջման հասնելուն, սակայն այստեղ պետք է հիշել, որ հասած արդյունքն Անկարայի համար էական չէ: Թեկուզև իսրայելա-սիրիական բանակցությունները տապալվեցին, իսկ Իրանի միջուկային ծրագրի խնդիրը դեռ փակուղում է, Անկարայի համար էականը գործընթացն է: Նա կայուն կերպով տեղավորվել է մարդկանց մտքում որպես գլոբալ դերակատար: Այսպես, ռուս վերլուծաբան Ի.Սվիստունովան իր հոդվածներից մեկում եզրահանգում է. «...[Այս ուղղությամբ (ի նկատի ունի միջնորդությունը – Ա.Շ.) Թուրքիայի ակտիվությունը նպաստում է նրա միջազգային վարկանիշի աճին՝ անկախ առանձին վերցված նախաձեռնությունների արդյունավետությունից»¹⁸⁶:

Դավութօղլուն հենց այդպես էլ ուրվագծում է իր նպատակը. «Թուրքիայի նպատակն է մշտապես ներգրավվել գլոբալ խնդիրներում՝ օգտագործելով միջազգային հարթակները, որը կնշանավորի Թուրքիայի անցումը կենտրոնական երկրից դեպի գլոբալ ուժ»¹⁸⁷:

¹⁸⁶ И.А. Свистунова, Об участии Турции в урегулировании кризиса в Ливане, Институт Ближнего Востока, imes.ru/rus/stat/2011/23-01-11.htm;

¹⁸⁷ Ահմեդ Դավութօղլու, հարցազրույց CNN Turk հեռուստաընկերությանը, 2 հունվարի 2008թ.:

Ի վերջո կան նաև արդյունքներ. Թուրքիան 2009–2010թթ. դարձավ ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի անդամ, որն էական արդյունք է: Թուրքիայի ներկայացուցիչ Իսսան Էքմելեդինը դարձավ Իսլամական Կոնֆերանս կազմակերպության գլխավոր քարտուղարը: 2010թ. Թուրքիայի ներկայացուցիչ Մեյլութ Չավուշօղլուն դարձավ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ, իսկ թուրք դիվանագետ Հուսեյին Դիրիոզը՝ ՆԱՏՕ–ի գլխավոր քարտուղարի տեղակալ: Հնդկաստանում Թուրքիայի դեսպան Լևենթ Բիլմանը ՄԱԿ–ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունի կողմից նշանակվել է այդ կազմակերպության քաղաքական պլանավորման ու միջնորդական գործունեության բաժնի ղեկավար, որը բավականին կարևոր պաշտոն է այդ կառույցում: Իսկ 2010–2011թթ. Անկարան լուրջ ջանքեր էր գործադրում թուրք դիվանագետ Էրսին Էրչինի՝ ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում ընտրվելու ուղղությամբ:

Ընդ որում, պետք է նշել, որ սույն գործունեությունը միայն պետական աստիճանների ջանքերը չեն: Սրան գումարվում են քաղաքացիական հասարակությունը, բիզնես կազմակերպությունները ու բազմաքանակ այլ կազմակերպություններ, որոնց բոլորին այս կամ այն կերպ միավորում է նույն տեսլականը:

Եթե ուսումնասիրենք Թուրքիայի բիզնես միավորումների գործունեությունը: ԹՈՒՍՔՈՆ – TUSKON՝ Թուրքիայի արդյունաբերողների ու գործարարների համադաշնությունը, կազմակերպում է աֆրիկյան գազաթաժողովներն ու բերում աֆրիկյան երկրների նախարարների Թուրքիա կամ տանում թուրք գործարարներին աֆրիկյան երկրներ՝ ներդրումների: ԹՈՒՄԻԱԴ–ը – TUSIAD՝ Թուրքիայի արդյունաբերողների ու գործարարների մի-

ությունը, համակարգում է Թուրքիայի կապերը Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ–ի ու ԵՄ–ի հետ: ՄՈՒՄԻԱԴ–ը – MUSIAD՝ Անկախ արդյունաբերողների ու գործարարների միությունը, ակտիվորեն ընդգրկված է Օոցի երկրների հետ բիզնես գործունեության մեջ:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ.

ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԿԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Թուրքիայի արտաքին նոր քաղաքականության մոտեցումների ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների վրա

Մույն նյութը չի ենթադրում հայ-թուրքական հարաբերությունների համապարփակ վերլուծում, այլ միայն ներկայացնում է այդ հարաբերությունների վերլուծությունը այս գրքում շարադրված հինգ սկզբունքների հիման վրա:

Առաջին սկզբունքը՝ բալանս ժողովրդավարության ու անվտանգության միջև, աշխատում է թե դրական, թե բացասական ուղղությամբ: Այսինքն, Թուրքիան պատրաստ է գնալ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման, քանի դեռ դա բացասաբար չի ազդի նրա ներքին կայունությանը: Այստեղ խոսքը հիմնականում գնում է առաջին հերթին գրքում քննարկված Սևրի դաշնագրի հանդեպ ենթագիտակցական վախի, ինչպես նաև

ներքաղաքական պայքարում Հայկական հարցի շահարկումների մասին: Մրանով է հենց բացատրվում Անկարայի «մեկ քայլ առաջ, երկու քայլ հետ» քաղաքականությունը:

Երկրորդ սկզբունքը՝ զրո խնդիր հարևանների հետ, գործում է նաև այստեղ, որքան էլ որոշ վերլուծաբաններ պնդեն, թե արձանագրությունների ձախողումը ի չիք դարձրեց Դավութօղլուի վերոհիշյալ մոտեցման իրատեսությունը: Արձանագրությունների հաջող ու անհաջող լինելու հարցում հայկական ու թուրքական մոտեցումների տարբերությունը բխում է ընդհանրապես հարցին անդրադառնալու տարբեր դիրքերից: Հայկական կողմի համար արձանագրությունների հաջողությունը չափվում էր արդյունքով՝ բաց սահմաններ ու դիվանագիտական հարաբերություններ, մինչդեռ թուրքական կողմի համար կարևորը գործընթացի սկիզբն էր արդեն: Չի կարելի վստահորեն պնդել, թե Թուրքիան ի սկզբանե չէր էլ հետապնդում արդյունքի հասնելու նպատակ (թեև շատ փաստեր են խոսում դրա օգտին), սակայն ամեն դեպքում պետք է նշել, որ Անկարան ստացավ այն, ինչի կարիքն ուներ արդեն Ցյուրիխում: Քանզի մինչև «ֆուտբոլային դիվանագիտությունը» Հայաստանի հետ հարաբերությունների բացակայությունը ու խնդիրների առկայությունը, իրոք բացառություն էր «զրո խնդիր» սկզբունքից: Սակայն այժմ, նույնիսկ, եթե էականորեն բան չի փոխվել, Հայաստանի հետ «ընթանում են քննարկումներ, բացահայտ ու գաղտնի բանակցություններ, կա գործընթաց լուր «դիվանագիտություն», ինչը և պետք է Թուրքիային թե՛ միջազգային ասպարեզում խուսանավելու, թե՛ հայկական դուռը կիսաբաց պահելու համար:

Անկարան գիտակցեց, որ առանց Հայաստանի վրա համապատասխան ազդեցության նա չի կարող համարվել առաջնորդ տարածաշրջանում:

Երրորդ սկզբունքի՝ տարածաշրջանային կամ նեո-օսմանյան մոտեցման համաձայն՝ Հարավային Կովկասը մտնում է Թուրքիայի համար հանգուցային տարածաշրջանների շարքը, որտեղ Անկարան ձգտում է հասնել առաջնորդության: Մինչև վերջերս Թուրքիան բավարարվում էր, ՀՀ-ն շրջանցելով, առավել սերտացնել կապերը Վրաստանի ու Ադրբեջանի հետ՝ մասնավորապես տնտեսական և ռազմավարական կարևորություն ունեցող ուղիների միջոցով, և սրանով լուծում էր իր հանապազօրյա կարևորության մարտավարական խնդիրները: Սակայն վերջին ժամանակահատվածում Անկարան գիտակցել է, որ այդ մոտեցումը պարզապես տարածաշրջանում մի համեմատաբար ուժեղ պետության վարվելակերպ է, այլ ոչ թե տարածաշրջանային առաջնորդին վայել պահվածք: Եթե Թուրքիան ձգտում է դառնալ առաջնորդ տարածաշրջանում, ապա պետք է ոչ միայն լինի խաղի մասնակից, այլ ձգտի դառնալ խաղի «դատավոր»: Ընդ որում, Անկարան պետք է ազդեցություն ունենա ոչ միայն երկկողմանի հարաբերությունների հարցերում, այլ նաև Հարավային Կովկասի ներքին խնդիրներում, մասնավորապես հակամարտությունների կարգավորման հարցերում:

Այսպիսով, տնտեսական ու մասամբ նաև քաղաքական ու մշակութային ազդեցությունն ունենալով Վրաստանի, Աբխազիայի ու Ադրբեջանի վրա՝ Անկարան գիտակցեց, որ առանց Հայաստանի վրա համապատասխան ազդեցության նա չի կարող համարվել առաջնորդ տարածաշրջանում:

Ավանդական տարբերակը Երևանի վրա ճնշումների գործադրման եղանակով ազդեցության հասնելն էր: Թուրքիան փորձեց ու մինչև հիմա էլ փորձում է առանց Հայաստանի Հանրապետության համաձայնության ներգրավվել Ղարաբաղյան հակամարտության լուծման գործընթացում: Նախ Անկարան փորձեց մուտք գործել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների շարքը: Վերջիններից հստակ մերժում ստանալով՝ Անկարան սկսեց քարկոծել Մինսկի խումբը՝ նրան մեղադրելով հարցը լուծելու անակարողության մեջ: Դրան գուգահեռ, Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում ուժեղ դիրքեր ունենալով Անկարան վերակենդանացրեց Ղարաբաղի հարցով գործող հանձնաժողովը, որի միջոցով առաջիկայում էլ փորձելու է իր դերակատարումն ուժեղացնել սույն խնդրի լուծման գործընթացում: Այս ամենին էլ, պետք է հավելել այն փաստը, որ Ղարաբաղյան հարցը որպես նախապայման մտցվեց Անկարայի կողմից արձանագրությունների վավերացման գործընթացում: Մա ևս մի առիթ տվեց թուրք իշխանավորներին հիշատակել առկա խնդիրն ամեն անգամ, երբ խոսք է գնում հայ-թուրքական հարաբերությունների մասին: Կրկին հիշեցնենք, որ թուրք դիվանագետները չեն մտնում այս գործընթացի մեջ հարցը լուծելու ցանկությամբ: Նրանց չի հետաքրքրում արդյունքը, այլ կարևոր է ինքնին գործընթացը,

որի վայրիվերումներում նրանք կկարողանան միավորներ վաստակել ու ազդեցության լծակներ ձեռք բերել:

Թուրքերին այդքան էլ չի հետաքրքրում արդյունքը. կարևոր է ինքնին գործընթացը, որի վայրիվերումներում նրանք կկարողանան միավորներ վաստակել ու ազդեցության լծակներ ձեռք բերել:

Մյուսը՝ ավելի նորաճ ու Դավութօղլուի ոգով տարբերակն է. Անկարան հասկացել է, որ Հայաստանի հետ հարաբերությունների բացակայության պարագայում, չեն կարող ունենալ նաև ազդեցություն: Համաձայն նույն երրորդ սկզբունքի՝ քաղաքական ազդեցությունը գալիս է հիմնականում տնտեսական ազդեցությունից: Երրորդ երկրի տարածքով տնտեսական ազդեցությունը շատ սահմանափակ է ու կառավարելի, ուստի Անկարայի համար Հայաստանի վրա ազդեցություն ունենալու լավագույն տարբերակը կարող լինել սահմանի բացումը: Ընդ որում, Անկարային այդքան էլ չի հետաքրքրում սահմանի բացումը մարդկային հոսքի տեսանկյունից, այլ հիմնականում բեռների ու կապիտալի: Հենց այս հեռանկարն էլ բերեց Թուրքիային բանակցային սեղանի շուրջ, թեև օգտագործելով այն փաստը, որ սահմանը միշտ էլ կարելի է միակողմանի բացել՝ Անկարան ձգտեց գործընթացից ստանալ առավելագույն արդյունքը՝ խաղը թողնելով իր վերահսկողության ներքո:

Հայ-թուրքական հարաբերություններին յուրօրինակ ռիթմ է հաղորդում ապրիլի 24-ը: Մույն ռիթմը խաթարելու համար Անկարան մի շարք քայլեր է ձեռնարկում՝ կազմակերպելով ոչ պակաս հնչեղություն ստացող միջոցառումներ՝ եկեղեցիների բացում, գիտաժողովների անցկացում, բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններ:

Չորրորդ սկզբունքը բազմավեկտոր արտաքին քաղաքականությունն է: Հայաստանը գտնվում է կենտրոնասիական ու էներգետիկ վեկտորների ուղեծրում: Թեև Երևանն այսօր շրջափակված է, ու այս վեկտորները շրջանցում են Հայաստանի Հանրապետության տարածքը, սակայն ամեն դեպքում կա փոխազդեցության գործոնը: Թուրքիան միշտ էլ զգուշացել է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի՝ ՀՀ Զինված ուժերի ազդեցության շառավղի մեջ մտնելու փաստից, իսկ կենտրոնասիական վեկտորի համար կարևոր Կարս-Գյումրի երկաթգծին դեռևս չկա լիարժեք այլընտրանք: Թուրքիան փորձում է իր դիրքերն ամրապնդել կառուցելով Կարս-Թբիլիսի երկաթգիծը, ինչը էականորեն կնվազեցնի Հայաստանի կարևորությունն այս համատեքստում:

Հինգերորդ սկզբունքը ռիթմիկ դիվանագիտությունն է: Հայ-թուրքական հարաբերություններին յուրօրինակ ռիթմ է հաղորդում ապրիլի 24-ը: Մի կողմից միջազգային մամուլը հեղեղվում է

Հայոց ցեղասպանության ողբշնչմանը կամ հերքմանն ուղղված հողվածներով ու կարծիքներով, մյուս կողմից էլ՝ ԱՄՆ-ի Նախագահի ելույթն ու օտարերկրյա խոհրդարանների հայտարարություններն ավելի են ակտիվացնում ապրիլ ամիսը: Մակայն այս ընթացքը ավելի շատ աշխատում է Թուրքիայի դեմ, ուստի սույն ռիթմը խաթարելու համար Անկարան մի շարք քայլեր է ձեռնարկում՝ կազմակերպելով ոչ պակաս հնչեղություն ստացող միջոցառումներ՝ եկեղեցիների բացում, գիտաժողովների անցկացում, բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններ: Ի վերջո, Թուրքիայի՝ Հայաստանի հետ հարաբերությունները դարաբաղյան հարցի հետ շաղկապելու փորձերը կապված են նաև հայ-թուրքական հարաբերությունների ռիթմում փոփոխություններ մտցնելու ցանկությամբ:

Հայ-թուրքական ցյուրիխյան արձանագրությունները. առաջընթաց և բացթողումներ

Հիրավի, հայ-թուրքական հարաբերությունների նորօրյա պատմությունում ցյուրիխյան արձանագրությունները համարվում են ամենամեծ առաջընթացը: Վերջապես, գաղտնի բանակցություններից, հասարակական քննարկումներից ու հանրային դիվանագիտության ջանքերից հետո քաղաքական գործիչները բացահայտ կերպով հայտարարեցին հարաբերությունների կարգավորման հարցում իրենց պատրաստակամության մասին: Եթե դրանում արձանագրած դրույթներն ի կատար ածվեին, ապա

տարածաշրջանի իրերի ներկա դրությունը էականորեն կփոխվեր:

Մակայն փորձենք քննարկել արձանագրությունները: Յուրաքանչյուր բանակցային տեսքտ ի սկզբանե մեռած է, եթե այն ընդունվում է ճնշումների միջոցով: Վաղ թե ուշ դիմացի կողմն առաջին իսկ հարմար պահին փորձելու է խուսանավել, չեղյալ հայտարարել կամ հետքայլ կատարել: Ուստի, միշտ էլ խորհուրդ է տրվում հասնել փոխհամաձայնության, իսկ միջազգային հարաբերությունների տեսությունում վերջին տարիներին ամրապնդվել է «երկկողմանի հաղթանակ» սկզբունքը, երբ համաձայնության են հասնում ոչ թե փոխզիջումների հաշվին, այլ գտնելով տարբերություններ շահերում, մոտեցումներում, սպասելիքներում: Արյո՞ք, հայ-թուրքական արձանագրությունները փորձ են հասնելու նմանօրինակ մի արդյունքի, թե պարզապես հիմնված են զիջումների ու ճնշումների վրա, ինչի արդյունքում էլ կյանքի չկոչվեցին:

Յուրաքանչյուր բանակցային տեսքտ ի սկզբանե մեռած է, եթե այն ընդունվում է ճնշումների միջոցով:

Քննարկենք առաջնայնությունները հայկական ու թուրքական կողմերի համար.

Ա. Հայկական կողմ

1. Բացել սահմանները: Ընդ որում առաջնայնությունը բեռների տեղափոխումն է՝ Թուրքիայի տարածքի օգտագործումը որպես տարանցիկ ուղի: Մարդկանց հոսքն ու հայ-թուրքական ապրանքաշրջանառությունը երկրորդական են:

2. Հաստատել դիվանագիտական հարաբերություններ: Սրանով, ինչպես նաև սահմանների բացումով Հայաստանը կամրապնդեր իր դիրքերը նաև Ղարաբաղյան հակամարտությունում, քանի որ ի չիք կդառնար Ադրբեջանի շրջափակման ռազմավարությունը:

3. Թույլ չտալ, որ Թուրքիան ազդեցություն ունենա Ղարաբաղյան հակամարտությունում:

4. Թույլ չտալ, որպեսզի Հայոց ցեղասպանության հարցը ենթարկվի քննարկման:

5. Ներքին քաղաքականությունում բացասական մթնոլորտը ցրելու համար գոնե կարճաժամկետ դրական արդյունքների հասնել արտաքին քաղաքականության ոլորտում:

Բ. Թուրքական կողմ

1. Խոչընդոտել ԱՄՆ Նախագահ Բ.Օբամայի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ «ցեղասպանություն» եզրի կիրառումն ապրիլյան չորսյան իր առաջին ելույթում:

2. Ապահովել, որ Հայաստանը ճանաչի հայ-թուրքական ներկայիս սահմանը (շատերը սա փոխարինում են «Կարսի պայամանգրի ճանաչում» արտահայտությամբ, սակայն դա թուրքերի պլան մաքսիմումն է, իսկ հենքային ցանկությունը տարածքային

ամբողջականությունն է՝ այդ պայմանագրով գծված սահմանի ճանաչումը):

3. Ապահովել, որ Երևանը չառաջադրի Հայոց ցեղասպանության ճանաչումը որպես նախապայման:

4. Խոչընդոտել Հայոց ցեղասպանության բանաձևերի ընդունման գործընթացին ամբողջ աշխարհում: Որպես սրա շարունակություն՝ ապահովել, որ ՀՀ-ն ընդունի Հայոց ցեղասպանությունը քննարկող պատմաբանների խորհրդի ստեղծման առաջարկը:

5. Բարձրացնել իր ազդեցությունը տարածաշրջանային կարևորության հարցերում, մասնավորապես Ղարաբաղյան հիմնահարցում:

Համաձայն բանակցությունների տեսության՝ սա «երկկողմանի հաղթանակի» հասնելու համար բարենպաստ իրավիճակ է, երբ երկու կողմերը կենտրոնացած չեն ընդամենը մեկ առաջնային խնդրի լուծման վրա, այլ ունեն մի քանի խնդիրներ, որոնք տարբերվում են մեկը մյուսից իր առաջնայնությամբ: Ընդ որում, էական է խնդիրներին մոտենալ ոչ թե ըստ հերթականության, քանի որ կարող է մեկի վրա արգելակում տեղի ունենալ ու առաջընթաց չգրանցվել, այլ «փաթեթային» տարբերակով՝ բոլորը միանգամից: Այդ դեպքում կողմերը հանգիստ կարող են իրենց համար պակաս կարևոր, սակայն մյուսի համար առավել առաջնային խնդրում զիջման գնալ՝ փոխարենը զիջում ստանալով իր համար ավելի էական հարցում: Արդյունքում այս կամ այն չափ հաղթում են երկու կողմերն էլ, քանի որ առաջընթացի են հասնում իրենց համար առաջնային հարցերում:

Այս արձանագրություններն ուսումնասիրելիս և դրանք վեր-
նի «խնդրացուցակի» հետ համեմատելիս տեսնում ենք, որ բավա-
կանին շատ հարցերում նման մոտեցում ցուցաբերված է: Այս-
պես, կողմերն արձանագրություններում ֆիքսել են իրենց վերնի
խնդրացուցակի գրեթե բոլոր կետերը:

Հիշենք. նախքան սույն գործընթացը Թուրքիան հստակորեն
ուներ երեք նախապայման Հայաստանի հետ սահմանները բացե-
լու կապակցությամբ. *Կարսի պայմանագրի ճանաչում, Յեդաս-
պանությունը ճանաչելու գործընթացի դադարեցում և հայկական
ուժերի դուրս բերում Լեռնային Ղարաբաղից:*

Արձանագրություններում Կարսի պայմանագրի ճանաչումը
փոխարինվել է պարզապես հայ-թուրքական սահմանի ճանաչ-
մամբ:

Թուրքիայի համար շատ էական է իր տարածքային ամբող-
ջականության խնդիրը, քանի որ դեռ առկա է Հայոց ցեղասպա-
նության ճանաչման ու դրա հնարավոր հետևանքների հարցը:
Սևրոֆոբիան, որի մասին հատուկ քննարկել ենք առաջին գլ-
խում, ենթագիտակցական և ամենից կարևոր խնդիրներից է
թուրք հասարակության համար: Ի դեպ հենց նույն պատճառով
էլ, Թուրքիան, որը ցանկանում էր հետքայլ կատարել արձանագ-
րություններից ու պատրվակ էր փնտրում, կարողացավ օգտա-
գործել ՀՀ Սահմանադրական դատարանի 2010թ. հունվարի 12-ի
եզրակացությունը, որը վերաբերում էր հենց Անկարայի համար
ամենից էական՝ տարածքային ամբողջականության ճանաչման
հարցին:

Եթե կողմերից մեկը կասկածվում է հետքայլ անելու մտադ-
րության մեջ, ապա նման պայմանագիրը խելամիտ չէ:

Ընդ որում պաշտոնական Երևանը երբեք էլ հատուկ հայտա-
բարություններ կամ պահանջ-վերջնագրեր չի ներկայացրել Ան-
կարային սահմանների կապակցությամբ: Ընդհակառակը, բարձ-
րաստիճան պաշտոնյաների շուրթերից հնչել է Թուրքիայի տա-
րածքային ամբողջականությունը ճանաչելու դրույթը: Երևանի
համար էական է հենց Կարսի պայմանագրի ճանաչումից խու-
սանավելը, քանի որ այն բացի հայ-թուրքական սահմանը կար-
գավորելուց վերաբերում է նաև մի շարք այլ կարևոր հարցերի:
Դրանից բացի, որքան էլ գեղեցիկ ու ազգայնական-հայրենասեր
հնչի Արևմտյան Հայաստանն իր ողջ կազմով հետ պահանջելը,
գործնական բանականությունը հուշում է, որ Հայաստանի Հան-
րապետությունը նույնիսկ սփյուռքի հետ միասին այսօր ի վիճա-
կի չէ ժողովրդագրական ու տնտեսական առումով հավակնու-
թյուն ունենալ այդ տարածքների նկատմամբ: Իսկ ապագայում
նման ներուժ ունենալու դեպքում՝ որևէ մեկը չի էլ հիշի այդ ար-
ձանագրություններն ու հայտարարությունները, ի վերջո պատ-
մությունից ոչ ոք չի հրաժարվում:

Պատմաբանների ենթահանձնաժողովը թույլ է տալիս
Թուրքիային պնդել, թե «հայերն ու թուրքերը քննարկում են

իրենց միջև առկա պատմական անախորժությունները, և օտար պետությունները թող չխանգարեն այս գործընթացին»:

Արձանագրություններում ներառված է նաև Հայոց ցեղասպանության մասին դրույթը: Հիշենք հայկական կողմի Ա.4. (*Թույլ չտալ, որպեսզի Հայոց ցեղասպանության հարցը ենթարկվի քննարկման:*) և թուրքական կողմի Բ.3. ու Բ.4. (*Ապահովել, որ Երևանը չառաջադրի Հայոց ցեղասպանության ճանաչումը որպես նախապայման: Ապահովել, որ ՀՀ-ն ընդունի Հայոց ցեղասպանությունը քննարկող պատմաբանների խորհրդի ստեղծման առաջարկը:*) դրույթները:

Հայ-թուրքական պատմական խնդիրներ քննարկող ենթահանձնաժողովի ստեղծումը ներառում է բոլոր վերոշարադրյալը. ա) Հայոց ցեղասպանություն արտահայտությունը չի արձարժվում արձանագրություններում; բ) հանձնաժողովի անվան մեջ այն նույնպես բացակայում է; գ) պատմաբանների ենթահանձնաժողով այդուամենայնիվ առկա է: Ընդ որում, այս կետը ներառված է 2007թ. Էրդդանի նամակին ի պատասխան Ռ.Քոչարյանի ուղերձում, որտեղ Թուրքիայի վարչապետի՝ Ցեղասպանությունը քննարկող պատմաբանների հանձնաժողով հիմնադրելու առաջարկին ՀՀ Նախագահն արձագանքում է՝ առաջարկելով մեկ հանձնաժողովի փոխարեն ստեղծել միջկառավարական ընդգրկուն հանձնաժողով, որը կքննարկի հայ-թուրքական հարաբե-

րությունների ողջ սպեկտրը: Ըստ էության, արձանագրություններն արտացոլում են այս առաջարկը:

Պատմաբանների ենթահանձնաժողովն էլ բավականին հետաքրքիր մոտեցում է խնդրին, քանի որ թույլ է տալիս Թուրքիային պնդել, թե «հայերն ու թուրքերը քննարկում են իրենց միջև առկա պատմական անախորժությունները, և օտար պետությունները թող չխանգարեն այս գործընթացին»: Հայաստանն իր հերթին կարող է հերքել, որ պատմաբանների ենթահանձնաժողովը Հայոց ցեղասպանության եղելության հարցի քննարկման համար է, քանի որ արձանագրություններում չկա ենթահանձնաժողովի աշխատանքային կանոնակարգ: Իսկ ամենից հետաքրքիր այն է, որ երկու կողմերն էլ քաջ գիտակցում են, որ նույնիսկ արձանագրությունների վավերացման, սահմանների բացման ու դիվանագիտական հարաբերությունների հաստատման դեպքում առաջիկա տարիներին այս ենթահանձնաժողովի ստեղծումը մոտ է անհնարինության, քանի որ Անկարան ու Երևանը չեն համաձայնի ոչ անդամության հարցում, ոչ էլ օրակարգի՝ դրա համար ևս մի քանի տարվա բանակցություն ու հատուկ արձանագրություններ են հարկավոր լինելու:

Ի վերջո, անդրադառնանք Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ նախապայմանին: Հայկական կողմը կարողացավ հասնել նրան, որ արձանագրություններում այս խնդրի մասին չի խոսվում: Ավելին, Ցյուրիխում ստորագրության արարողության ժամանակ Նալբանդյան-Դավութջյուզի ճգնաժամի պատճառն էր հենց վերջինիս՝ պայմանավորվածությունը խախտելու ցանկությունը: Բնականաբար, հայկական կողմը չէր կարող արգելել թուրքերին չբարձրաձայնել խնդիրն այլ ամբիոններից, մասնա-

վորապես Բաքվում: Սակայն միջազգային ողջ հանրությունն ականատես դարձավ, որ Անկարան արձանագրություններն ստորագրելուց հետո առաջ բերեց մինչև այդ Բարձրաձայնած, սակայն տվյալ փաստաթղթերում չարձանագրված մի նախապայման:

Այդուհանդերձ, թուրքերի դիրքորոշման մեջ գրանցվեց փոփոխություն: Եթե մինչև վերջերս նրանց նախապայմանը «հայկական ուժերի դուրսբերումն էր Ադրբեջանի տարածքներից», այս արտահայտության տակ հասկանալով նաև Լեռնային Ղարաբաղը, այսօր Անկարայում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ որևէ մեկնաբանությունից զերծ են մնում, ավելին՝ շեշտում են, որ նախապայմանը չի ներառում ԼՂԻՄ-ի տարածքը, փաստորեն ընդունում են հայկական ուժերի՝ այնտեղ գտնվելու լեգիտիմությունը: Ի վերջո, Թուրքիայի համար առաջնային չէ Ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծումը, կամ Ադրբեջանի տարածքային խնդիրները, Թուրքիան ցանկանում է իր ազդեցությունը տարածել Հարավային Կովկասում, որի համար որպես ազդեցիկ լծակ դիտարկում է իր ներգրավումը հակամարտությունների հանգուցալուծման գործընթացում: Կրկին շեշտենք, որ թուրքական կողմի համար միշտ էլ առավել կարևոր է եղել գործընթացը, այլ ոչ թե արդյունքը:

Կողմերը պետք է մտածեն պայմանագրի իրականացման ուժի մասին:

Այսպիսով, եթե ցյուրիխյան արձանագրություններն ընդունելի լուծում էին տալիս կողմերի գրեթե բոլոր խնդիրներին ու ապահովում էին «երկկողմանի հաղթանակ», ի՞նչու գործընթացը տապալվեց: Արդյո՞ք այստեղ ազդեցիկ էր բացառապես Ադրբեջանի գործոնը, թե՞ արձանագրություններում այդուհանդերձ կար ինչ-որ բացթողում:

Նմանօրինակ պայմանագրերի հարցում բանակցությունների տեսաբանները նախազգուշացնում են մի քանի կետերի կարևորության մասին.

Ա. Եթե ապագան շատ անորոշ է, կամ էլ կողմերից մեկը կասկածվում է հետքայլ անելու մտադրության մեջ, ապա նման պայմանագիրը խելամիտ չէ:

Բ. Կողմերը պետք է մտածեն պայմանագրի իրականացման ուժի (enforceability) մասին, քանի որ նման պայմանագիրը հիմնված է կանխատեսման վրա, և եթե զարգացումները չընթանան կողմերից մեկի համար բարենպաստ ուղիով, ապա նա կարող է և դժկամել պայմանագրի իր մասն իրականացնելու հարցում:

Ամենից կարևոր կետը պայմանագրի իրականացման վերջնաժամկետի կամ ժամանակացույցի առկայությունն է:

Բիզնես իրավիճակում տեսությունը խորհուրդ է տալիս դրամը ի պահ տալ երրորդ կողմին: Հայ-թուրքական արձանագ-

րությունների հարցում երրորդ կողմը միջազգային հանրությունն էր ու Ցյուրիխում ներկա արտաքին գործերի նախարարների պատկառելի խումբը: Բայցնայնպես, արաձանագրությունները շատ էին քննադատվում, հենց այս կետի բացակայության պատճառով:

Գ. Նման պայմանագրերը պետք է լինեն վերին աստիճանի հստակ ու չափելի: Եթե կետը երկիմաստ է և ոչ չափելի, ապա տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք կտա, ինչը հետքայլի լայն հնարավորություններ կընձեռի, եթե իրականացման ուժի (enforceability) կետը նախահաշվարկված չէ:

Դ. Եվ իր վերջո, ամենից կարևոր կետը պայմանագրի իրականացման վերջնաժամկետի կամ ժամանակացույցի առկայությունն է: Հայկական կողմի պնդմամբ կար արձանագրությունների ստորագրման վերջնաժամկետ, ինչը տեղի ունեցավ 2009թ. հոկտեմբերին, կար նաև վավերացումից հետո սահմանները բացելու ժամանակացույցը, սակայն չկար ամենից էականը՝ խորհրդարանների կողմից վավերացվելու վերջնաժամկետը: Հենց այս կետի խախտումն էլ նպաստեց սույն գործընթացի տապալմանը:

Ամփոփելով՝ կրկին շեշտենք, որ գործընթացը տապալվել է հայկական կողմի տեսակետից, որը հետաքրքրված էր արդյունքով: Թուրքական կողմի համար հետաքրքիր էր հենց ինքնին գործընթացի սկիզբը, նրանք այսօր էլ իրենց ձեռքն են պահում այն շարունակելու բանալին, ինչից կօգտվեն առաջիկա անհրաժեշտության դեպքում:

Հատվածներ Ահմեդ Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» գրքից

Ռազմավարական տեսության անբավարար լինելն
ու դրա արդյունքները

Պատմական կողմ

...19-րդ դարը, գաղութատիրական դար էր, երբ մեծ պետությունների դասական ազգային ռազմավարություն էին զարգացնում ու այդ հարյուրամյակի ընթացքում օսմանյան կայսրությունն ուներ միայն մեկ մտահոգություն. կարողանալ պահպանել ներքին անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը: Սա բերեց սահմանների երկայնքով պաշտպանական ռազմավարության հիման վրա խարսխված ստատիկ մոտեցման, որը ժամանակի հետ դարձավ արտաքին քաղաքականության ավանդույթ: Երբ մեծ ուժերի ռազմավարություններն սկսեցին իրենց արդյունքները տալ, այդ սահմանագծերը հետ քաշվեցին, ու [թուրքերը] սկսեցին ջանք թափել նոր ստատիկ դիրքը պահպանելու ուղղությամբ:

Այսպիսով, ամեն կորուսյալ հողակտորի հետ նրանք ջանում էին պահպանել մնացածն ու այլևս չէին հետաքրքրվում, թե ինչ է տեղի ունենում սահմաններից այն կողմ: [Թուրքիայի] հիմնի «հետ վերցնենք հին հողերը թշնամիներից» մոտիվը բացի նուստալգիկ մթնոլորտից ցույց է տալիս նաև ռազմավարական պլանի երկու ծայրահեղ վերջնակետը՝ կամ բացարձակ գերիշխանու-

թյուն, կամ բացարձակ լքում: Գերիշխանությունից դուրս հայտնված հողերն անմիջապես լքվել են, ու սկսվել է նոր սահմանները պաշտպանելու եռուզեռը: Սա էլ արգելակել է զարգացնել այնպիսի միջանկյալ մարտավարական բանաձևեր, ինչպիսիք են բացարձակ գերիշխանության ու բացարձակ լքման միջև եղած հատվածում ազդեցության տարածք ստեղծել, սահմանները պաշտպանել արտասահմանյան դիվանագիտական մանևրներով, սեփական ռազմավարությունը որպես կենտրոն ընդունող դաշինքներ ստեղծել, հանձնվելիք հողերում սեփական ռազմավարությանը մոտ գտնվող քաղաքական վերնախավ թողնել, մեծ ուժերի միջև շահերի բախումներն օգտագործելով՝ մարտավարական խուսանավման դաշտ ստեղծել:...

... Այս երկու ծայրահեղությունների միջև մնալը օսմանաթուրքական արտաքին քաղաքականության ավանդույթի գլոբալ ռազմավարական հորիզոնը նեղացրել է, քչացրել է մարտավարական այլընտրանքները, մերձակա տարածաշրջանների վրա ազդեցությունը վերացել է և ստեղծվել է մի արատավոր շրջան՝ կազմված ներքին բախումներից ու արտաքին սպառնալիքներից:...

... Բացարձակ գերիշխանության ու բացարձակ լքման մտածելակերպի փակուղին Կովկասի դեպքում նույնպես գործում էր: Էրզրումի դաշտի հյուսիսն ու արևելքը ռուս-թուրքական պատերազմում կորցնելուց հետո օսմանաթուրքական արտաքին քաղաքականության ամենահիմնական խնդիրը եղել է արգելակել ռուս-սովետական ծավալապաշտական ռազմավարությանն իջնել Էրզրումի հարավ ու արևմուտք, որը Անատոլիայի աշխարհաքաղաքական բանալին է: Այս դիրքը մշտապես պաշտպանվել է՝ բացառությամբ երկու օրինակի՝ մեկը բացասական, մյուսը՝

դրական: Էնվեր փաշայի արկածախնդրային քայլերի պատճառով դիրքերը առժամանակ նահանջեցին, սակայն Քյազըմ Քարաբեքիրը, Ռուսաստանի ներքին խժոժություններից օգտվելով, վերջին երկու հարյուրամյակի ընթացքում Կովկասում միակ առաջընթացը գրանցեց՝ հետ վերցնելով Կարս-Արդահան գիծն ու երաշխիքներ ստանալով Նախիջևանի հարցում: ...

...Թուրքիայի կողմից կովկասյան քաղաքականության երկար ժամանակ անտեսված լինելը կախված է Էրզրումի հյուսիսում ու արևլքում կրկին ազդեցիկ լինելու վերաբերյալ հավատքի կորստից ու նոր պարտություններ չունենալու հոգեբանական վախից: Հենց այդ պատճառով էլ Սառը պատերազմի ժամանակ ՆԱՏՕ-ի կողմից որոշված պատերազմական ռազմավարության համաձայն՝ պաշտպանվելու էր միայն Էրզրումի հարավն ու արևմուտքը, և հաշվարկներ էին արվել, թե առաջացող ռուսական միավորումներին որքան կարելի կլինի ջլատել մինչ նրանք կհասնեն Քոնիայի դաշտ:

Այսպիսի հոգեբանական պաշտպանական զգացումներով Թուրքիան նույնիսկ չի երազել, որ կարող է ուժեղացնել Կովկասում առկա իր բնական դաշնակիցներին և օգտագործել Ռուսաստանի ներքին բախումները: ...

...Թուրքիայի արտաքին քաղաքականության հեղինակները պետք է ձերբազատվեն այս հոգեբանական վախվորածությունից ու Կովկասում էլ դինամիկ միջանկյալ բանաձևերի վրա հենված քաղաքականություն վարեն: Ռուսները, որոնք ըստ պլանի պետք է հասնեին Քոնիայի դաշտ, դժվարանում են նույնիսկ Չեչնիան պահել: Եվ պետք չէ մտածել, որ իրավիճակն այսպես մշտապես է շարունակվելու: Եթե անտեսենք հարմար պահը որսալով basiretli

հարձակվողական քաղաքականությամբ հաղթանակներ ձեռք բերելը, ապա ապագայում Արևելյան Անատոլիան պաշտպանելու համար ծախսերը շատ ավելի ծանր են լինելու: ... Արևելյան Անատոլիայի ու Էրզրումի պաշտպանությունն սկսվում է Հյուսիսային Կովկասից ու Գրոզնուց:...

Պատմական ժառանգություն ու Թուրքիայի միջազգային դիրքը Նոր օսմանականություն

...Օզալը փորձում էր Սառը պատերազմին հաջորդող ժամանակաշրջանի դինամիկ պայմաններում գործող միջազգային մթնոլորտին համապատասխան քաղաքականություն զարգացնել: Այն դարձավ նոր-օսմանականությունը, որը առաջ եկավ ու զարգացում ապրեց 1987-1993թթ.: Թանզիմաթի ժամանակաշրջանի օսմանականության ու Օզալի մոտեցման միջև առկա ընդհանուր կետերը հետևյալներն են.

1. Պետության վերակազմակերպում՝ միջազգային մթնոլորտին համապատասխանելու նպատակով:
2. Երկու ժամանակաշրջանում էլ պետության ամբողջականությանը սպառնացող ազգայնական շարժումների ազդեցությունը մեղմելու համար նոր քաղաքական ինքնություն ու մշակույթ ստեղծելու ջանքեր գործադրվեցին:
3. Այս նոր քաղաքական մշակույթի ստեղծման մեջ արևմտյան ու ավանդական արժեքների միջև ներդաշնակություն ապահովել փորձող էկլեկտիկ մոտեցում ցուցաբերվեց: ...
4. Եթե Թանզիմաթի ժամանակաշրջանում փորձ արվեց մտնել 1815թ. Վիենայի կոնգրեսով ստեղծված եվրոպական հա-

մակարգ, ապա հետսառըպատերազմյան փուլում [Թուրքիան] փորձեց ինտեգրվել Եվրամիության համակարգին:

5. [Թուրքիան] ռազմավարական գործընկերության մեջ էր Վիենայի կոնգրեսի ուժային բալանսի կարևոր տարր հանդիսացող Անգլիայի, իսկ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում միակ գերուժ հանդիսացող ԱՄՆ-ի հետ:

Այս առումով Օզալը մի կողմից փորձում էր հավասարակշռեցնել հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում աճ ապրող միկրո-ազգայնական մթնոլորտի ազդեցությունը, մյուս կողմից էլ՝ ինտեգրվել նոր եվրոպական համակարգին ու համապատասխանեցնել իր վարքը աճ ապրող ամերիկյան ուժին: ...

... Օզալի էկլեկտիզմն ու պրագմատիզմը ազդեց Թուրքիայում կարծրատիպերը հաղթահարել ցանկացող մտավորականների ու քաղաքական շարժումների վրա: Այս պատճառով է, որ 1999թ. ապրիլի 18-ի խորհրդարանական ընտրություններում իրարից շատ տարբերվող ծրագրեր ունեցող քաղաքական շատ կուսակցություններ մրցապայքարի մեջ մտան Օզալի ժառանգության հետևորդը լինելու իրավունքի համար:

Մոտ ցամաքային ավազան

Բալկաններ-Մերձավոր Արևելք-Կովկաս
Թուրքիայի մոտ ցամաքային ավազանը ներառում է երեք տարածաշրջան, որոնք ցամաքային սահման ունեն. Բալկաններ, Մերձավոր Արևելք ու Կովկաս: ...

...Թուրքիան թե՛ պատմականորեն, թե՛ աշխարհագրորեն անքակտելի կապված է այդ ցամաքային ավազանի հետ: Թե՛ Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա ուղղակիորեն

ագող հիմնական խնդիրները, թե՛ այդ քաղաքականությունը
ձևավորող հիմնական տարրերը այդ մոտ ցամաքային ավազա-
նում տեղ գտած զարգացումների բնական հետևանքներն են:
Թուրքիան, ինչպես դա տեղի է ունեցել նախկինում, չպետք է
Արևմտյան Եվրոպայի հետ ինտեգրվելու ու այլ արտատարա-
ծաշրջանային դաշինքների հաշվին օտարվի այս մոտ ավազա-
նից: Պետք չէ մոռանալ, որ Թուրքիայի միջազգային դիրքի քաղա-
քական, տնտեսական ու մշակութային կշիռը շարունակելու է
մնալ այս ավազանում իր ունեցած ազդեցիկության ու արդյունք-
ների հետ: Նույնիսկ Թուրքիայի ներքին միասնականությունը
ուղղակիորեն կապված է այս ավազանում առկա գործոններին:
Բալկաններում, Կովկասում ու Մերձավոր Արևելքում զարգա-
ցումների վրա ազդեցություն չունեցող մի անատոլիական երկիր
ոչ կարող է այս զգայուն աշխարհաքաղաքական տարածքում
տարածքային ամբողջականությունը պահպանել, ոչ էլ բացվել
դեպի աշխարհ: ...

Դեպի Ասիա բացվող դուռ. Կովկաս

Պատմության ողջ ընթացքում Եվրասիայի տարբեր շրջաննե-
րից տարածվող ցեղային քոչերի ամենակարևոր խաչմերուկ
հանդիսացող և այդ պատճառով էլ համեմատաբար փոքր տա-
րածքում վերին աստիճանի խառը ազգային ու լեզվական կա-
ռույց ունեցող Կովկասը Անատոլիա-Միջերկրական ու ստեպ-
ներ-Սև ծով քաղաքական ուժերի միջև ամենակարևոր մրցակ-
ցության ասպարեզներից է եղել: ...

...Շեյխ Շամիլի դիմադրությունը կոտրելուց հետո հարա-
վային Կովկաս իջած ռուսները հասան մինչև Էրզրումի դաշտ՝

վտանգելով Անատոլիան: Թեև Քյազըմ Քարաբեքիրի արևելյան
գործողությամբ Հարավային Կովկասում իրավիճակը մասնակի-
որեն հավասարակշռվեց, Կովկասը մինչև Սառը պատերազմի
ավարտը ռուսական-խորհրդային ծավալապաշտական ռազմա-
վարության հիմնական առանցքներից մեկն էր:

Կարսի, Արդահանի ու նեղուցների վերաբերյալ ռուսների
պահանջները, որոնք Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու դր-
դող կարևոր գործոններից էին, այդ պատմական մրցակցության
բնական շարունակությունն էին: Այս պահանջների արդյունքում
Թուրքիան մտավ ՆԱՏՕ և Սառը պատերազմում տեղ գրավեց
Արևմտյան բլոկում, ինչով խորհրդաթուրքական սահմանը դար-
ձավ սահման ՆԱՏՕ-յի ու Վարշավյան պակտի միջև, իսկ Կով-
կասն ու Արևելյան Անատոլիան բաժանվեցին արհեստական վա-
րագույրով: Վերջին հիսուն տարվա ընթացքում տարածաշրջա-
նում առկա կայունությունն այս արհեստական վարագույրի կող-
մից ստեղծված ոչ ճկուն ռազմավարական հավասարակշռության
արդյունք էր:

Երբ խորհրդաթուրքական սահմանի վրա գտնվող Սարսիի
ցյուղի կենտրոնում գտնվող մզկիթը նույնիսկ երկու մասի կիսած
այս արհեստական ռազմավարական սահմանը վերացավ Սառը
պատերազմից հետո, դա ուղղակիորեն ազդեց թե՛ Կովկասի ներ-
քին բալանսի, թե՛ Կովկասին հանդեպ Թուրքիայի վերաբերմուն-
քի վրա:

...Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում Կովկասի
փոփոխվող միջազգային դիրքը կարելի է քննել երեք տարբեր
տեսանկյունից:

Ա. Միջազգային գլոբալ հավասարակշռությունում փոփոխությունն ու դրա ազդեցությունը տարածաշրջանի վրա:

Բ. Տարածաշրջանի գործերին ուղղակիորեն միջամտող Ռուսաստանը, Թուրքիան ու Իրանը, ինչպես նաև Կասպից ծովի հարևանության հետևանքով տարածաշրջանի բալանսում կարևոր դիրք զբաղեցնող Ուզբեկստանը, Ղազախստանն ու Թուրքմենստանը ներառող նոր հավասարման ստեղծում:

Գ. Ներտարածաշրջանային հավասարակշռություններ ու հակամարտություններ, որոնք ներառում են նաև տարածաշրջանի ազգային ու կրոնական տարբերությունները:

Առաջին հավասարման տարրերը հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում լուրջ փոփոխման են ենթարկվել: Կովկասում, որը երկրներ միջազգային հարաբերությունների հավասարակշռության ամենաակնառու տարածաշրջաններից էր, Մառը պատերազմից հետո ի հայտ եկավ մի իրավիճակ, ուր գլոբալ ուժերը, ինչպես ԱՄՆ-ն, Անգլիան, Գերմանիան, Ճապոնիան և այլն, ուղղակիորեն ներգրավվեցին: Վերջիններս, ինչպես նաև գործի մեջ մտած անդրազգային ընկերությունները, ֆիքսվել են բնական պաշարների տեղափոխման խնդրի վրա, որը ուղղորդում է գլոբալ քաղաքատնտեսական մրցակցությունը: Հետևաբար, այս հավասարման որոշիչ հատկանիշն, ըստ էության, աշխարհատնտեսական բնույթ ունի:

Երկրորդ հավասարման մեջ առկա մրցակցությունը իր մեջ ներառում է թե՛ գլոբալ բնույթի մրցակցության արձագանքները, թե՛ տարածաշրջանում ուղղակի ներգրավվածություն ունեցող մեծ ու միջին չափսի ռեզիդենտ ուժերի աշխարհաքաղաքական ու դիվանագիտական մանևրները: Ռուսաստան-Հայաստան, Թուր-

քիա-Ադրբեջան մերձեցումները մղում են Իրանիին ու Վրաստանին էլ հետևելու տարբեր քաղաքական գծի: Թուրքիա-Վրաստան ու Իրան-Հայաստան հարաբերություններում նկատվող զարգացումները այս տեսանկյունից հետաքրքիր տարածաշրջանային հավասարումներ են ստեղծում և դինամիկ դիվանագիտական գործընթաց են առաջացնում: Այս երկրների՝ Կասպից ու Սև ծովերի հետ կապված քաղաքականությունները բերում են կովկասյան հավասարման մեջ այնպիսի արդյունքների, որոնք տարածվում են նաև Կենտրոնական Ասիայի, Մերձավոր Արևելքի ու Բալկանների վրա՝ ստեղծելով միջտարածաշրջանային փոխազդեցության դաշտ: Օրինակ, Մերձավոր Արևելքում թուրք-իրանական հարաբերությունների ընթացքն ու Սև ծովում և Բալկաններում ռուս-թուրքական հարաբերությունների ընթացքը ուղղակիորեն ազդվում են այդ փոխազդեցությունից:

Երրորդ հավասարման մեջ տեղ գտած ներտարածաշրջանային հակասությունները դառնում են հակամարտությունների կետեր ու ստեղծում են ռիսկային գոտիներ, որոնք այնքան մեծ են, որ ներքաշում են երկրորդ հավասարման դերակատարներին: Օրինակ, Հարավային Կովկասի հայ-ադրբեջանական հակամարտությունը Ղարաբաղի շուրջ ու Հյուսիսային Կովկասի ռուս-չեչենական հակամարտությունն ուղղակիորեն ազդում են ռուս-թուրքական հարաբերությունների վրա: Նմանապես, 1993թ. Աբխազիայում վրաց-աբխազական հակամարտությունն ուղղակիորեն ազդեց թուրք-վրացական, ռուս-վրացական հարաբերությունների վրա: ...

...Մասնավորապես, 1993թ. ապրիլ ամսին ուժգնացած հայկական հարձակման արդյունքում ապրիլի 3-ին հայերը գրավե-

ցին Քելրաջարի շրջանը՝ իրենց վերահսկողության տակ վերցնելով Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միջև եղած շրջանը: Ավելի ուշ հայերը ռազմական գործողությունները ընդլայնեցին դեպի հյուսիս ու հարավ և առաջընթաց գրանցեցին դեպի վրաց-ադրբեջանական ու իրան-ադրբեջանական սահմաններ: Այս մարտերի արդյունքում Ադրբեջանի մոտավորապես մեկ հինգերորդի՝ հայերի գրավման տակ լինելու փաստը Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի կրած ամենամեծ ռազմավարական կորուստն էր: Հայկական միավորումներից պարտվելն էլ Ադրբեջանի ներսում լայնածավալ ներքին խժոժությունների պատճառ դարձավ: Ըստ որոշ պնդումների՝ ռուսական միավորումների աջակցությունը վայելող գնդապետ Մուրեթ Հուսեյնովի ղեկավարությամբ 1993թ. հունիսին Գյանջայից Բաքու տարածված ապստամբության արդյունքում Ադրբեջանի ընտրված նախագահ Էլչիբեյը հունիսի 20-ին ստիպված եղավ լքել մայրաքաղաքը: Քաղաքացիական պատերազմը կանխելու նպատակով խորհրդարանի նախագահ նշանակված Պոլիտբյուրոյի նախկին անդամ Հեյդար Ալիևը, ժամանակի ընթացքում երկրի վրա վերահսկողությունը ամրապնդելով, դարձավ նոր առաջնորդը: Այս զարգացումից հետո Ադրբեջանի խորհրդարանը որոշում կայացրեց վերադառնալ ԱՊՀ շարքերը ու նույնօր ամսին Ռուսաստանն Ադրբեջանի հետ Բաքվի նավթերի վերաբերյալ բանակցություններին արագացում հաղորդեց:

Թեև Ալիևը, հաջորդող տարիներին հավասարակշռեցնող միջոցներ հանձն առնելով, Թուրքիային խաղի մեջ պահող քաղաքականություններ զարգացրեց, սակայն տարածաշրջանում ռուս-հայկական մերձեցումն ամեն պահ կարող է նոր ռազմավարական

րական զգայուն իրավիճակներ առաջ բերել: Տարածաշրջանում Իրանի քաղաքականությունները թուրք-ադրբեջանական, հայ-ռուսական հարաբերություններում որոշիչ ու հավասարակշռեցնող տարր են: Սա էլ մեծացնում է կովկասյան ու մերձավորարևելյան քաղաքականությունների միջև կապը...

...Ինչպես երևում է, հայ-ադրբեջանական հակամարտությունը սովորական սահմանային վեճից ավելի մեծ հետևանքների է բերել և Ադրբեջանի ամբողջականության ու կայունության վրա ուղղակիորեն ազդում է: Ադրբեջանը Թուրքիայի համար թե՛ ընդհանրապես Կովկասում, թե՛ մասնավորապես Հարավային Կովկասում ամենակարևոր ռազմավարական դաշնակիցն է: Եթե կարիք լինի համեմատական անցկացնել տարածաշրջանային կապերի տեսանկյունից, ապա քանի դեռ Կովկասում Ադրբեջանն, իսկ Բալկաններում Ալբանիան կայունության չհասնեն, երկու տարածաշրջաններում էլ Թուրքիայի ազդեցության աճը, ինչպես նաև Ադրիատիկ ու Կասպից ծովերում քաղաքականություններ զարգացնելը հնարավոր չի լինի:

Թուրքիան ... հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում թե՛ հոգեբանական, թե՛ դիվանագիտական տեսանկյունից անպատրաստ է մտել Կովկաս: ... Կովկասյան քաղաքականությունը քննարկվել է միայն հայ-ադրբեջանական պատերազմի սահմաններում: Հայ-ադրբեջանական պատերազմը ընդհանուր առմամբ կովկասյան խնդիրների մի կարևոր մասն է և միայն տարածաշրջանային ռազմավարության հիմնական շրջանակներում կարող է առողջ հիմքի վրա դրվել:

Այս պատճառով է, որ նախ և առաջ պետք է բազմակողմանի կովկասյան քաղաքականություն որոշել ու այդ քաղաքականու-

յունը կապել հարևան տարածաշրջանների հետ: Պետք չէ մոռանալ, որ Կովկասը մեկ ամբողջականություն է կազմում աշխարհաքաղաքական տեսանկյունից՝ որպես Արևելյան Անատոլիայի ու Պարսից ծոց-Միջերկրական ծովի արևելյան ափի գիծն ընդգրկող Հյուսիսային Մերձավոր Արևելք, և աշխարհատնտեսական տեսանկյունից՝ ներառելով ադրբեջանական նավթը, Արևելյան Անատոլիայի ջրային պաշարները ու Հյուսիսային Իրաքի նավթը:

Չի կարելի առանձնացնել այս աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական գծերի վրա տեղի ունեցող զարգացումները: Հետևաբար պետք է զարգացնել այս գծի վրա գտնվող Հյուսիսային Կովկասի հանրապետություններից մինչև Պարսից ծոց ընկնող գոտին ընդգրկող Արևմտյան Ասիայի հանդեպ ընդհանուր քաղաքականություն: Այս արևմտասիական քաղաքականությունն էլ Կենտրոնական Ասիայի հետ Թուրքիայի հարաբերությունների ճիշտ հիմքի վրա զարգանալու համար պարտադիր է: Եթե Թուրքիան չկարողանա այս կապերի միջև հարաբերությունների վրա ազդեցություն ունենալ, ուրեմն ոչ ներքին ու արտաքին անվտանգության չափանիշների միջև հարաբերությունը կկարողանա նշմարել, ոչ էլ տնտեսական ուժի հիմքը հանդիսացող պաշարները կկարողանա արդյունավետ կերպով օգտագործել:

Որքան Կովկասը կորցնում է Մառը պատերազմի ժամանակ գլոբալ բևեռացումից բխող արհեստական բաժանարար վարագույրը, այդքան մեծանում է նրա ռազմավարական կապը Արևելյան Անատոլիայի ու Հյուսիսային Իրաքի միջև, ինչպես նաև ակտիվանում է այս տարածաշրջանների համար ռազմավարական հակամարտության հնարավորությունը: Նավթի հարուստ դաշ-

տեր ունեցող Բաքուն և Հյուսիսային Իրաք-Պարսից ծոց նավթային շրջանները, ինչպես նաև այս երկու տարածքի միջև ընկած ու Մերձավոր Արևելքի ջրային երակներից կազմված Հարավարևելյան Անատոլիայի նախագծի տնտեսական շրջանը ունեն տնտեսական ու քաղաքական ռազմավարությունների փոխազդեցություն, ինչը անխուսափելի է: Մոտ ապագայում հնարավոր չի լինի այս տարածաշրջանները որևէ կերպ պատկերացնել իրարից անկախ: Աշխարհատնտեսական տեսանկյունից Իրաքի նավթամուղի, Բաքվի նավթամուղի ու Հարավարևելյան Անատոլիայի նախագծի ապագա հաջողությունները փոխկախված են միմյանցից:...

Մոտ ցամաքային ավազանում ճկուն սահմաններն ու հարևան երկրների հետ հարաբերությունները

...Օսմանյան պետության յոթ հարյուր տարվա պատմության ժառանգորդը դիտարկվող Թուրքիան մոտ ցամաքային ավազանում բնակվող մարդկանց համար դեռևս երևում է որպես քաղաքական կենտրոն: Մոտ ցամաքային ավազանի օսմանյան ժառանգորդները Թուրքիային տեսնում են կամ որպես նրանց պաշտպանող մի ուժ, կամ էլ հնարավոր վերացումից փախչելու համար վերջնական մի առյուծ: Սրանք են այն պատմական չափանիշները, որոնք Թուրքիային առաջադրում են տարածաշրջանային նոր առաքելություններ: ...

...Թուրքիան նմանօրինակ զարգացմանը բոլորովին անպատրաստ է: Նախ և առաջ այսօրինակ արտաքին տարրերի հետ արդյունավետ հարաբերություններ ստեղծելն ապահովող քաղաքական կառույցների ու դրանք լցնող քաղաքական մշա-

կույթի պակասը ծնեց լուրջ դատարկություն: Այլ կերպ ասած, մի կողմից Թուրքիայի Հանրապետությունն ստիպված էր իր վրա վերցնել պատասխանատվություններն Օսմանյան կայսրության, որի վերջման մասին հենց ինքն էլ հայտարարել էր, մյուս կողմից էլ՝ այդ պարտավորությունների տակից դուրս գալու համար նվազագույն պայման հանդիսացող քաղաքական մշակույթ ու կառույցներ չուներ:

Տարածաշրջանային առումով դեպի ավելի մեծամասշտաբ արտաքին քաղաքականության հորիզոններ գնալու համար Թուրքիային առաջին հերթին պետք է մոտ ցամաքային ավազանի հետ կապերն ամրապնդող սահմանային հարևանների հետ հարաբերությունները կարգավորել: Անհնար է սահմանները գերազանցող տարածաշրջանային ու գլոբալ քաղաքականություններ զարգացնել, եթե հենց այդ նույն սահմանային հարևանների հետ երկիրը մշտապես ճգնաժամեր ունի: Օրինակ, նույն պահին թե՛ Բուլղարիայի, թե՛ Հունաստանի հետ ճգնաժամեր ունեցող Թուրքիայի համար շատ բարդ է Բալկաններում արդյունավետ քաղաքականություն վարել: Նույն կերպ, թե՛ Վրաստանի, թե՛ Հայաստանի ու թե՛ Իրանի հետ լարված հարաբերություններ ունենալը տարբեր այլընտրանքներ ունեցող կովկասյան քաղաքականության հետևելը կբարդացնի: ...

... Սահմաններից այն կողմ կնքված դաշինքներն արժեքավոր են, քանի դեռ գործածվում են որպես այդ սահմանների վրա ազդող գործոն: ... Քանի դեռ Ադրբեջանի հետ դաշինքը հակազդում է Ռուսաստան, Հայաստան, Իրան դաշինքին, այն կարող է կազմել նավթային քաղաքականության հիմքը: Հենց սրա չիրականացման արդյունքում է, որ ի հեճուկս բոլոր բարեկամական

ճառերի Ադրբեջանը Թուրքիայի ու Ռուսաստանի միջև մշտապես հավասարակշռված քաղաքականություն է վարում, ինչը չի ստացվում փոփոխել: ...

...Հարևան երկրների հետ այս լարվածությունները հաղթահարելու համար պետք է դուրս գալ նրանց վարչակարգերի ու բյուրոկրատների հետ հարաբերությունները բարելավելու գործընթացից և շեշտը դնել հասարակությունների միջև տնտեսական ու մշակութային տարրի ուժեղացման վրա: ...

...Մեր հարևաններից բխող արտաքին քաղաքական ռիսկը նվազեցնելու նպատակով պետք է քայլեր անել փոխկախվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, ինչը որոշակի գործողության դաշտ կապահովի: ...

... Տնտեսական ու մշակութային այս մեխանիզմներով քաղաքական մեխանիզմի ծնած լարվածությունը կթուլացնի ու Թուրքիայի նման տարածաշրջանային ուժերի՝ այլընտրանքային քաղաքականություն վարելու հնարավորությունը կմեծանա: Տրանսպորտի ու հաղորդակցության միջոցների հնարավորությունների ընդլայնում, սահմանային առևտրի ընդարձակում, մշակութային փոխանակման երկկողմանի ծրագրեր, աշխատանքի ու կապիտալի ավելի ազատ շրջանառություն. սրանք են այն գործիքները, որոնց միջոցով էապես կհեշտանա հասնել լուծմանը այն խնդիրների, որոնք բխում են կենտրոնական վերնախավից, հատկապես ավտորիտար վարչակարգերի վերահսկողության տակ գտնվող մեր տարածաշրջանում:...

Արտակ Կառլենի Շաքարյան
պատմ. գիտ. թեկն.

ԱՐԱՐԱՏԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ. ապակողավորելով Թուրքիան

Հեղինակի ստեղծած «Արարատից այն կողմ» բլոգը՝
www.turkaget.wordpress.com

Հրատարակչության տնօրեն՝
Համակարգչային էջադրումը՝


Էմին Ակրտյան
Գրիգոր Հարությունյանի

ISBN 978-99941-1-907-3

Տպագրությունը օֆսեթ: Չափսը՝ 60x84/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 13 տպ. մամ.: Տպաքանակը՝ 500:



«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Հեռապատճեն՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am,
էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am





Արտակ Շաքարյան. պատմական գիտությունների բեկնածու, թուրքագետ:

Թուրքագիտության բակալավրի ու մագիստրոսի աստիճանն ստացել է Երևանի պետական համալսարանից, իսկ թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել «Գիտությունների ազգային ակադեմիայում 2005 թ.: Սովորել է նաև Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի իրավունքի ու դիվանագիտության դպրոցում, Հարվարդի համալսարանի Ջոն Ֆ. Բենեդուկտո կառավարման դպրոցում, ինչպես նաև Ջոհնս Հոփքինսի համալսարանի Միջազգային հարաբերությունների դպրոցում:

Հեղինակ է շուրջ յոթ տասնյակ գիտական ու հրապարակախոսական հոդվածների: Որպես մենագրություն հրատարակել է իր թեկնածուական ատենախոսությունը՝ «Արդյան հարկը Օսմանյան կայսրությունում. դեշիբեն»: Վերջին տարիներին Թուրքիայի արտաքին քաղաքականության հետ զուգահեռ ուսումնասիրում է նաև միջազգային հարաբերությունների տեսություններն ու արտաքին քաղաքականության կանխատեսման ու վերլուծության մեջ խաղերի տեսության կիրառելիությունը:

Երիտասարդ առաջնորդների դպրոցի աշխատանքային թիմի ղեկավարն է: «Արարատից այն կողմ» բլոգի հեղինակն է:

www.turkaget.wordpress.com



Սույն ձեռնարկը նախատեսված է Թուրքիան լուսաբանող լրագրողների, արևելագետների, պատմաբանների, միջազգային հարաբերություններ ու պատմություն ուսումնասիրող ուսանողների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակի համար: Աշխատությունում ներկայացվում են Թուրքիայի արտաքին քաղաքականության սկզբունքները, բերվում են դրանք մենաբանող օրինակներ: Հատուկ ուշադրություն է դարձվում հայ-թուրքական հարաբերությունների վրա: Գրքի հավելվածում թարգմանաբար ներկայացվում են Հայաստանին վերաբերող հատվածներ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Հավուսթոլուի «Ռազմավարական խորություն» մենագրությունից:

Սույն ձեռնարկի հրատարակությունը ֆինանսավորվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան Ժողովրդավարական հանձնաժողովի դրամաշնորհի օգնությամբ: Ձեռնարկում արտահայտված կարծիքները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ կառավարության տեսակետներին:



ԵՐԵՎԱՆ • 2011

www.zangak.am www.book.am